

**ՏՀԶԿ-ի՝ Արևելյան Եվրոպայի եւ Կենտրոնական  
Ասիայի հակակոռուպցիոն ցանց**

**Արևելյան Եվրոպայում եւ Կենտրոնական  
Ասիայում իրավաբանական անձանց  
պատասխանատվությունը կոռուպցիայի համար**



**ՏՀԶԿ-ի՝ Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի  
հակակոռուպցիոն ցանց**

**Արեւելյան Եվրոպայում եւ Կենտրոնական Ասիայում իրավաբանական  
անձանց պատասխանատվությունը կոռուպցիայի համար**



## **ՏՀՉԿ-ի մասին**

ՏՀՉԿ-ն ֆորում է, որտեղ կառավարությունները համեմատում են փոխանակում են քաղաքականության ոլորտում փորձը, առաջացող մարտահրավերների լույսի ներքո բացահայտում են արդյունավետ գործելակերպերը, ինչպես նաև ավելի բարեկեցիկ կյանք ապահովելու համար ավելի լավ քաղաքականություններ մշակելու նպատակով նպաստում են որոշումների կայացմանը եւ առաջարկությունների ներկայացմանը: ՏՀՉԿ-ի առաքելությունն է նպաստել այնպիսի քաղաքականություններին, որոնք կբարելավեն աշխարհում մարդկանց սոցիալ-տնտեսական բարեկեցությունը: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելել [www.oecd.org](http://www.oecd.org) կայքը:

## **Արելեյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի մասին**

1998 թվականին ստեղծված Արելեյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի (ՀԿՑ) հիմնական նպատակն է անդամ պետություններին օժանդակել կոռուպցիայի կանխարգելման եւ դրա դեմ պայքարի գործում: Այն ապահովում է տարածաշրջանային ֆորում՝ հակակոռուպցիոն գործողությունների խթանման, տեղեկությունների փոխանակման, ինչպես նաև տարածաշրջանային հանդիպումների եւ սեմինարների, փորձի փոխանակման ծրագրերի եւ թեմատիկ նախագծերի միջոցով լավագույն գործելակերպերի մշակման եւ դոնորների համակարգման համար: ՀԿՑ-ն նաև ծառայում է որպես Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի կենտրոն: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելել [www.oecd.org/corruption/acn/](http://www.oecd.org/corruption/acn/) կայքը:

## **Արելեյան Եվրոպայում եւ Կենտրոնական Ասիայում կոռուպցիայի քրեականացման եւ իրավունքի կիրառման վերաբերյալ թեմատիկ ուսումնասիրությունների մասին**

ՀԿՑ-ի 2013-2015 թվականների աշխատանքային ծրագիրը ներառում է կոռուպցիայի քրեականացման եւ իրավունքի արդյունավետ կիրառման վերաբերյալ միջերկրային թեմատիկ ուսումնասիրություններ (գնահատում): Թեմատիկ ուսումնասիրության համար ընտրված առաջին թեման կոռուպցիայի համար իրավաբանական անձանց պատասխանատվությունն է: Մյուս թեմատիկ ուսումնասիրությունները վերաբերում են օտարերկրյա պաշտոնատար անձանց կաշառելուն եւ կոռուպցիայի գործերով միջազգային համագործակցությանը: Ուսումնասիրության նպատակներն են՝ (1) վերլուծել համապատասխան ոլորտում առկա իրավիճակը՝ ընդհանուր խնդիրները եւ լավագույն գործելակերպերը վերհանելու (մասնավորապես՝ ընտրված երկրներից դեպքերի ուսումնասիրությունների միջոցով) եւ տարածաշրջանային մակարդակով

առաջարկություններ մշակելու նպատակով, ինչպես նաև (2) իրավապահ մարմինների եւ դատական իշխանության համար կարողությունների զարգացման եւ վերապատրաստման կարիքները վերհանելու նպատակով:

Սույն գեկույցը հրապարակվել է ՏՀԶԿ-ի Գլխավոր քարտուղարի պատասխանատվությամբ: Չեկույցում ներկայացվող կարծիքները եւ կիրառվող փաստարկները կարող են չհամընկնել ՏՀԶԿ անդամ պետությունների պաշտոնական տեսակետներին:

Սույն փաստաթուղթը եւ դրանում ներառված ցանկացած աղյուսակ չեն սահմանափակում որեւէ տարածաշրջանի կարգավիճակը կամ դրա ինքնիշխանությունը, միջազգային եւ պետական սահմանները կամ որեւէ տարածաշրջանի, քաղաքի կամ տարածքի անվանումը:

© ՏՀԶԿ 2015թ.

## Նախաբան

Սույն միջերկրային զեկույցում վերլուծվում է կոռուպցիայի համար իրավաբանական անձանց պատասխանատվության վերաբերյալ օրենսդրությունը եւ դրա կիրառման ապահովումը Արեւելյան Եվրոպայում եւ Կենտրոնական Ասիայում: Թեեւ զեկույցում շեշտը դրվում է Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցում (ՀԿՑ) մասնակցող քսանհինգ երկրների վրա, այն ներառում է նաեւ օրինակներ ՏՀԶԿ երկրներից: Չեկույցի հիմքում ընկած են ՀԿՑ կառավարությունների կողմից հարցաթերթիկների միջոցով տրամադրված տվյալները: Այն նաեւ արտացոլում է 2014 թվականին ՀԿՑ Իրավակիրառ ցանցի հանդիպումների ընթացքում ներկայացված արդյունավետ գործելակերպերի վերաբերյալ քննարկումները եւ դրանց օրինակները: Իրականացվել է լրացուցիչ հետազոտություն՝ զեկույցում ՏՀԶԿ երկրների համար տվյալներ ներառելու նպատակով: Չեկույցի հիմնական մասը պատրաստվել է 2014 թվականին:

Սույն զեկույցի նպատակն է ուսումնասիրել կոռուպցիայի համար իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտը ներդնելու եւ այն կիրառելու հարցում միտումները, ինչպես նաեւ ընդգծել այն ազգային գործելակերպերը, որոնք կարող են արդյունավետ գործելակերպ դառնալ: Չեկույցն իրավական բարեփոխումների եւ գնահատումների համար արժեքավոր ելակետ է այս տարածաշրջանում, ինչպես նաեւ այլ աշխարհամասերում:

Չեկույցը պատրաստվել է որպես ՏՀԶԿ-ի՝ Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի 2013-2015 թվականների աշխատանքային ծրագրի մաս: Այն ծրագրի շրջանակներում իրականացված միջերկրային երեք ուսումնասիրություններից մեկն է. հանրային հատվածում կոռուպցիայի կանխարգելումը, իրավակիրառ պրակտիկան ու կոռուպցիայի քրեականացումը, եւ գործարար ոլորտում բարեխղճությունը:



## Բովանդակություն

Նախաբան .....	5
---------------	---

<b>Հապավումներ.....</b>	<b>9</b>
<b>Թեմատիկ ուսումնասիրության մասին.....</b>	<b>10</b>
<b>Ներածություն .....</b>	<b>13</b>
<b>1. Քրեական պատասխանատվությունն ընդդեմ վարչականի .....</b>	<b>15</b>
1.1. Եզրաբանությունն եւ պատմական ակնարկ.....	15
1.2. ՀԿՑ երկրների կարգավիճակը.....	17
1.3. Արդյունավետության գնահատում. ընթացակարգային հայեցակետեր.....	19
1.4. Արդյունավետության գնահատում - գսպող հայեցակետեր .....	24
Եզրակացություններ .....	24
<b>2. Կորպորատիվ պատասխանատվության մոդելները .....</b>	<b>25</b>
2.1. Պատմական ակնարկ.....	25
2.2. Պատասխանատվության մոդելները ՀԿՑ երկրներում.....	30
2.3. Անձինք, որոնց պատճառով կարող է առաջանալ կորպորատիվ պատասխանատվությունը.....	31
2.3.1. Պատասխանատու անձանց գործողությունների համար պատասխանատվությունը.....	31
2.3.2. Վերահսկողություն չիրականացնելու համար պատասխանատվությունը.....	36
2.3.3. Փոխկապակցված անձի գործողության համար պատասխանատվությունը.....	37
2.3.4. Պատասխանատվությունը՝ կորպորատիվ մեղքի հասկացության միջոցով.....	38
2.4. Իրավաբանական անձի եւ գործակալի ոչ իրավաչափ արարքի միջեւ կապը .....	40
2.5. Տարանջատված պատասխանատվություն .....	43
2.5.1. Տարանջատումը եւ իրավախախտում կատարած ֆիզիկական անձը..	43
2.5.2 Ընթացակարգային տարանջատումը .....	46
<b>3. Կորպորատիվ պատասխանատվության գործողության ոլորտը.....</b>	<b>49</b>
3.1. Անձինք, որոնց վրա տարածվում է կորպորատիվ պատասխանատվությունը.....	49
3.2. Իրավախախտումները, որոնց վրա տարածվում է կորպորատիվ պատասխանատվությունը.....	53
<b>4. Կորպորատիվ պատասխանատվությունը գործնականում .....</b>	<b>54</b>
4.1. Ընդհանուր գործելակերպը.....	54

4.2. Կաշառակերության գործով հետապնդումը իրականացնելը.....	56
<b>5. Պատժամիջոցների կիրառումը.....</b>	<b>57</b>
5.1. Պատժամիջոցները .....	58
5.1.1. Տուգանքը.....	58
5.1.2. Բռնագանձումը.....	66
5.1.3. Կազմալուծումը.....	70
5.1.4. Կորպորատիվ իրավունքների սահմանափակումը.....	71
5.1.5. Վճռի հրապարակումը.....	75
5.1.6. Քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված պատժամիջոցները .....	76
5.2. Պատիժ նշանակելու սկզբունքները.....	76
5.2.1. Պատիժ սահմանելու պայմանները.....	77
5.2.2. Դատավճռի կատարման կասեցում.....	79
5.2.3. Պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հիմքերը .....	80
5.3. Դատախազական հայեցողությունը.....	82
5.3.1. Դատախազական հայեցողության առկայությունը ՀԿՑ-ի երկրներում.....	83
5.3.2. Առավելություններն ու ռիսկերը.....	85
<b>Ծանոթագրություններ .....</b>	<b>86</b>
<b>Առաջարկություններ քաղաքականության վերաբերյալ.....</b>	<b>104</b>
<b>Գրականության ցանկ .....</b>	<b>109</b>
<b>Հավելված 1. Միջազգային իրավական փաստաթղթերում կորպորատիվ պատասխանատվության վերաբերյալ դրույթները .....</b>	<b>116</b>
<b>Հավելված 2. ՀԿՑ եւ ՏՁՀԿ երկրներում կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց (ԻԱ) պատասխանատվությունը .....</b>	<b>120</b>

## **Աղյուսակներ**

<b>Աղյուսակ 1. ՀԿՑ երկրներում կորպորատիվ պատասխանատվության համակարգերը</b> .....	<b>19</b>
<b>Աղյուսակ 2. Կորպորատիվ պատասխանատվության մոդելները ՀԿՑ երկրներում</b> .....	<b>32</b>
<b>Աղյուսակ 3. Իրավաբանական անձինք, որոնց նկատմամբ հետապնդում է իրականացվել 2010-ից 2013 թվականների միջև ընկած ժամանակահատվածում</b> .....	<b>58</b>
<b>Աղյուսակ 4. Իրավաբանական անձինք, որոնց նկատմամբ կաշառակերության գործով հետապնդում է իրականացվել 2010-ից 2013 թվականների միջև ընկած ժամանակահատվածում</b> .....	<b>60</b>
<b>Աղյուսակ 5. Ֆիզիկական անձինք, որոնց նկատմամբ կաշառակերության գործով հետապնդում է իրականացվել 2010-ից 2013 թվականների միջև ընկած ժամանակահատվածում</b> .....	<b>60</b>
<b>Աղյուսակ 6. ՀԿՑ երկրներում կոռուպցիոն իրավախախտումների համար սահմանված կորպորատիվ տուգանքները</b> .....	<b>63</b>
<b>Աղյուսակ 7. Հանցանքի համար իրավաբանական անձի նկատմամբ երբեւէ կիրառված առավելագույն տուգանքները</b> .....	<b>66</b>
<b>Աղյուսակ 8. Կաշառակերության համար իրավաբանական անձի նկատմամբ երբեւէ կիրառված առավելագույն տուգանքները</b> .....	<b>66</b>

## **Գծապատկերներ**

<b>Գծապատկեր 1. ԱՄ Մերկո [AS Merko] ընկերությունների բորսայական գների փոփոխությունները Նասդաք օւմէքս Բալթիք-ում [Nasdaq OMX Baltic]</b> .....	<b>68</b>
---	-----------

## Հապավումներ

ՀԿՑ	ՏՀԶԿ-ի՝ Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանց
ՖԱԹՖ	ՏՀԶԿ-ի՝ Փողերի լվացման դեմ պայքարի ֆինանսական գործողությունների հանձնախումբ
ԳԲԵԿՈ	Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խումբ
ՍԳԾ	Մտամբույյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր
ՎԻՊՕ	Բուլղարիայի «Վարչական իրավախախտումների եւ պատժամիջոցների մասին» օրենք
ՓԻՕ	Փոխադարձ իրավական օգնություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպություն
ԿՄԱԿԿ	Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա
ԿԱԽ	ՏՀԶԿ-ի՝ Միջազգային գործարար գործարքներում կաշառակերության հարցերով աշխատանքային խումբ

## **Թեմատիկ ուսումնասիրության մասին**

Քրեական հետապնդումը կոռուպցիան հաղթահարելու առանցքային գործիք է: Մինչ կոռուպցիայի կանխարգելումը դարձել է կարելու խնդիր միջազգային եւ ազգային քաղաքականության մշակման գործընթացում, քրեական հետապնդումը մնում է կոռուպցիայի գսպման էական միջոցը: Կոռուպցիոն իրավախախտումները բացահայտելու, քննելու, հետապնդելու եւ դատական կարգով լուծելու համար քրեական իրավունքի արդյունավետ գործիքների առկայությունն ինքնին ծառայում է որպես ծառայողական դիրքի չարաշահման դեպքերի կանխարգելման հզոր միջոց: Սակայն, իրավախախտների նկատմամբ քրեական պատժամիջոցների կիրառման ապահովումը կոռուպցիայի դեմ պայքարելու գործում վճռական տրամադրված ցանկացած երկրի համար հակակոռուպցիոն քաղաքականության կարելու տարր է:

Քրեական իրավունքի՝ կոռուպցիային արձագանքելու հետ կապված բազմաթիվ հարցեր մանրամասն ուսումնասիրվել են ազգային եւ միջազգային մակարդակներում: Այնուամենայնիվ, կան որոշակի ոլորտներ, որոնք խնդրահարույց են քաղաքականություն մշակողների, իրավակիրառ գործունեությանը զբաղվող մասնագետների, դատավորների, գիտաշխատողների եւ այլ շահառուների համար: Միանալով բազմաթիվ միջազգային հակակոռուպցիոն փաստաթղթերի (օրինակ՝ ԿՄԱԿ, Եվրոպայի խորհրդի կոնվենցիաներ, ՏՀԶԿ հակակոռուպցիոն կոնվենցիա)՝ Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի երկրները պարտավորվել են իրենց օրենսդրության մեջ եւ պրակտիկայում նախատեսել մի շարք կոռուպցիոն հանցագործություններն ու կոռուպցիոն դրսեւորումները քննելու եւ հետապնդելու համար անհրաժեշտ իրավական դաշտեր:

Տարածաշրջանում երկրներն իրականացրել են կոռուպցիան քրեականացնելու հետ կապված լայնածավալ բարեփոխումներ, սակայն պահպանողական իրավական ավանդույթները եւ գործնական դժվարությունները հաճախ խոչընդոտում են դրանց ամբողջական կատարումը եւ արդյունավետ կիրառումը: Բազմաթիվ դեպքերում, օրենքով նախատեսված իրավախախտումներին ընթացք չի տրվում տարբեր պատճառներով, ինչպիսիք են՝ քաղաքական կամքի բացակայությունը, ոչ բավարար ուղղորդումը եւ վերապատրաստումը, ինչպես նաեւ սակավ ռեսուրսները: Ի լրումն դրա, կոռուպցիոն սխեմաները դառնում են ավելի բարդ եւ հաճախ ներառում են հանցագործությունների կատարում՝ մի քանի պետություններում: Սա քրեական օրենսդրության գործնական կիրառությունն իրավապահ եւ դատախազության մարմինների համար դարձնում է առավել խնդրահարույց:

2012 թվականի դեկտեմբերի 10-ին նախարարները, կոռուպցիայի դեմ պայքարում ներգրավված մարմինների ղեկավարներն ու Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի (ՀԿՑ) անդամ երկրներից այլ բարձրաստիճան պաշտոնատար անձինք բարձր մակարդակի հանդիպման ժամանակ ընդունել են «Արեւելյան Եվրոպայում եւ Կենտրոնական Ասիայում կոռուպցիայի դեմ պայքարելու համար քաղաքական կամքի ամրապնդման»

վերաբերյալ հայտարարություն: Հայտարարության մեջ, ի թիվս այլ հանձնառությունների, նրանք պարտավորվել են՝

- «հակակոռուպցիոն օրենսդրությունն ամբողջությամբ համապատասխանեցնել միջազգային ստանդարտներին՝ [իրենց] իրավակիրառ համակարգերը կոռուպցիոն հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարի համար անհրաժեշտ ժամանակակից օրենսդրությամբ վերազինելու նպատակով».

- «գարգացնել իրավապահ եւ քրեական արդարադատության մարմինների կարողությունները՝ կոռուպցիան հայտնաբերելու, քննելու եւ հետապնդելու ոլորտում՝ կիրառելով արդի քննչական միջոցներ՝ ներառյալ ֆինանսական քննությունը [...]».

- «ամրապնդել հակակոռուպցիոն օրենսդրությունը եւ ապահովել, որ կոռուպցիայի վարքագիծը պատժվի արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ պատժամիջոցներով՝ անկախ այդ հանցագործությունները կատարած անձանց քաղաքական, տնտեսական կամ սոցիալական դիրքից».

եւ  
- «ամրապնդել դատական իշխանության բարեխղճությունը եւ ուժեղացնել դատարանների կարողությունները՝ կոռուպցիոն հանցագործություններն առանց կանխակալության եւ արդի հակակոռուպցիոն օրենսդրության կիրառմամբ քննելու գործում»:<sup>1</sup>

Ի պատասխան քաղաքականության հետ կապված այս որոշումներին՝ ՀԿՑ-ի Ղեկավարող խումբն իր՝ 2012 թվականի դեկտեմբերի 11-ի հանդիպման ժամանակ ընդունեց 2013-2015 թվականների ՀԿՑ նոր աշխատանքային ծրագիրը<sup>2</sup>, որը ներառում էր կոռուպցիայի քրեականացման եւ իրավունքի արդյունավետ կիրառման վերաբերյալ թեմատիկ միջերկրային ուսումնասիրություն (գնահատում):

Թեմատիկ ուսումնասիրության համար ընտրված առաջին թեման կոռուպցիայի համար իրավաբանական անձանց պատասխանատվությունն է: Հետագա թեմատիկ ուսումնասիրությունները կվերաբերեն օտարերկրյա պաշտոնատար անձանց կաշառելուն եւ կոռուպցիայի գործերով միջազգային համագործակցությանը:

Այս ուսումնասիրության նպատակներն են՝ (1) վերլուծել համապատասխան ոլորտում առկա իրավիճակը՝ ընդհանուր խնդիրները եւ լավագույն գործելակերպերը վերհանելու (ընտրված երկրներից դեպքերի ուսումնասիրությունների միջոցով) եւ տարածաշրջանային մակարդակով առաջարկություններ մշակելու նպատակով, ինչպես նաեւ (2) իրավապահ մարմինների եւ դատական իշխանության համար կարողությունների զարգացման եւ վերապատրաստման կարիքները վերհանելու նպատակով:

Այս վերլուծությունը պատրաստվել է պարոն Մարգուս Կուրմի [Margus Kurm] (ՏՀՁԿ խորհրդատու, Էստոնիա) կողմից եւ համակարգվել պարոն Դիմիտրո Կոտլյարի [Dmytro Kotlyar] (ՏՀՁԿ/ՀԿՑ քարտուղարություն) կողմից: Ուսումնասիրությունը վերանայվել է խմբագրվել է պարոն Բրուքս Հիքմանի

[Brooks Hickman] (Կոռուպցիայի դեմ պայքարի բաժին, ՏՀԶԿ) կողմից: Ուսումնասիրության համար հիմք է ծառայել ՀԿՑ կառավարությունների կողմից տրամադրված հանրային նյութերի եւ տեղեկությունների, մասնավորապես՝ թեմատիկ հարցաշարերում տրված պատասխանների եւ դրանցից բխող հարցերին տրված պատասխանների վերլուծությունը: Տեղեկությունները ստուգելու եւ արդյունքները հաստատելու համար նախնական ուսումնասիրությունը 2014 թվականի սեպտեմբերին ներկայացվել է Խորհրդատվական խմբին (կազմված՝ ընտրված կառավարությունների ներկայացուցիչներից՝ կամավոր հիմունքներով) եւ քննարկվել է 2014 թվականի դեկտեմբերի 10-11-ին տեղի ունեցած ՏՀԶԿ/ՀԿՑ Իրավակիրառ ցանցի հանդիպման ժամանակ: Ուսումնասիրությունն ամբողջականացվել է այս քննարկումների հիման վրա՝ հաշվի առնելով 2015 թվականի հունվարից մարտ ամիսների ընթացքում ՀԿՑ երկրներից ստացված դիտողությունների վերջնական փուլը: ՀԿՑ-ի՝ 2015 թվականի մարտին կայացած լիազումար նիստին ուսումնասիրությունը հաստատվել է հրապարակման համար՝ ՏՀԶԿ իրավասության ներքո:

Ուսումնասիրության արդյունքներն ընդգծում են այն ոլորտները, որտեղ անհրաժեշտ է ուժեղացնել հանրային մարմինների եւ կառույցների փորձառությունն ու կարողությունները: Առկա ֆինանսական միջոցներով պայմանավորված՝ կարող են կազմակերպվել փորձի փոխանակման տեխնիկական սեմինարներ՝ իրավակիրառ գործունեությամբ զբաղվող մասնագետների, դատավորների, քաղաքականություն մշակողների համար վերապատրաստում իրականացնելու եւ ընտրված թեմաների վերաբերյալ լավագույն գործելակերպերը խթանելու համար:

## Ներածություն

Ներկայիս տնտեսությունն ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում հիմնականում պայմանավորված է իրավաբանական անձանցով: Պետական գնումների վերաբերյալ պայմանագրեր կնքելու համար մրցակցում, տարբեր լիցենզիաներ ստանալու համար դիմում եւ պետական մարմինների կարգավորումները կամ որոշումները վերահսկողական տարբեր ընթացակարգերում վիճարկում են ոչ թե ինքնագրադ ձեռնարկատերերը, այլ հիմնականում առեւտրային ընկերությունները: Խոշոր կորպորացիաները, որոնք հաճախ իրականացնում են միջազգային գործարքներ, հիմնականում գերիշխում են տրանսպորտի, շինարարության, հեռահաղորդակցության, հանքարդյունաբերության, էներգետիկայի, քիմիական նյութերի արտադրության եւ տնտեսության բազմաթիվ այլ հատվածներում: Ուստի, հատկանշական է, որ կոռուպցիան բարձր մակարդակներում շատ դեպքերում բխում է իրավաբանական անձանց շահերից: Այսպիսի միջավայրում նպատակահարմար չէ, որ քրեական իրավունքը տարածվի միայն ֆիզիկական անձանց իրավախախտումների վրա: Միայն ֆիզիկական անձանց, նույնիսկ իրավաբանական անձի բարձրաստիճան ղեկավարներին պատասխանատվության ենթարկելը բավարար չէ՝ կորպորացիաների կողմից օրենքները խախտելը կանխարգելելու համար: Ավելին, համալիր կառավարման կառույցները եւ որոշումների կայացման կոլեկտիվ գործընթացները կորպորատիվ ընկերություններում դժվարացնում է նման իրավախախտումների հայտնաբերումը եւ հետապնդումը: Իրավախախտումներ կատարողները եւ դրդող անձինք կարող են թաքնվել «կորպորատիվ շղարշի» ներքո՝ պատասխանատվությունից խուսափելու համար:

Կոռուպցիոն իրավախախտումների համար իրավաբանական անձանց պատասխանատվությունը լայն կիրառություն ունեցող միջազգային ստանդարտ է, որը ներառված է կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ այնպիսի միջազգային փաստաթղթերի պարտադիր կատարման ենթակա դրույթներում, ինչպիսիք են՝

- Եվրոպական համայնքների ֆինանսական շահերը պաշտպանելու մասին ԵՄ կոնվենցիայի երկրորդ արձանագրության 3-րդ հոդվածը (1997 թվական)<sup>3</sup>.
- Միջազգային գործարար գործարքներում օտարերկրյա հանրային պաշտոնատար անձանց կաշառելու դեմ պայքարի ՏՀԶԿ կոնվենցիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածները (1997 թվական)<sup>4</sup>.
- Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի 18-րդ հոդվածը (1999 թվական)<sup>5</sup>.
- Կոռուպցիայի դեմ Միավորված ազգերի կոնվենցիայի 26-րդ հոդվածը (2003 թվական)<sup>6</sup>.

*Տե՛ս այս միջազգային փաստաթղթերում կորպորատիվ պատասխանատվության մասին դրույթների վերաբերյալ 1-ին հավելվածը*

# **1. Քրեական պատասխանատվությունն ընդդեմ վարչականի**

## **1.1. Եզրաբանություն եւ պատմական ակնարկ**

### **Եզրույթների պարզաբանում**

«Վարչական պատասխանատվություն» եզրույթը կարող է կիրառվել երկու իմաստով: Այն կարող է նշանակել վարչական իրավախախտումների համար պատասխանատվություն՝ պատժի տեսքով, ինչպես նաեւ կարող է վերաբերել վարչական այն պատժամիջոցներին, որոնք կարող են կիրառվել քրեական պատժամիջոցի հետ միասին (ինչպես օրինակ՝ պետական գնումներից հեռացնելը եւ այլն): Սույն գլխում ուսումնասիրվում է պատժի տեսքով վարչական պատասխանատվության առաջին իմաստը: Ոչ պատժի տեսքով՝ լրացուցիչ պատժատեսակների երկրորդ իմաստի հետ կապված հարցերը կքննարկվեն ստորել՝ 5.1.4 բաժնում:

Պատժի տեսքով վարչական պատասխանատվության հասկացությունն առաջին անգամ ծագել է Գերմանիայի իրավունքում, որը 20-րդ դարի սկզբում սահմանեց հանցագործությունների (*Straftaten*) եւ վարչական իրավախախտումների (*Ordnungswidrigkeiten*) միջեւ հստակ տեսական տարբերությունը: Այս մոտեցման համաձայն՝ հանցագործություններ են համարվում հասարակության հիմնարար արժեքների նկատմամբ ոտնձգությունները, մինչդեռ վարչական իրավախախտումները բարոյական տեսանկյունից ավելի չեզոք են, քանի որ դրանք դիտվում են որպես օրենքներին եւ կառավարության կարգավորումներին հակասող գործողություններ: Մեղավորության (*Shuldprintzip*) սկզբունքը խիստ պահպանվում է միայն հանցագործությունների համար:<sup>7</sup> Տարբերությունը ոչ միայն նյութական է, այլ նաեւ ունի ընթացակարգային հետեւանքներ: Կառավարությունն ունի զգալիորեն ավելի լայն իրավասություններ՝ հանցագործության դեպքերը հայտնաբերելու եւ ապացուցելու, քան վարչական իրավախախտումներին հետամուտ լինելու համար: Այս դոկտրինը հետագայում որդեգրվեց բազմաթիվ եվրոպական եւ այլ երկրների կողմից: Ուստի, քրեական իրավունքի եւ պատժիչ վարչական իրավունքի տարանջատումը վաղուց արդեն իրավական ավանդույթ է ՀԿՑ բազմաթիվ երկրներում:

### **Կորպորատիվ քրեական պատասխանատվության ինստիտուտի զարգացումը**

Կորպորատիվ քրեական պատասխանատվության ինստիտուտն առաջացել է ընդհանուր իրավունքի ընտանիքում: Մինչեւ 19-րդ դարն ի հայտ են եկել երկու տարբեր հայեցակարգեր՝ Միացյալ Նահանգներում՝ այլ անձի արարքի համար պատասխանատվության ինստիտուտը եւ Միացյալ Թագավորությունում՝ նույնականացման տեսությունը: Երկու իրավական համակարգերում էլ կորպորատիվ պատասխանատվությունը սկզբնական փուլում կիրառվում էր ստատուտային իրավունքով նախատեսված իրավախախտումների համար եւ միայն հետագայում տարածվեց նաեւ դիտավորությամբ կատարված հանցագործությունների վրա:<sup>8</sup> Նիդեռլանդները

դարձան քաղաքացիական իրավունքի առաջին երկիրը, որը որդեգրեց այս միտումները, երբ 1950 թվականին իր քրեական իրավունքում ներմուծեց կորպորատիվ քրեական պատասխանատվության ինստիտուտը: Մայրցամաքի մյուս երկրները շարունակեցին հավատարիմ մնալ «կորպորացիաները չեն կարող ենթարկվել քրեական պատասխանատվության» (*societas delinquere non potest*) սկզբունքին, որը մերժում էր այն գաղափարը, որ իրավաբանական անձը կարող է կատարել հանցագործություն կամ պատասխանատվություն կրել դրա համար: Միեւնույն ժամանակ, լայն կիրառություն ուներ պատժի տեսքով վարչական պատասխանատվության ինստիտուտը:

Իրավիճակը կտրուկ փոխվել է վերջին երեք տասնամյակում: Այսօր, բազմաթիվ եվրոպական երկրներ (եւ աշխարհի բազմաթիվ այլ իրավական համակարգեր) իրենց համակարգում ներդրել են կորպորատիվ քրեական պատասխանատվության հասկացությունը: Չնայած ընդհանուր միտումներին՝ բազմաթիվ պետություններ դեռ պնդում են այն գաղափարը, որ կորպորացիաները կարող են կատարել հանցագործություններ եւ կիրառում են պատժիչ վարչական իրավունքը՝ կորպորացիոն ոչ իրավաչափ վարքագծի համար պատժամիջոց կիրառելու նպատակով: Այնուամենայնիվ, այս երկրներից շատերում իրավաբանական անձանց նկատմամբ կարող է պատժամիջոց կիրառվել ոչ միայն վարչական իրավախախտումների, այլ նաեւ որոշակի դեպքերում իրենց ղեկավարների (կամ նույնիսկ աշխատակիցների) կողմից կատարված հանցագործությունների համար: Քանի որ այս դեպքերը նման են այն դեպքերին, որոնք կորպորատիվ քրեական պատասխանատվություն նախատեսող համակարգերում քրեական պատասխանատվության համար հիմք են հանդիսանում, վարչական պատասխանատվության այս նոր տեսակը Էականորեն չի տարբերվում: Երկու մոտեցումների միջեւ հիմնական տարբերությունը տեսական հիմնավորումն է՝ արդյոք իրավաբանական անձն ի վիճակի է գործելու գիտակցաբար կամ պատասխանատվությամբ եւ, հետեւաբար, կատարելու հանցագործություն: Գործնականում տարբերությունն ընթացակարգային է:

Կա նաեւ իրավական համակարգերի այլ խումբ, որը թույլ է տալիս իրավաբանական անձանց նկատմամբ պատժամիջոցներ կիրառել առանց անդրադառնալու այն հարցին, թե արդյոք կորպորացիան ինքը կարող է մեղավոր լինել հանցագործության կատարման համար, թե ոչ: Քանի որ բոլոր պատժամիջոցներն ամրագրված են քրեական իրավունքում, այս համակարգը սովորաբար կոչվում է քվադի-քրեական պատասխանատվություն: Կրկին, համակարգը իրական նյութական տարբերություններ չի առաջացնում պատասխանատվության ինստիտուտում, սակայն այն ունի տեսական, ինչպես նաեւ ընթացակարգային տարբերություններ՝ քրեական մոտեցմամբ:

Ամփոփելով՝ կարելի է նշել պատժի տեսքով կորպորատիվ պատասխանատվության չորս համակարգ՝

- 1) քրեական պատասխանատվություն,
- 2) քվադի-քրեական պատասխանատվություն,
- 3) պատժի տեսքով վարչական պատասխանատվություն՝

հանցագործությունների համար,

4) պատժի տեսքով վարչական պատասխանատվություն՝ վարչական իրավախախտումների համար:

Միայն չորրորդ համակարգն է, որ չի կարող համարվել կորպորատիվ պատասխանատվության լիարժեք նպատակահարմար ձեւ, քանի որ որոշ միջազգային կոնվենցիաներով պահանջվում է, որ կաշառակերությունը եւ այլ կոռուպցիոն իրավախախտումներ պատժվեն որպէս հանցագործություններ: Ինչպէս քննարկվել է 2-րդ գլխում՝ մյուս երեք համակարգերը կարող են գործառույթային տեսակյունից համարվել համարժեք եւ կարող են սկզբունքորեն բավարարել գոյություն ունեցող բոլոր միջազգային ստանդարտները:

Կոռուպցիոն իրավախախտումների համար կորպորատիվ պատասխանատվությանը վերաբերող միջազգային ստանդարտներով չի պահանջվում սահմանել կոնկրետ մեկ տեսակի պատասխանատվություն: Ընդհակառակը, հակակոռուպցիոն պայմանագրերում բացահայտ կամ տեքստում (օրինակ՝ ԿՄԱԿԿ) կամ բացատրական նյութերում հաճախ հստակեցվում է, որ պետությունները կարող են իրենց նախընտրությամբ սահմանել քրեական, վարչական կամ քաղաքացիական պատասխանատվություն: Այնուամենայնիվ, անկախ որեւէ տարբերակի ընտրությունից՝ իրավաբանական անձինք պետք է ենթարկվեն արդյունավետ, համաչափ եւ տարհանողիչ պատժամիջոցների: Վերջին պահանջն ազդում է ազգային համակարգում որդեգրված պատասխանատվության տեսակի ընտրության վրա: Ինչպէս ցույց է տրված ստորեւ, քրեական կամ քվազի-քրեական պատասխանատվությունը հաճախ ճանաչվում է որպէս ամենահարմար իրավական կառույց՝ կոռուպցիայի համար իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու համար, իսկ վարչական պատասխանատվությունը համարվում է այլընտրանք: Տարածաշրջանում ոչ մի երկիր չի կիրառում քաղաքացիական պատասխանատվության ինստիտուտը՝ ընկերություններին պատասխանատվության ենթարկելու համար:

## **1.2. ՀԿՑ երկրների կարգավիճակը**

Մինչեւ այժմ ՀԿՑ 17 անդամ երկրներ իրենց իրավական համակարգում այս կամ այն ձեւով ընդգրկել են կորպորատիվ պատասխանատվության ինստիտուտը՝ կոռուպցիոն իրավախախտումների համար (տե՛ս ստորեւ՝ աղյուսակ 1): Այս 17 երկրներից 12-ը հետեւել են առաջատար միտմանը եւ ընդունել են քրեական պատասխանատվության ինստիտուտը: Բուլղարիան եւ Ռուսաստանն ընդունել են պատժի տեսքով վարչական պատասխանատվության ինստիտուտը, իսկ Ադրբեջանի, Լատվիայի եւ Ուկրաինայի կարգավորումները կարող են դասակարգվել որպէս քվազի-քրեական:<sup>10</sup>

Բուլղարիայում իրավաբանական անձանց պատասխանատվությունը կարգավորվել է «Վարչական իրավախախտումների եւ պատժամիջոցների մասին» օրենքով (ՎԻՊՕ), որը պարունակում է նաեւ համապատասխան ընթացակարգային կանոններ: ՎԻՊՕ-ի համաձայն՝ իրավաբանական անձի նկատմամբ կիրառվում է գույքային պատասխանատվություն, որը հարստացել է

կամ կհարստանար օրենքում սահմանված հանցագործության միջոցով, ինչպես նաև կազմակերպված հանցավոր խմբի հրամանով կատարված կամ դրա որոշումը կատարելու համար իրականացված հանցագործության միջոցով:<sup>11</sup> Բրավարանական անձի դեմ գործը պետք է հարուցվի դատախազի կողմից, իսկ գործը քննվի վարչական դատարանում:<sup>12</sup> 2013 թվականի հոկտեմբերին Բուլղարիայի նախարարների խորհուրդը հաստատել է Ազգային խորհրդարանին է ներկայացրել ««Վարչական իրավախախտումների եւ պատժամիջոցների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը: Ընդունվելու դեպքում, սույն օրենքի նախագծով կլրացվի այն հանցագործությունների ցանկը, որոնց նկատմամբ կիրառվում է կորպորատիվ պատասխանատվությունը եւ կմշակվի համապատասխան ընթացակարգ:

Ռուսաստանի օրենսդրությունը կոռուպցիոն իրավախախտումների համար վարչական պատասխանատվությունը սահմանում է «Կոռուպցիայի հակազդման մասին» դաշնային օրենքի (թիվ 273-FZ, ընդունված՝ 2008 թվականի դեկտեմբերի 25-ին) 14-րդ հոդվածով եւ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 19.28 հոդվածով, որը սահմանում է իրավաբանական անձի կողմից կամ ի շահ նրա կատարված հատուկ ակտիվ կաշառակերության հանցագործությունը:<sup>13</sup> Իրավաբանական անձանց նկատմամբ գործերը հարուցում է դատախազը եւ մասնակցում է վարչական դատարանի վարույթին: Գործերը վարվում են վարչական իրավախախտումների համար սահմանված ընդհանուր կանոններով:<sup>14</sup>

Լատվիայում իրավաբանական անձանց պատասխանատվության հիմքը սահմանվում է Քրեական օրենքի ընդհանուր մասի հատուկ գլխում: Պատժի փոխարեն օրենքն իրավաբանական անձի նկատմամբ կիրառում է «հարկադրանքի միջոցներ»՝ Քրեական օրենքում սահմանված հանցագործությունների համար, երբ դրանք կատարվել են իրավաբանական անձի շահերից ելնելով, իր կողմից կամ ոչ բավարար վերահսկողության կամ հսկողության հետեւանքով:<sup>15</sup> Քրեական դատավարության օրենքը պարունակում է հատուկ կանոններ, որոնք պետք է պահպանվեն, երբ դատախազը գործ է հարուցում իրավաբանական անձի նկատմամբ:<sup>16</sup> Քանի որ եւ՝ պատասխանատվության հիմքը, եւ՝ կիրառելի ընթացակարգը կանոնակարգվել են քրեական իրավունքի դրույթներով, այս համակարգը պետք է դասակարգվի որպես քվազի-քրեական: Նմանատիպ համակարգ է ներդրվել Ադրբեջանում, որտեղ «քրեական իրավունքի միջոցներն» իրավաբանական անձի նկատմամբ կարող են կիրառվել, եթե հանցագործությունը կատարվել է իր կողմից կամ իր շահերից ելնելով:<sup>17</sup> Նախատեսվում է քրեական դատավարության օրենքում ներդնել համապատասխան ընթացակարգ:<sup>18</sup>

Կորպորատիվ պատասխանատվության նորագույն կարգավորում կարելի է նկատել Ուկրաինայում: 2014 թվականի ապրիլին, պառլամենտում օրենսդրական գործընթացի միջոցով հինգ տարի աշխատելուց հետո, ուժի մեջ մտան Քրեական օրենսգրքի փոփոխությունները, եւ նախատեսվեցին իրավաբանական անձանց նկատմամբ քրեական իրավունքի միջոցները կիրառելու հիմքերը: Նույն փոփոխություններով Քրեական դատավարության օրենսգրքում ներդրվեցին նաև հատուկ ընթացակարգային կանոններ:

**Աղյուսակ 1. ՀԿՑ երկրներում կորպորատիվ պատասխանատվության համակարգերը**

<b>Քրեական պատասխանատվություն</b>	<b>Պատժի տեսքով վարչական պատասխանատվություն</b>	<b>Քվազի-քրեական պատասխանատվություն</b>
Այբանիա Բոսնիա եւ Հերցեգովինա Խորվաթիա Էստոնիա Վրաստան Լիտվա Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետություն <sup>19</sup> Մոլդովա Չեռնոգորիա Ռումինիա Սերբիա Սլովենիա	Բուլղարիա Ռուսաստան	Ադրբեջան Լատվիա Ուկրաինա
<b>12</b>	<b>2</b>	<b>3</b>

Կաշատելու դեմ պայքարի ՏՀՁԿ-ի կոնվենցիայի անդամ հանդիսացող որոշ այլ երկրներում կորպորատիվ պատասխանատվության համակարգերի վերաբերյալ տեղեկություններին ծանոթանալու համար տե՛ս նաեւ 2-րդ հավելվածը:

**1.3. Արդյունավետության գնահատում. ընթացակարգային հայեցակետեր**

Ընդհանուր առմամբ ընդունված է, որ անձի մեղավորությունն ապացուցելու հարցում քրեական վարույթն ավելի արդյունավետ ձեւ է, քան վարչական վարույթը:

Քրեական վարույթի առավելություններն են՝

- քննչական գործիքների եւ հարկադրանքի միջոցների ավելի մեծ փաթեթը.
- փոխադարձ իրավական օգնության ավելի լավ հնարավորությունները.
- վաղեմության ավելի երկար ժամկետները:

**Քննչական գործիքներ**

Ի տարբերություն այլ իրավական ընթացակարգերի՝ քրեական վարույթի հիմնական առավելությունն այն է, որ այն ապահովում է քննչական տեխնիկայի եւ հարկադրանքի այնպիսի միջոցների ավելի մեծ փաթեթ, որոնք թույլատրված են քրեական համատեքստում: Հատուկ գործիքները, ինչպիսիք են խուզարկությունը եւ առգրավումը, հաղորդակցության վերահսկումը, նախաքննության ընթացքում կալանքը եւ այլն, ավանդաբար մատչելի են եղել միայն հանցագործության դեպքերը հայտնաբերելու եւ ապացուցելու համար: Այնուամենայնիվ, կորպորատիվ պատասխանատվության համատեքստում, իրավիճակը զգալիորեն տարբեր է: Հանցանքի համար կորպորացիայի նկատմամբ վարչական պատժամիջոց (կամ քվազի-քրեական հարկադրանքի

միջոց) կիրառելը սովորաբար նշանակում է, որ հանցագործության դեպքը հայտնաբերվել էլ և ապացուցվել է, այսինքն՝ քրեական վարույթը դրա բոլոր ընթացակարգերով իրականացվել է: Ուստի, բոլոր միջոցները, որոնք կարող են կիրառվել իրավախախտի մեղքը ապացուցելու համար, կարող են անուղղակիորեն կիրառվել նաև իրավաբանական անձի պատասխանատվությունն ապացուցելու համար:

Միջազգային հանցագործությունների հետ կապված պատասխանատվության ենթարկելու բարեհաջող դեպքերը, ինչպես *Սիմենսի [Siemens]* և *ՄՄԵ-ի [MAN]* գործերն էին Գերմանիայում, ապացուցում են, որ իրավաբանական անձանց նկատմամբ ազդեցիկ գործեր կարող են նախաձեռնվել նաև այն երկրներում, որոնք ունեն վարչական կամ քվազի-քրեական պատասխանատվության համակարգեր:<sup>20</sup> Լատվիայում *ԳԱՄԱ-ի [GAMA]* գործը կարող է ներառվել այս ցանկում: 2013 թվականին հանրային մեղադրողը միջազգային լայնածավալ գործառնություններ իրականացնող ընկերության՝ *ԳԱՄԱ Հոլդինգի*<sup>21</sup> *[GAMA Holding]* նկատմամբ կիրառել է դրամական տույժ՝ 1.210.688 եվրոյի չափով՝ պաշտոնական դիրքի չարաշահման համար: Լատվիայի իշխանություններին հաջողվել է ապացուցել, որ ընկերության տարածաշրջանային ներկայացուցիչը խորհրդատուին առաջարկել է անհիմն առավելություն՝ ընդհանուր պայմանագրային գնի 3.4%-ի չափով (մոտավորապես 11 միլիոն եվրո)՝ ապահովելու, որ խորհրդատուն օգտագործի իր ազդեցությունը *Լատվեներգո [Latvenergo]* պետական էներգետիկ ընկերության պաշտոնյաների վրա: Անօրինականորեն ձեռք բերված ներքին տեղեկությունների օգտագործմամբ՝ *ԳԱՄԱ Հոլդինգը [GAMA Holding]* նախապատրաստել է նպատակային մրցույթ և ճանաչվել հաղթող՝ Էլեկտրակայանում շինարարական աշխատանքներ կատարելու առնչությամբ պետական գնումների պայմանագիր կնքելու համար: Քանի որ հատուկ քննչական տեխնիկայի միջոցով ստացված ապացույցներն այդքան համոզիչ էին, և՛ *ԳԱՄԱ Հոլդինգը [GAMA Holding]*, և՛ իր տարածաշրջանային ներկայացուցիչը խոստովանեցին և զգալիորեն համագործակցեցին քննության ընթացքում: Ավելին, *ԳԱՄԱ Հոլդինգը [GAMA Holding]* և *Լատվեներգոն [Latvenergo]* փոփոխել են պայմանագիրը՝ Էլեկտրակայանում վերակառուցման ծրագրի արժեքը նվազեցնելով 3.4%-ով:

Այսպիսով, բազմաթիվ դեպքերում, իրավաբանական անձի նկատմամբ բոլոր անհրաժեշտ ապացույցները կարող են ձեռք բերվել իրավախախտ ֆիզիկական անձի նկատմամբ նախկինում իրականացված քրեական դատավարության ժամանակ: Այնուամենայնիվ, քրեական վարույթի առավելությունը դառնում է ակնհայտ այն դեպքերում, երբ իրավախախտ ֆիզիկական անձի նկատմամբ քննություն չի կարող հարուցվել կամ ավարտվել: Ռուսաստանի Դաշնությունում, օրինակ, երբ իրավաբանական անձը քննության է ենթարկվում առանձին և անջատ, դա պետք է իրականացվի վարչական վարույթի շրջանակներում, ինչը նշանակում է, որ գաղտնի կամ հարկադրանքի միջոցներ առկա չեն:<sup>22</sup> Համանման խնդիր առկա է Բուլղարիայում: Մի կողմից, օրենքով սահմանվում է, որ իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկելու վարույթը հարուցվում է նույնիսկ այն դեպքում, երբ իրավախախտ ֆիզիկական անձի նկատմամբ քրեական վարույթ չի կարող հարուցվել կամ այն

կարճվել է իրավական հիմքերով, սակայն մյուս կողմից, օրենքը չի նախատեսում հատուկ քննչական տեխնիկայի կամ հարկադրանքի միջոցների կիրառում՝ քրեական վարույթից դուրս:<sup>23</sup>

Արդյունավետ քննչական գործիքների առկայությունը եւս խնդրահարույց է թվում քվազի-քրեական պատասխանատվության համակարգ ունեցող երկրներում: Լատվիայում, օրինակ, իրավաբանական անձի նկատմամբ կարող են հարուցվել առանձին վարույթներ՝ հավաստիանալու համար՝ արդյոք նրան պատասխանատվության ենթարկելու հիմքեր կան<sup>24</sup>, սակայն այդ դեպքում առկա չեն քննչական այնպիսի գործիքներ, ինչպիսիք հաղորդակցության վերահսկումը եւ գաղտնի գործակալներն են: <sup>25</sup>

## **Փոխադարձ իրավական օգնություն**

Գոյություն ունեն քրեական հարցերով փոխադարձ իրավական օգնությունը (ՓԻՕ) կարգավորող մի շարք միջազգային փաստաթղթեր, սակայն դրանցից միայն մի քանիսն են առնչվում վարչական գործերով ՓԻՕ-ին:<sup>26</sup> Վարչական իրավունքի ոլորտում, ներկայիս միջազգային իրավունքը ոչ մի դեպքում բավարար չէ՝ պետությունների միջև արդյունավետ համագործակցությունն ապահովելու համար: Ուստի, վարչական վարույթը կարող է նպատակահարմար չլինել միջազգային կարելությունների գործերում: Սովորաբար, անհրաժեշտ ՓԻՕ կարող է, հավանաբար, ձեռք բերվել, երբ իրավախախտ ֆիզիկական անձի նկատմամբ կատարվում է քննություն: Սակայն, կրկին խնդիր կարող է առաջանալ այն դեպքերում, երբ իրավաբանական անձի նկատմամբ քննություն պետք է իրականացվի եւ այն պատասխանատվության պետք է ենթարկվի առանձին: Նմանապես, միջազգային համագործակցությունը կարող է միայն անհրաժեշտ լինել ֆիզիկական անձի նկատմամբ քրեական գործով քննությունն ավարտվելուց հետո, օրինակ՝ դատական վարույթի ժամանակ:

Կորպորատիվ բոլոր գործերով արդյունավետ միջազգային համագործակցության մատչելիությունն ապահովելու համար, վարչական պատասխանատվության համակարգ ունեցող երկրները պետք է ունենան հատուկ ազգային օրենսդրություն: Գերմանիայում եւ Իտալիայում, օրինակ, քրեական գործերով ՓԻՕ-ի առկայությունը ներառում է նաեւ իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը:<sup>27</sup> Նմանատիպ ազգային օրենսդրության բացակայությունը, ինչպես այժմ Ռուսաստանի եւ Բուլղարիայի դեպքում է, կարող է զգալիորեն դժվարեցնել միջազգային ընկերությունների նկատմամբ քննության իրականացումը:

## **Վաղեմության ժամկետներ**

Վարչական եւ քրեական պատասխանատվության միջև մեկ այլ ավանդական տարբերությունն այն է, որ հանցանքներն ունեն զգալիորեն ավելի երկար վաղեմության ժամկետներ: Որոշ երկրներում, վաղեմության ժամկետից բացի, կիրառվում են նաեւ քննության իրականացման վերջնաժամկետներ: Օրինակ, Ռուսաստանում, վարչական գործերով քննությունը պետք է ավարտվի մեկ ամսվա ընթացքում:<sup>28</sup> Այս ժամկետը, որը կարող է երկարաձգվել եւս մեկ ամսով, կիրառվում է նաեւ իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու վարույթների նկատմամբ: Ակնհայտ է, որ նման սեղմ ժամկետում շատ դժվար է ավարտին հասցնել քննությունը, ինչը նշանակում է, որ գործնականում իրավաբանական անձանց նկատմամբ վարույթը մեծապես պայմանավորված է ֆիզիկական անձանց նկատմամբ իրականացված քննության արդյունքներով:

## **Իրավասու դատարան**

Կորպորատիվ վարչական պատասխանատվության համակարգը մշակելիս

պետք է դիտարկել եւս մեկ խնդիր: Դա իրավասու դատարանի հարցն է: Քանի որ հանցանքի համար պատասխանատվությունը վտանգված է, տրամաբանական է պնդել, որ քրեական դատարաններն ավելի հարմարեցված են նման գործերը քննելու համար: Քրեական դատարանի առավելությունն ակնհայտ է դառնում այն գործերում, երբ իրավաբանական անձի գործով դատավարությունն ընթանում է նախքան հանցանք կատարած ֆիզիկական անձին պատասխանատվության ենթարկելը, ինչը նշանակում է, որ հանցանք կատարելու փաստը դեռեւս ոչ մի դատարանում չի հաստատվել: Այդ դեպքում, ամենակարելու քննարկումը կարող է վերաբերել քրեական իրավունքի կամ քրեական դատավարության բնույթի հարցերին: Ուստի, տրամաբանական է կարծել, որ քրեական դատարանի դատավորներն առավել իրավասու են քննելու իրավաբանական անձանց դեմ հարուցված գործերը: Նրանց առավել նյութական իրավասությունը հավանաբար այն հիմնական պատճառն է, թե ինչու են Գերմանիան եւ Իտալիան՝ պետություններ, որոնք ավանդաբար դիմադրել են իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտին, քրեական գործերով դատարաններին շնորհել են իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու համար վարչական վարույթն իրականացնելու իրավասություն:<sup>29</sup>

Կարելու է նաեւ նշել, որ Բուլղարիան, որը հանցագործության կատարման համար իրավաբանական անձանց պատասխանատվության է ենթարկել 2005 թվականից, ներկայումս քայլեր է ձեռնարկում այս ուղղությամբ օրենսդրական փոփոխություններ կատարելու համար: Վարչական դատարանի փոխարեն, «ՎԻՊՕ-ում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով որպես առաջին ատյանի դատարան է նշանակվելու ընկերության գրանցման հասցեի շրջանային դատարանը, իսկ որպես երկրորդ ատյանի դատարան՝ վերաքննիչ դատարանը:<sup>30</sup>

### ***Ընթացակարգային երաշխիքներ***

Արդյունավետությունից բացի, պատասխանատվության ենթարկելու ընթացակարգը պետք է գնահատվի նաեւ օրենքի գերակայության տեսանկյունից: Քանի որ քրեական պատժամիջոցները սովորաբար բացասական ազդեցություն են ունենում դատապարտված անձանց համար, քրեական պատժամիջոցների կիրառումը ուղեկցվում է որոշ ընթացակարգային երաշխիքներով, ինչպիսիք են՝ անմեղության կանխավարկածը, պաշտպան ունենալու իրավունքը, ինքնախոստովանական ցուցմունքի դեմ երաշխիքը եւ այլն: Համադրելի երաշխիքները ոչ միշտ են առկա վարչական վարույթի շրջանակներում, քանի որ դրա ազդեցությունը չի համարվում նույնքան վնասակար: Ուստի, եթե պետությունը ցանկանում է իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկել միայն վարչական իրավունքի շրջանակներում, ապա այն պետք է ընթացակարգային երաշխիքները վարչական վարույթում նույնպես դարձնի պարտադիր, առնվազն այն դեպքերում, երբ իրավաբանական անձանց նկատմամբ հանցանքի համար պատիժ է նշանակվել: Այլապես, համակարգը կարող է չբավարարել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կամ մարդու իրավունքների մեկ այլ կիրառելի

մեխանիզմի պահանջները:<sup>31</sup>

#### **1.4. Արդյունավետության գնահատում - գալոդ հայեցակետեր**

Հանցագործության համար դատապարտումը ոչ միայն պարզապես պատիժ է, այլ նաև դրոշմ, որը կարող է լրջորեն վնասել անձի կարգավիճակին եւ համայնքում նրա հարաբերություններին: Վարչական պատասխանատվությունը գրեթե նման ազդեցություն չունի: Այդ իսկ պատճառով ընդհանուր առմամբ ընդունված է, որ քրեական պատասխանատվությունն ավելի մեծ գալոդ դեր ունի, քան վարչական պատասխանատվությունը: Դատվածության՝ դրոշմվելու ազդեցությունը, հաճախ ավելի մեծ վախ է առաջացնում, քան ինքնին պատիժը:

Այնուամենայնիվ, կորպորատիվ պատասխանատվության համատեքստում, այս կանխավարկածի ուժն այնքան էլ ակնհայտ չէ: Ինչպես նշվեց վերելում, վարչական պատժամիջոցները կարող են կիրառվել նաև կորպորացիաների նկատմամբ՝ քրեական իրավունքով սահմանված հանցանքների համար: Կարելի է վիճարկել, որ հանցանքի բնույթն ավելի մեծ նշանակություն ունի լայն հասարակության համար, քան պատժի իրավական բնութագիրը (կամ «անվանումը»): Ուստի, քանի որ քննարկվող հանցանքներն ավանդաբար համարվել են հանցագործություններ (դրանց շարքում նաև՝ կաշառակերությունը), դրա արդյունքում հասարակության կողմից դրա դատապարտումը կարող է կախված չլինել այն փաստից՝ արդյոք պատիժը նշանակվել է վարչական թե քրեական վարույթով: Նույնիսկ թվում է, որ ցանկացած դեպքում հասարակությունը, որպես կանոն, դատապարտում է հանցանք կատարած ֆիզիկական անձին, մինչդեռ կորպորացիաները սովորաբար պահպանում են իրենց հաճախորդների եւ գործընկերների վստահությունը:

Էստոնիայում *Հողերի փոխանակման գործը*, ցույց է տալիս, որ գործարարությամբ զբաղվող կորպորացիաներն ավելի շատ են դիմակայում քրեական պատժամիջոցներին, քան ֆիզիկական անձինք: Ինչպես ներկայացվել է ստորել՝ 5.1.1 բաժնում, հայտնի շինարարական ընկերությանը հաջողվել է պահպանել շուկայում իր դիրքը տնտեսական ճգնաժամի ժամանակ՝ չնայած այն փաստին, որ նրա նկատմամբ իրականացվել է քննություն, դատավարություն, եւ ի վերջո այն դատապարտվել է՝ Կառավարության պաշտոնակատարին կաշառելու համար:<sup>32</sup> Դրան հակառակ, դատապարտված նախկին նախարարի հեղինակությունն արատավորվել է, եւ նա ստիպված է եղել հեռանալ քաղաքականությունից: Ավելին, նրա ղեկավարած քաղաքական կուսակցությունը, որը հանցագործությունը կատարելու պահին խորհրդարանում ուներ 13% մանդատ, դադարեցրեց իր գործունեությունը նույնիսկ մինչեւ գործի ավարտը: Ուստի, ողջամիտ է կարծել, որ պատժամիջոցի խստությունը շատ ավելի կարելու է կորպորացիաների համար, քան նրանց նկատմամբ կիրառված պատասխանատվության տեսակը:

#### **Եզրակացություններ**

Ընթացակարգային տեսանկյունից կարելի է եզրակացնել, որ

իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունն ի սկզբանե ավելի արդյունավետ է, քան վարչական կամ քվազի-քրեական պատասխանատվությունը: Այնուամենայնիվ, գործնականում, վերջին համակարգերը նույնպես կարող են լավ աշխատել: Վարչական վարույթն ունի թույլ կողմեր՝ համեմատած քրեական վարույթի հետ, սակայն այս թույլ կողմերը կարող են փոխհատուցվել հատուկ կարգավորումներով: Եթե պետությունը ցանկանում է իր ոչ քրեական պատասխանատվության ինստիտուտը դարձնել նույնչափ արդյունավետ, որքան քրեական պատասխանատվության ինստիտուտն է, ապա այն պետք է առնվազն ապահովի, որ արդյունավետ քննչական գործիքները եւ փոխադարձ իրավական օգնությունը մատչելի լինեն բոլոր գործերում, այդ թվում՝ այն գործերում, որտեղ ֆիզիկական անձի նկատմամբ քննություն իրականացնելն անհնար է իրավական կամ փաստացի պատճառներով: Անհրաժեշտ է ունենալ նաեւ բավարար վաղեմության ժամկետներ եւ քննություն իրականացնելու վերջնաժամկետներ:

Միջազգային կազմակերպություններն ավելի ու ավելի են հակված նախընտրությունը տալ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտին: Դիտարկվել է, որ, օրինակ, մոնիթորինգ իրականացնող մարմինները, ինչպիսիք են՝ ՏՀՀԿ ԿԱԽ-ը, «այն երկրները, որոնք նախապատվությունը տալիս են ոչ քրեական պատասխանատվության համակարգին, ավելի մանրակրկիտ ստուգում կանցնեն» քան մյուս երկրների ռեժիմները, քանի որ «կորպորատիվ պատասխանատվությունը կարող է միեւնոյն խստությամբ չպահպանվել» ոչ քրեական համատեքստում:<sup>33</sup>

Ավելին, որոշ միջազգային գործիքներ թույլ են տալիս կիրառել վարչական կորպորատիվ պատասխանատվության ինստիտուտը միայն այն դեպքում, երբ տվյալ երկրի իրավական սկզբունքների համաձայն՝ իրավաբանական անձը չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության: Հետեւաբար, կարելի է ենթադրել, որ միջազգային հանրային իրավունքում քրեական պատասխանատվության նկատմամբ ճնշումը հետագա տարիներին միայն կավելանա:

## **2. Կորպորատիվ պատասխանատվության մոդելները**

### **2.1. Պատմական ակնարկ**

#### ***Միացյալ Թագավորությունը եւ նույնականացման տեսությունը***

Ինչպես նշվեց վերելի 1.1 բաժնում, ընդհանուր իրավունքի երկու երկրում՝ Անգլիայում եւ Միացյալ Նահանգներում, կորպորատիվ քրեական պատասխանատվությունն առաջացել է նախադեպային իրավունքից՝ գրեթե միեւնոյն ժամանակ: Վաղ անգլիական իրավունքը մերժում էր այն գաղափարը, որ իրավաբանական անձը կարող է կատարել հանցանք կամ պատասխանատվություն կրել դրա համար: Տասնիններորդ դարի կեսերին այս մոտեցումը սկսեց քանդվել: Առաջինը՝ կորպորատիվ պատասխանատվության գաղափարն իր արտահայտությունը գտավ այլ անձի արարքի համար

պատասխանատվության շրջանակներում: Այս դոկտրինի համաձայն, որը չի հանդիպում քաղաքացիական իրավունքի երկրներում, անձը (սովորաբար գործատուն) պատասխանատվություն է կրում մեկ այլ անձի կատարած հանցանքի համար (իր աշխատողի): Երկաթուղային ընկերությունը 1842 թվականին դատապարտվեց ճանապարհին կառուցված կամուրջը հանելու վերաբերյալ ստատուտային կարգը խախտելու համար:<sup>35</sup> Չորս տարի անց, այդ որոշման ուժը տարածվեց պարտավորությունները չկատարելուց մինչև դիրքի չարաշահման դեպքերի վրա: Մեկ այլ երկաթուղային ընկերություն քանդել էր մայրուղին իր սեփական կամուրջը կառուցելիս՝ կառուցման հետ կապված ստատուտային պահանջների խախտմամբ:<sup>36</sup> Այդ դեպքերում, համարվում է, որ ստատուտային պարտականությունների կատարումը ընկնում է ոչ միայն ֆիզիկական անձ հանդիսացող գործատուների վրա, այլ նաև կորպորացիաների վրա:

Սուտ հարյուր տարի հետո, անգլիական իրավունքում կորպորատիվ քրեական պատասխանատվության ինստիտուտի զարգացումն այլ անձի արարքի համար պատասխանատվության փուլից անցում կատարեց ուղղակի պատասխանատվության փուլ: 1944 թվականին, երեք գործով<sup>37</sup> հաստատվեց այն փաստը, որ կորպորացիան կարող է պատասխանատվության ենթարկվել իր աշխատողների կատարած արարքների համար, որի համար նույն իրավիճակում ֆիզիկական անձ հանդիսացող գործատուն (տնօրենը) միանշանակորեն պատասխանատվության չէր ենթարկվի: Այդ որոշումների Էությունն այն էր, որ կորպորացիաների առաջնորդների գործողությունները (ներառյալ սուբյեկտիվ կողմը) նույնականացվել են հենց կորպորացիայի գործողությունների հետ: Այս տեսակի իրավական նույնականացումը թույլ է տալիս կորպորատիվ պատասխանատվության ինստիտուտը կիրառել ստատուտային իրավունքով նախատեսված հանցանքներից բացի նաև բոլոր այլ հանցանքների նկատմամբ՝ ներառյալ այն հանցանքները, որոնք պահանջում են դիտավորության առկայություն: Այդ ժամանակվանից Միացյալ Թագավորությունում կորպորատիվ քրեական պատասխանատվության ինստիտուտը կիրառվել է նույնականացման տեսության շրջանակներում (որը նաև կոչվում է *այտեր Էգոյի տեսություն*): Վելին, այդ տեսությունն զգալի ազդեցություն է ունեցել ամբողջ աշխարհում իրավաբանական անձանց պատասխանատվության դոկտրինի զարգացման վրա:

### ***Միացյալ Նահանգները եւ աշխատողների արարքների համար գործատուի պատասխանատվության [respondeat superior] դոկտրինը***

Կորպորատիվ քրեական պատասխանատվության ինստիտուտի զարգացումը Ամերիկայում սկսվել է գրեթե նույն ժամանակ եւ ընթացել է նույն ձևով, ինչպես եւ Անգլիայում: Տասիններորդ դարի կեսերին, հաղթահարելով ընդհանուր իրավունքի արգելքները, դատարաններն սկսեցին պատիժներ կիրառել ընկերությունների նկատմամբ, առաջինը՝ անգործության եւ հասարակական կարգի խախտման համար, եւ հետագայում՝ կարգավորիչ ոչ օրինաչափ գործողությունների համար, որտեղ չէր պահանջվում մեղավորության տարրի առկայությունը:<sup>38</sup> Այս զարգացումն առաջ եկավ աշխատողի արարքի

համար գործատուի պատասխանատվության [*respondeat superior*] դեյիկտային իրավունքի [*tort law*] դոկտրինից՝ սկզբունք, որի համաձայն անձը քաղաքացիական պատասխանատվություն է կրում իր գործակալների գործողությունների համար:<sup>39</sup> Ուստի, կորպորատիվ պատասխանատվության վաղ ամերիկյան դոկտրինը, ինչպես էլ անգլիական դոկտրինը, ուներ փոխարինող բնույթ էլ կիրառվում էր այն հանցանքների նկատմամբ, որոնց համար չէր պահանջվում դիտավորության տարրի առկայության վերաբերյալ սպացույց:

Իրավիճակը փոխվեց քսաներորդ դարի հենց սկզբին: Նյու Յորք Սենթրալ ընդ Հուդսոն Ռիվեր երկաթուղային ընկերության [*New York Central & Hudson River Railroad Company*] գործում<sup>40</sup>, ԱՄՆ Գերագույն դատարանը բախվեց մի իրավական նորմի, որն արտացոլում էր հանցագործության համար այլ անձի արարքի համար պատասխանատվություն կիրառելու հստակ օրենսդրական մտադրություն, որը պարունակում էր դիտավորության տարր: Հատկապես, Էլկինի ակտում [*Elkins Act*] (1903 թվական) հատկապես սահմանվում է, որ իր աշխատանքային պարտականությունների շրջանակներում գործող աշխատակցի գործողությունները էլ անգործությունը պետք է համարվեին իր գործատու կորպորացիայի գործողությունները էլ անգործությունը: Մերժելով ընդհանուր իրավունքի ավանդական դոկտրինը, որը չէր ընդունում կորպորատիվ պատասխանատվության ինստիտուտը՝ Դատարանը ոչ միայն ուժի մեջ թողեց այդ կոնկրետ իրավական նորմը, այլ նաեւ հատուկ շեշտադրմամբ հայտարարեց կորպորատիվ պատասխանատվության ինստիտուտի անհրաժեշտությունը:<sup>41</sup> Դատարանը փաստարկեց, որ եթե քրեական իրավունքը տարածվեր միայն ֆիզիկական անձանց նկատմամբ, սպա «բազմաթիվ հանցանքներ կարող էին մնալ անպատիժ»:<sup>42</sup>

Այդ հայտարարությունը չմնաց առանց աջակցության: Հակառակը, ցածր ատյանի դատարաններն արագ ընդլայնեցին իրավաբանական անձանց պատասխանատվության շրջանակը՝ աշխատողի արարքի համար գործատուի պատասխանատվությունը [*respondeat superior*] նույնպես ընդհանուր իրավունքի հանցագործությունների դոկտրինում ներառելու համար: Դաշնային իրավունքում խորն արմատավորված այս դոկտրինի համաձայն՝ կորպորացիան կարող է պատասխանատվություն կրել իր ցանկացած գործակալի ցանկացած գործողության համար, որը կատարել է հանցագործություն իր աշխատանքային լիազորությունների շրջանակներում՝ ելնելով ընկերության շահերից:<sup>43</sup> Հարկ է ընդգծել, որ «իր գործակալներից ցանկացածը» հասկացությունն ունի լայն մեկնաբանություն: Միացյալ Նահանգների մոտեցման համաձայն՝ ի հակադրումն անգլիական *այտեր Էզո հասկացությանը, հանցագործություն կատարած անձի դիրքը ընկերության ստորակարգությունում նշանակություն չունի*: Եթե «աշխատողի արարքի համար գործատուի պատասխանատվությունը» [*respondeat superior*] սկզբունքի պայմանները բավարարվել են, սպա «կորպորացիան կարող է քրեական պատասխանատվություն կրել իր ստորադաս, նույնիսկ ցածր կարգավիճակ ունեցող աշխատակիցների գործողությունների համար»:<sup>44</sup>

## **Հետագա զարգացումները**

Սկզբնական երկու տեսություններն ունեին իրենց առավելություններն ու թերությունները: Նույնականացման տեսությունը սահմանում է քիչ թե շատ հստակ սահմաններ՝ քրեական իրավունքի համար, ինչը կարելու է օրենքի գերակայության համար: Պետք է հիշել, որ քրեական իրավունքի կանոնները պետք է անձանց (ֆիզիկական կամ իրավաբանական) պաշտպանեն ոչ միայն քրեական իրավունքի միջոցով այլ նաև դրա դեմ: Մյուս կողմից, այն հստակորեն ունի չափազանց նեղ շրջանակ, որպեսզի համահունչ լինի այսօրվա կազմակերպական իրականության հետ: Կորպորացիաները շատ բարդ կառույցներ են՝ կոլեկտիվ որոշումների կայացման գործընթացներով, որոնցում բարձրաստիճան ղեկավարներից բացի ներգրավված են նաև բազմաթիվ այլ անձինք: Այդ իսկ պատճառով, երբ կատարվում է կորպորատիվ հանցանք, հաճախ շատ դժվար է նույնականացնել հանցանք կատարած անձին: Որքան մեծ է ընկերությունը, այնքան հավանական է, որ այն կարող է խուսափել պատասխանատվությունից՝ նույնականացման տեսության շրջանակներում:<sup>45</sup>

Կորպորատիվ պատասխանատվության ամերիկյան համակարգը խուսափում է այս քննադատությունից, սակայն ունի այլ լուրջ խնդիրներ: Քանի որ ընկերությունը կարող է պատժվել իր՝ ավելի ցածր մակարդակի աշխատակցի կատարած հանցագործությունների համար, նույնիսկ եթե աշխատակիցը գործել է իր իրավասությունների շրջանակից դուրս (*ultra vires*), եւ ընկերությունն իր լիազորությունների շրջանակում արել է ամեն ինչ՝ աշխատակիցների կամ գործակալների անօրինական գործունեությունը կանխելու համար, ընկերությունը գործնականում իրեն պաշտպանելու ոչ մի տարբերակ չունի: Ավելին, խոշոր ընկերություններն ի վերջո չեն կարող կանգնեցնել հանցագործությունների կատարումը, քանի որ անհնար է վերահսկել յուրաքանչյուր առանձին աշխատակցի վարքագիծը եւ մտադրությունը: Ուստի, ընկերությունների քրեական պատասխանատվությունն ինչ-որ չափով կախված է տվյալ դեպքից, ինչն արդար չէ, եւ ոչ էլ ունի համապատասխան զսպման ազդեցություն:<sup>46</sup>

Այն պարադոքսալ արդյունքը, որ մի տեսությունը չափազանց սահմանափակ է, որպեսզի լինի արդյունավետ, իսկ մյուսը չափազանց լայն է, որպեսզի լինի արդար, ստիպել է գիտաաշխատողներին եւ օրենսդիրներին փնտրել երրորդ տարբերակ: Ի հայտ են եկել երկու այլընտրանքային մոտեցումներ: Առաջինը՝ նույնականացման տեսությունն ընդլայնվել է այնպես, որ իրավաբանական անձի պատասխանատվության հիմք կարող է լինել նաև ղեկավարության կողմից աշխատակիցների նկատմամբ վերահսկողության բացակայությունը: Սա եղել է միազգային կազմակերպությունների մոտեցումը: ՏՀԶԿ-ի՝ Արդյունավետ գործելակերպի ուղեցույցով, օրինակ, պահանջվում է, որ իրավաբանական անձը պատասխանատվություն կրի նաև այն դեպքում, երբ «կառավարման բարձր մակարդակի իրավասություն ունեցող անձը չի կանխել ցածր մակարդակի աշխատակցի կողմից օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնատար անձանց կաշառք տալը, այդ թվում՝ նրա նկատմամբ վերահսկողություն չիրականացնելու կամ համապատասխան ներքին հսկողություն, էթիկայի եւ պարտականությունների կատարման ծրագրեր եւ միջոցներ չապահովելու միջոցով»:<sup>47</sup> Նման սկզբունք ամրագրված է Եվրոպայի

խորհրդի՝ Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիայի 18-րդ հոդվածում:

Սկզբնական, ածանցյալ դոկտրինների մեկ այլ այլընտրանքի հիմքում ընկած է այն համոզմունքը, որ ընկերության գործողությունները կամ մեղավորությունը նույնը չեն, ինչ ֆիզիկական անձի գործողությունները եւ մեղավորությունը: Այս տեսություններով փորձ է արվում տարանջատել կորպորատիվ պատասխանատվությունը ֆիզիկական անձանց պատասխանատվությունից եւ փոխարենը այն սահմանել կազմակերպական առումով: Երկուսն էլ այս ոլորտում կարող են նորեկ համարվել: 1976 թվականին Հոլանդիայի օրենսդիրը փոփոխություն կատարեց Քրեական օրենսգրքի 51-րդ բաժնում՝ բացահայտ եւ պարզ նշելով, որ բոլոր հանցանքները կարող են կատարվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց կողմից: Նոր օրենսդրության հիմքում ընկած է այն գաղափարը, որ կորպորացիան անկախ մարմին է եւ կարող է ինքնուրույն կատարել հանցագործություններ: Այս փոփոխությամբ, հոլանդական դատարաններին եւ գիտաշխատողներին հանձնարարվեց սահմանել կորպորատիվ գործողության եւ մեղքի հայեցակարգերի էությունը: Այս հանձնարարությունն իրականացվեց քաղաքացիական իրավունքի դոկտրինի օգնությամբ, որը գնահատում է վարքագիծը այն սոցիալական գործոնի լույսի ներքո, որտեղ դրսևորվել է: Այն հստակ չի ասում՝ անձանց որ գործողություններն են համարվում կորպորացիայի գործողություններ, այլ դիտարկում է խնդիրը՝ հանգամանքներից ելնելով: Այլ կերպ ասած՝ ֆիզիկական անձի կողմից կատարված գործողությունը կարող է դիտվել որպես կորպորացիայի կողմից կատարված գործողություն, եթե հիմնավորվում է համապատասխան սոցիալական համատեքստը:<sup>48</sup> Ուստի, հոլանդական իրավունքն սկսել է անցում կատարել «որոշ չափով փորձնական եւ թերի չափանիշից դեպի կորպորատիվ պատասխանատվության կազմակերպական չափանիշի»: <sup>49</sup>

Կազմակերպական (որը նաեւ կոչվում է «հոլիստիկ» կամ «օբյեկտիվ») մոտեցումն այսօր շատ հետեւորդներ ունի ամբողջ աշխարհում: Այստեղ լավ օրինակ կարող է լինել Շվեյցարիայի Քրեական օրենսգրքը, որն ուժի մեջ է մտել 2003 թվականին: Հաշվի առնելով տնտեսական լուրջ հանցագործությունները (այդ թվում՝ կոռուպցիան)՝ սույն օրենքով սահմանվում է, որ ձեռնարկությունը պետք է պատժի ենթարկվի ֆիզիկական անձից առանձին, եթե ձեռնարկությունը չի ձեռնարկել բոլոր ողջամիտ եւ անհրաժեշտ կազմակերպական միջոցները՝ նման հանցանքը կանխելու համար:<sup>50</sup> Մեկ այլ հաջողված օրինակ Ավստրալիայի օրինակն է, որը սովորաբար հետեւում էր նույնականացման տեսությանը, սակայն 2001 թվականին զգալի փոփոխություն կատարեց իր օրենքում եւ դոկտրինում: Նոր օրենսդրության համաձայն՝ իրավաբանական անձը նաեւ պատասխանատվություն է կրում ցանկացած աշխատակցի կողմից կատարված հանցանքի համար, որը գործել է իր փաստացի կամ ակնհայտ աշխատանքային լիազորությունների շրջանակներում, եթե ընկերությունը բացահայտ, ինքնաբերաբար կամ ենթադրաբար լիազորել կամ թույլ է տվել հանցանքի կատարումը: Լիազորումը կամ թույլատրումը կարող է դրսևորվել կորպորատիվ գործելակերպում, որն ուղղորդել, խրախուսել, հանդուրժել կամ հանգեցրել է հանցագործության կատարմանը, եւ կարող է դրսևորվել նույնիսկ

պարտավորությունների կատարման գործելակերպ չձեւավորելու եւ չպահպանելու մեջ:<sup>51</sup>

Տեսականորեն կազմակերպական մոդելը թվում է, թե առաջարկում է «իրավունք», որը երկու սկզբնական մոտեցումների համար այլընտրանք է: Իրավաբանական անձի նկատմամբ պատժամիջոցների կիրառումը լավ գաղափար է միայն այն դեպքում, երբ իրավաբանական անձը, որպես այդպիսին, մեղավոր է, եւ միայն այդ պատճառով: Հարցն այն է, թե ինչպես գործնականում կարող է բացահայտվել կորպորատիվ գործելակերպը: Ոչ պատշաճ գործունեություն իրականացնող ընկերությունը կարող է ունենալ երկու գործելակերպ. մեկը՝ թղթի վրա՝ անհրաժեշտության դեպքում պետական մարմիններին ցույց տալու համար, իսկ մյուսը՝ իրական կյանքում: Խնդիր է առաջանում հատկապես միջազգային հանցագործությունների, օրինակ՝ կաշառակերության առնչությամբ: Կաշառակերությունը պատահականորեն կատարվող դեպք չէ, այլ լավ պլանավորված եւ գաղտնի իրականացված գործողություն: Եթե ներքին կանոններով ու կարգավորումներով ընկերությունը կարող է խուսափել հետապնդումից, ապա դրանց մշակումը հանցագործությունը պլանավորելիս ստուգաթերթում ավելացվող մեկ այլ կետ է: Ապացուցելը, որ թղթի վրա գրված գործելակերպն ընկերության «իրական» գործելակերպը չէ, կարող է նույնքան դժվար լինել, որքան հանցագործության մեջ ընկերության ներգրավվածությունն ապացուցելը: Հետեւաբար, պատճառ կա կասկածելու, որ կազմակերպական մոդելը գործնականում կարող է զգալիորեն ավելի արդյունավետ լինել, քան «այտեր էգո» [*alter ego*] մոդելը:

## 2.2. Պատասխանատվության մոդելները ՀԿՑ երկրներում

Ինչպես վերը նշվեց՝ գոյություն ունի կորպորատիվ պատասխանատվության չորս հիմնական մոդել՝

1) **Նույնականացման մոդելը**, որի դեպքում իրավաբանական անձի պատասխանատվության համար կարող է հիմք ծառայել միայն այն հանցանքը, որը կատարվել է վերահսկողություն իրականացնող աշխատակցի կողմից, այն է՝ ընկերության բարձրաստիճան դեկավար օղակին պատկանող կամ ներկայացուցչական լիազորություններ ունեցող անձի կողմից.

2) **Ընդլայնված նույնականացման մոդելը**, որի դեպքում իրավաբանական անձի պատասխանատվության համար կարող է հիմք ծառայել նաեւ դեկավար օղակի կողմից իր աշխատակիցներին վերահսկելու անկարողությունը («վերահսկողության բացակայության կանոն»).

3) **Այլ անձի փոխարեն պատասխանատվության մոդելը**, որի դեպքում իրավաբանական անձի պատասխանատվության համար հիմք կարող է ծառայել այն հանցանքը, որը կատարվել որեւէ աշխատակցի կողմից իր աշխատանքային լիազորությունների շրջանակում եւ ընկերության շահերից ելնելով.

4) **Կազմակերպական մոդելը**, որի դեպքում իրավաբանական անձի

պատասխանատվությունը սահմանվում է՝ ելնելով իր կորպորատիվ մշակույթի թերություններով:

Ուսումնասիրության ենթարկված ՀԿՑ 17 երկրների շարքում բոլոր չորս մոդելները ներկայացված են: Պետությունների ճնշող մեծամասնությունը (14) կիրառում է նույնականացման մոդելի այս կամ այն տեսակը: (Տե՛ս ստորել՝ աղյուսակ 2): Նրանցից ինը՝ Ադրբեջանը, Բոսնիա եւ Հերցեգովինան, Վրաստանը, Լատվիան, Լիտվան, Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետությունը, Սլովենիան, Սերբիան եւ Ուկրաինան, իրենց օրենսդրության մեջ բացահայտ սահմանել են, որ ղեկավար օղակի կողմից վերահսկողության բացակայությունը եւս կարող է հիմք ծառայել կորպորատիվ պատասխանատվության համար: Ռուսաստանի եւ Բուլղարիայի՝ պատժի տեսքով վարչական պատասխանատվության համակարգերը որդեգրել են այլ անձի փոխարեն պատասխանատվության մոդելը, իսկ Ռումինիան միակ երկիրն է, որտեղ կորպորատիվ պատասխանատվության ինստիտուտը զարգացել է կազմակերպական մոդելի լույսի ներքո:

## Աղյուսակ 2. Կորպորատիվ պատասխանատվության մոդելները ՀԿՑ երկրներում

Նույնականացման մոդել	Ընդլայնված նույնականացման մոդել	Այլ անձի փոխարեն պատասխանատվության մոդել	Կազմակերպական մոդել
Այբանիա Խորվաթիա Էստոնիա Մոլդովա Չեռնոգորիա	Ադրբեջան Բոսնիա եւ Հերցեգովինա Վրաստան Լատվիա Լիտվա Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետություն Սերբիա Սլովենիա Ուկրաինա	Բուլղարիա Ռուսաստան	Ռումինիա
5	9	2	1

### 2.3. Անձինք, որոնց պատճառով կարող է առաջանալ կորպորատիվ պատասխանատվությունը

#### 2.3.1. Պատասխանատու անձանց գործողությունների համար պատասխանատվությունը

##### «Պատասխանատու անձ» հասկացության սահմանումը

Այն երկրներում, որոնք հետեւում են նույնականացման մոդելի որեւէ

տեսակի, կորպորատիվ պատասխանատվության շրջանակը հիմնականում որոշվում է պատասխանատու անձի (կամ վերահսկողություն իրականացնող աշխատակից) հասկացության սահմանմամբ: Որքան շատ գործակալների վրա է տարածվում սահմանումը, այնքան ավելի ճկուն (եւ արդյունավետ) կարող է լինել դրա իրականացումը: Ընդհանուր առմամբ, կարելի է հանդիպել սահմանման երկու տեսակի՝ **ինստիտուցիոնալ** եւ **գործառնությանին**: Առաջինը սահմանում է պատասխանատու անձին ընկերության խորհրդում կամ այլ ղեկավար մարմիններում անդամության միջոցով, իսկ երկրորդը շեշտը դնում է գործակալի պարտականությունների վրա: Կա նաեւ երրորդ ձեւը, որը համակցում է ինստիտուցիոնալ եւ գործառնությանին չափանիշները:<sup>52</sup>

Գործառնությանին (եւ համակցված) սահմանումը պետք է համարվի առավել արդյունավետ, քան գուտ ինստիտուցիոնալ սահմանումը: Քանի որ գործառնությանին սահմանումը կախված չէ պաշտոնական նշանակումներից, այն կարող է առավել լավ հարմարեցվել խնդրո առարկա ընկերության փաստացի գործունեությանը: Գործառնությանին սահմանումը կիրառող երկրների մեծամասնությունը հայտարարել է, որ ընկերության եւ գործակալի միջեւ փոխհարաբերության պաշտոնական բնույթը կարելուր չէ, քանի դեռ գործակալը չի իրականացնում սահմանման մեջ նշված պարտականությունները:<sup>53</sup> Ավելին, գործառնությանին սահմանումը կարող է ավելի կիրառելի լինել օտարերկրյա ընկերություններում, որոնք կարող են ունենալ ղեկավարման եւ վերահսկողական տարբեր կառուցվածքներ: Լատվիայում *ԳՄՄՎ-ի* գործը (տես՝ 1.3 բաժին վերելում) ապացուցում է վերջին փաստարկը: Տվյալ գործում այն անձը, որի պատճառով ընկերությունը ենթարկվել էր պատասխանատվության, տարածաշրջանային ներկայացուցիչն էր, որը չէր պատկանում ընկերության որեւէ ղեկավար կամ վերահսկող մարմնի:

Գործառնությանին սահմանման լավ օրինակ կարելի է գտնել Չեռնոգորիայի օրենքում, որը սահմանում է պատասխանատու անձին հետեւյալ կերպ՝

«Պատասխանատու անձ» նշանակում է ֆիզիկական անձ, որին վերապահված են որոշակի պարտականություններ իրավաբանական անձի շրջանակներում, անձ, որը լիազորված է գործելու իրավաբանական անձի անունից եւ անձ, որը ողջամտորեն ենթադրվում է, որ ունի իրավաբանական անձի անունից գործելու լիազորություն: Իրավաբանական անձի անունից որպես բաժնետեր հանդես եկող ֆիզիկական անձը նույնպես համարվում է պատասխանատու անձ: <sup>54</sup>

Այստեղ հարկ է մատնանշել երկու գործոն: Առաջինը՝ ուղղակիորեն նշվում է, որ իրավաբանական անձի անունից գործող բաժնետերերը համարվում են պատասխանատու անձինք: ՀԿՑ բազմաթիվ երկրների փորձը ցույց է տվել, որ սեփականատերերը եւ հիմնական բաժնետերերը հաճախ ներգրավված են կառավարման գործընթացներում, նույնիսկ երբ նրանք չեն պատկանում ընկերության ղեկավար կամ վերահսկող մարմիններին: Սահմանման մյուս առավելությունն այն է, որ պատասխանատու անձը դրանով սահմանվում է «արտաքին» տեսանկյունից: Պատասխանատու անձը նաեւ այն անձն է, որը, ինչպես ողջամտորեն ենթադրվում է, ընկերության ներկայացուցիչն է:

Գործակալի կարգավիճակը գնահատելու նպատակով «արտաքին» տեսակետը կիրառելու հնարավորությունը զգալիորեն դժվարեցնում է ոչ իրավաչափ գործունեության մեջ ներգրավված ընկերության համար իր փաստացի ղեկավարների քողարկումը:

Ուստի, պատասխանատու անձանց շրջանակը, որոնք կատարում են այնպիսի գործողություններ, որոնց համար իրավաբանական անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության, ընդգրկում է ոչ միայն բարձր օղակի ղեկավարության հանձնարարությունները կատարող անձանց, այլ նաև իրավաբանական անձի անունից գործելու լիազորություն ունեցող ցանկացած անձի: Այլ խոսքերով, ներգրավված ֆիզիկական անձի զբաղեցրած պաշտոնը իրավական հետեւանքների առումով որեւէ նշանակություն չունի. իրավաբանական անձի շրջանակներում որպես պատասխանատու անձ գործելու լիազորություն ունեցող բոլոր անձինք կարող են պատճառ դառնալ իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկելու համար:

### ***Պատասխանատու անձանց գործողությունները***

«Պատասխանատու անձ» հասկացության հստակ եւ ճկուն սահմանում ունենալուց բացի, ուշադրություն պետք է դարձնել նրան, թե պատասխանատու անձանց որ գործողություններն են առաջացնում իրավաբանական անձի պատասխանատվությունը: Անշուշտ, կորպորատիվ պատասխանատվությունը ծագում է, եթե պատասխանատու անձն անձամբ կատարում է հանցագործության հատկանիշներ պարունակող արարքը (օրինակ՝ առաջարկում է կամ խոստանում է կաշառք, տալիս է այն եւ այլն): Սակայն, ի լրումն դրան, կորպորատիվ պատասխանատվությունն առաջանում է նաև այն դեպքում, երբ պատասխանատու անձը աշխատակցին հրամայում է, ազդեցություն է գործում նրա վրա կամ օժանդակում է նրան հանցագործություն կատարելու մեջ: Երկրների մեծ մասում, այս արդյունքը ձեռք է բերվում հետեւյալ ընդհանուր կանոնների եւ հայեցակարգերի կիրառմամբ՝ հանցավոր համագործակցություն, օժանդակում եւ դրդում, լիազորման հետ կապված չարաշահում եւ այլն: Այլընտրանքային լուծում կարելի է գտնել Սլովենիայի օրենսդրության մեջ, որով սահմանվում է պատասխանատու անձի ներգրավվածությունը կառավարման լիազորությունների առկայության տեսանկյունից: Սլովենիայի օրենսդրության համաձայն՝ ցանկացած անձի կողմից կատարված հանցանքը կարող է առաջացնել կորպորատիվ պատասխանատվություն, եթե՝ 1) կատարված հանցանքը նշանակում է իրավաբանական անձի ղեկավար կամ վերահսկող մարմինների ոչ իրավաչափ որոշման, հրամանի կամ հանձնարարության իրականացում, կամ 2) իրավաբանական անձի ղեկավար կամ վերահսկող մարմինները ներգործություն են ունեցել հանցանք կատարած անձի վրա հանցանք կատարելու հարցում կամ հնարավոր են դարձրել հանցանքի կատարումը:<sup>55</sup>

Սլովենիայի օրենքն էլ ավելի է ընդլայնվում՝ սահմանելով, որ հանցանքը կարող է վերագրվել իրավաբանական անձին նաև այն դեպքում, երբ իրավաբանական անձը «իր տրամադրության տակ ունի ապօրինի ճանապարհով ձեռք բերված նյութական օգուտ կամ օգտագործում է հանցանքի կատարման

արդյունքում ձեռք բերված առարկաներ»:<sup>56</sup> Սա նշանակում է, ըստ էության, որ հանցանքի ընդունումը ղեկավար մարմնի կողմից դրա կատարումից հետո կարող է առաջացնել կորպորատիվ պատասխանատվություն: Այս կանոնը, վերահսկողության բացակայության կանոնի ընդունման հետ միասին, ցույց է տալիս, որ Սլովենիան հարստացրել է իր «նույնականացման մոդելը» կազմակերպական մոտեցման գաղափարներով: Այդպիսով, Սլովենիան ստեղծել է յուրօրինակ մոդել, որը որոշակի առումով համարվում է առավել արդյունավետ, քան նույնականացման մոդելները:

Հանցանքի կատարումից հետո ոչ իրավաչափ վարքագիծը կարող է առաջացնել կորպորատիվ պատասխանատվություն նաև Սակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետությունում: Սակեդոնիայի օրենսդրության համաձայն՝ իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում իր աշխատակցի կամ ներկայացուցչի կողմից կատարված հանցանքի համար, եթե ղեկավար կամ վերահսկող մարմինը թաքցրել կամ չի հայտնել հանցանքի մասին՝ մինչև հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելը:<sup>57</sup> Այս կանոնը, այնուամենայնիվ, կիրառվում է միայն եթե հանցանքի հետևանքով երրորդ անձը զգալի եկամուտ է ստանում կամ զգալի վնաս է կրում:<sup>58</sup>

Սահմանման շրջանակը եւ պատասխանատու անձի գործողությունները հատկապես կարելու են այն երկրներում, որոնք չեն ընդունում վերահսկողության բացակայության կանոնը որպես իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկելու հիմք: Այս առումով ամենաբարդ իրավիճակն Էստոնիայում եւ Խորվաթիայում է:

Էստոնիայի օրենքը շատ հակիրճ է. պարզապես նշվում է, որ «իրավաբանական անձը ենթարկվում է պատասխանատվության այնպիսի գործողության համար, որը կատարվել է իրավաբանական անձի շահերից ելնելով, իր մարմնի, դրա անդամի կամ իր բարձր օղակի պաշտոն զբաղեցնող անձի կամ իրավասու ներկայացուցչի կողմից»:<sup>59</sup> Քանի որ օրենքով չի տրվում «իրավասու ներկայացուցիչ» հասկացության որեւէ սահմանում, կորպորատիվ պատասխանատվության շրջանակը պետք է հստակեցվի նախադեպային իրավունքով: Մինչ այժմ, դատարանները կիրառել են այս հայեցակարգն այն աշխատողների նկատմամբ, որոնք «գործել են բարձր օղակի պաշտոն զբաղեցնող անձի հրամանով կամ թույլտվությամբ», ինչպես նաև «միջին մակարդակի ղեկավարների նկատմամբ, որոնք որոշակի ոլորտներում իրավասու են ինքնուրույն որոշումներ կայացնելու եւ այդպիսով ուղղորդելու իրավաբանական անձի կամքը»:<sup>60</sup>

Խորվաթիայում իրավական համակարգը համադրելի է: Օրենսդրությամբ տրված սահմանման համաձայն՝ պատասխանատու անձը «այն ֆիզիկական անձն է, որը պատասխանատու է իրավաբանական անձի գործառնությունների համար կամ այն, անձը, որին վերապահվել են հանձնառություններ տվյալ իրավաբանական անձի գործառնությունների շրջանակում»:<sup>61</sup> Ինչպես հաստատում են Խորվաթիայի իշխանությունները, սահմանումը չի ներառում բոլոր աշխատողներին. այն տարածվում է միայն նրանց վրա, ովքեր ունեն ներկայացուցչական, որոշումներ կայացնելու եւ վերահսկողական

լիազորություններ:<sup>62</sup>

Չնայած համեմատաբար պարզ օրենսդրությանը՝ երկու երկրները կիրարկման ոլորտում ունեն բավականին հարուստ փորձ: 2010-2013 թվականներին Էստոնիան հետապնդում է իրականացրել 200 իրավաբանական անձանց նկատմամբ, որոնցից 27-ին մեղադրանք առաջադրվեց կաշառք տալու համար: Սա ամենաբարձր ցուցանիշն է ՀԿՑ երկրներում: (Տե՛ս համեմատական տվյալները ստորել՝ 4.2 բաժնում): 2010-2012 թվականներին Խորվաթիայում 12 իրավաբանական անձ մեղադրվեց այնպիսի գործերով, որտեղ քննությունն իրականացվել էր Կոռուպցիայի եւ կազմակերպված հանցագործության կանխման հարցերով գրասենյակի կողմից:

Ավելին, երկու պետություններն էլ հաջողության են հասել բարձր մակարդակներում կոռուպցիայի դեպքերի հայտնաբերման եւ հետապնդման հարցում: Հողերի փոխանակման գործում, Էստոնիայում *ԱՍ Մերկո Էհիտուս [AS Merko Ehitus]*<sup>63</sup> առաջատար շինարարական ընկերությունը դատապարտվեց շրջակա միջավայրի նախարարին, ինչպես նաեւ Հողային հարցերով խորհրդի գլխավոր տնօրենին կաշառելու համար, եւ նրա նկատմամբ նշանակվեց տուգանք՝ 798 000 եվրոյի չափով:<sup>64</sup> Բարդ կոռուպցիոն սխեմայի միջոցով ընկերությունը ձեռք էր բերել պետական սեփականություն հանդիսացող թվով 37 հողակտոր՝ 12 միլիոն եվրո ընդհանուր արժեքով, եւ նպատակ ուներ ձեռք բերելու եւս 9-ը՝ 7.2 միլիոն եվրո արժեքով: Միեւնույն գործով *ԱՍ Մերկո Էհիտուս* ընկերության հետ կապ ունեցող ընկերության նկատմամբ նշանակվեց տուգանք՝ 127 823 եվրոյի չափով՝ նախարարության նոր շենքի կառուցման համար պետական գնումներում առավելություն ստանալու նպատակով մեկ այլ նախարարի կաշառելու համար:

Խորվաթիայի Հանրապետության նախկին վարչապետը եւ իր քաղաքական կուսակցությունը *Ֆիմի Մեդիայի* գործով դատապարտվեցին առաջին աստիճանի դատարանի կողմից կուսակցության համար որպես նվիրատվություն հավաքագրված պետական ֆինանսական միջոցների եւ գումարների յուրացման համար: Մեղադրյալը, իր՝ որպես վարչապետ, պաշտոնավարման ժամանակ, ներգործել է պետական մարմինների ներկայացուցիչների եւ ամբողջությամբ կամ մասամբ պետության սեփականություն հանդիսացող ընկերությունների ներկայացուցիչների վրա, որպեսզի *Ֆիմի Մեդիա Դ.Օ.Օ.*-ն ստանա ապրանքներ եւ ծառայություններ մատուցելու պատվերը՝ առաջարկվող պայմաններից անկախ: Այս սխեմայով, *Ֆիմի Մեդիա Դ.Օ.Օ.* ընկերությունը ձեռք է բերել ընդհանուր 4.5 միլիոն եվրո, որը հետագայում բաշխվել է մեղադրյալի, իր գործընկերների եւ իր քաղաքական կուսակցության միջեւ: Առաջին աստիճանի դատարանը դատապարտեց նախկին վարչապետին ինը տարի ժամկետով ազատազրկման, քաղաքական կուսակցության նկատմամբ նշանակեց տուգանք՝ 667 000 եվրոյի չափով, եւ *Ֆիմի Մեդիա Դ.Օ.Օ.* ընկերության նկատմամբ նշանակեց պատժամիջոց՝ հարկադիր կազմալուծման ձեւով: Բացի այդ գործից՝ Խորվաթիայում ընթանում է դատավարություն ընդդեմ դեղագործական ընկերության, որը ենթադրաբար կաշառել է ամբողջ երկրում 337 բժիշկների եւ դեղագործների՝ դեղերի վաճառքների ավելի բարձր մակարդակ ունենալու համար (կոչվում է

Հիպոկրատների գործ): Թեև այս գործերը դատարանի կողմից վերջնական լուծում դեռ չեն ստացել, այնուամենայնիվ, ապացուցում են, որ իրավակիրառ համակարգն աշխատում է:

Գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչ այժմ Էստոնիային անհրաժեշտ չի եղել «պատասխանատու անձի» կամ «վերահսկողության բացակայության» կանոնի ավելի լայն սահմանում՝ կաշառք տալու համար իրավաբանական անձանց հետապնդելու համար: Այն բոլոր դեպքերում, երբ կաշառքը տրվել է՝ ելնելով իրավաբանական անձի շահերից, ներգրավված են եղել բարձրաստիճան ղեկավար օղակը կամ նույնիսկ սեփականատերերը: Հողերի փոխանակման գործում, օրինակ, կոռուպցիոն սխեմայի իրականացումը գլխավորել է ընկերության խորհրդի նախագահը՝ անձ, որը հիմնադրել է ընկերությունը եւ որը, հանցագործությունը կատարելու ժամանակ, ընկերության առաջատար բաժնետերն է եղել: Էստոնիայում նույնիսկ խոշոր ընկերությունները մեծապես վերահսկվում են սեփականատերերի (կամ հիմնական բաժնետերերի) կողմից եւ շատ անհավանական է, որ ցածր օղակի գործակալը կհամարձակվի անօրինական գործողությունների դիմել իր նախաձեռնությամբ: Աշխատողները կարող են ներգրավված լինել որպես հանցանքը կատարող անձինք, սակայն ղեկավարները կամ նույնիսկ սեփականատերերը գրեթե միշտ հեղինակներն են: Ավելին, քանի որ խոսքը բարձր մակարդակներում կոռուպցիայի մասին է, պատասխանատու անձանց ներգրավումը շատ ավելի հավանական է, քանի որ քաղաքական գործիչները եւ բարձրաստիճան պաշտոնյաներն ավելի հասանելի են խոշոր գործարարներին, քան շարքային աշխատողներին: Այնուամենայնիվ, խնդիրներ կարող են առաջանալ խոշոր անդրազգային ընկերություններում, որոնք ունեն առավել բարդ կառավարման կարգավորումներ եւ որտեղ բաժնետերերի ներդրումն այդքան էլ անմիջական եւ անձնական չէ: Ուստի, հիմքեր կան հավատալու, որ երկարատեւ ժամկետով, Էստոնիայի համապատասխան պրակտիկ գործունեությամբ զբաղվող անձինք կօգտվեն «պատասխանատու անձի» ավելի լայն սահմանումից, ինչպես նաեւ «վերահսկողության բացակայության» կանոնի ընդունումից:

### **2.3.2. Վերահսկողություն չիրականացնելու համար պատասխանատվությունը**

Ինչպես նշվեց վերելում՝ ՀԿՑ երկրների մեծ մասը վերահսկողություն չիրականացնելն ընդունել են որպես հիմք՝ կորպորատիվ պատասխանատվության համար: «Վերահսկողության բացակայություն» կանոնը սահմանված է այնպիսի միջազգային փաստաթղթերին համապատասխան, ինչպիսիք են՝ Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան<sup>65</sup>, ՏՀԶԿ-ի Արդյունավետ գործելակերպի ուղեցույցը<sup>66</sup> եւ այլն: Հիմնական տեխնիկական տարբերությունն այն է, որ որոշ օրենսդրություններում այս կանոնը սահմանվում է պատասխանատու անձանց միջոցով,<sup>67</sup> մինչդեռ մյուսներում՝ ուղղակիորեն խոսվում է կառավարման եւ վերահսկողության մարմինների մասին:<sup>68</sup>

Սերբիայի օրենսդրության համաձայն, օրինակ, իրավաբանական անձի

պատասխանատվությունը «գոյություն ունի նաեւ, երբ պատասխանատու անձի կողմից վերահսկողության կամ հսկողության բացակայությունը հնարավոր է դարձրել հանցագործության կատարումն՝ ի շահ տվյալ իրավաբանական անձի՝ այն ֆիզիկական անձի կողմից, որը գործում է պատասխանատու անձի վերահսկողության եւ հսկողության ներքո»: Համանման օրինակ կարելի է գտնել Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության օրենսդրությունում, որը սահմանում է, որ իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում իր աշխատակցի կամ ներկայացուցչի կողմից կատարված հանցանքի համար, եթե «հանցանքի կատարումն առաջացել է կառավարման, ղեկավար կամ վերահսկողության մարմնի պարտադիր վերահսկողության բացակայության պատճառով»: Բացի դրանից, եւ սա կազմում է բացառություն, Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության օրենսդրությունը սահմանում է, որ իրավաբանական անձը նաեւ պատասխանատվություն է կրում, եթե կորպորատիվ մարմինները չեն կանխել աշխատակցի կամ ներկայացուցչի հանցավոր գործողությունը:<sup>69</sup>

Դժբախտաբար, երկրներից ոչ մեկը բարեհաջող ձեւով չի կիրառել «վերահսկողության բացակայություն» կանոնը եւ, ուստի, հնարավոր չէ ուսումնասիրել, թե ինչպես կարող է այս կանոնը հաստատվել գործնականում: Այնուամենայնիվ, մի քանի երկրների իշխանություններ հարցաթերթիկներում արտացոլված իրենց պատասխաններում մատնանշել են, որ ընկերությունում պատշաճ զգուշավորության բացակայությունը ցույց տալը բավարար չէ., պետք է ապացուցվի պատասխանատու անձի անգործության եւ ստորադասի կողմից կատարված հանցագործության միջեւ պատճառահետեւանքային կապը:<sup>70</sup>

### **2.3.3. Փոխկապակցված անձի գործողության համար պատասխանատվությունը**

Ռուսաստանի եւ Բուլղարիայի՝ պատժի տեսքով վարչական պատասխանատվության համակարգերը կարող են համարվել այլ անձի արարքի համար պատասխանատվության վրա հիմնված համակարգեր: Ռուսաստանի օրենքը չի սահմանում այն կոնկրետ անձանց շրջանակը, որոնց գործողությունների պատճառով կարող է առաջանալ իրավաբանական անձի պատասխանատվությունը, սակայն սահմանում է որ հանցանքը պետք է կատարված լինի իրավաբանական անձի «անունից կամ ելնելով նրա շահերից» [on behalf or in the interest]:<sup>71</sup> Ուստի, տեսականորեն, յուրաքանչյուր աշխատակցի կողմից կատարված հանցագործություն կարող է վերագրվել իրավաբանական անձին: Այնուամենայնիվ, ՏՀԶԿ-ի ուսումնասիրողների համաձայն՝ դեպքերի մեծ մասը հետապնդվել են, քանի որ համապատասխան դրույթների ընդունումը վերաբերում էր այն իրավիճակներին, երբ պատասխանատվությունն առաջացել է իրավաբանական անձի սեփականատիրոջ կամ ղեկավարի պատճառով:<sup>72</sup>

Բուլղարիայի օրենսդրությունն ավելի կոնկրետ է: Այն բացահայտորեն սահմանում է, որ իրավաբանական անձը ենթակա է պատասխանատվության այն աշխատակցի կողմից կատարված հանցագործության համար, որին իրավաբանական անձը հանձնարարել է որոշակի առաջադրանք, եւ երբ հանցագործությունը կատարվել է այս առաջադրանքի կատարման ընթացքում

կամ դրա հետ կապված: Օրենքը հաշվի չի առնում այն պատճառները, որոնք դրդել են աշխատակցին կատարել այդ հանցագործությունը:<sup>73</sup>

#### **2.3.4. Պատասխանատվությունը՝ կորպորատիվ մեղքի հասկացության միջոցով**

Ռուսիանիսան միակ ՀԿՑ երկիրն է, որտեղ կորպորատիվ պատասխանատվության դոկտրինը մշակվել է կազմակերպական մոտեցման լույսի ներքո: Օրենքը չի սահմանում այն կոնկրետ անձանց շրջանակը, որոնց գործողություններն առաջացնում են իրավաբանական անձի պատասխանատվություն, սակայն այն պահանջում է, որ նրանց «արարքները պետք է կատարված լինեն քրեական օրենքով սահմանված մեղքի դրսեւորմամբ»<sup>74</sup>: Օրենքում չի սահմանվում, թե որն է իրավաբանական անձի մեղքը, սակայն դոկտրինի համաձայն՝ մեղքը վերագրվում է երկու քայլով՝ ոչ միայն ֆիզիկական անձին, այլ նաեւ այն իրավաբանական անձին (նրա մարմիններին), որը հրահրել է, թույլ է տվել, հանդուրժել է հանցավոր վարքագիծը, չի վերահսկել կամ հսկել իր աշխատակիցներին, չի ապահովել պատշաճ ներքին կազմակերպում կամ պատշաճ բարեխղճության քաղաքականություն:<sup>75</sup>

Հարցը, թե արդյոք իրավաբանական անձի հետ որեւէ պաշտոնական կապ չունեցող անձի գործողությունը կարող է իրավաբանական անձի համար առաջացնել պատասխանատվություն, հասցեագրվել էր *Մ.Ռ. [M.R.]* գործում, որտեղ երկու ընկերություններ դատապարտվել էին փողերի լվացմանը եւ կաշառք վերցնելուն հանցակից լինելու համար եւ նրանց նկատմամբ նշանակվել էր պատիժ՝ տուգանքի եւ հարկադիր լուծարման տեսքով: Պարոն *Մ.Ռ.-ն* «Վ» երկրում Բնապահպանության պետական գործակալության տնօրենն էր եւ նրա լիազորությունների մեջ էր մտնում տարածաշրջանում գործող ընկերություններին բնապահպանական թույլտվությունների տրամադրումը: Պարոն *Մ.Ռ.-ն* շարունակաբար ճնշում է գործադրել այս ընկերությունների վրա եւ պայմանավորել թույլտվությունների տրամադրումը կաշառք ստանալով: Ցանկացած ընկերության, որը ցանկանում էր ստանալ բնապահպանական թույլտվություն, հանձնարարվում էր կնքել խորհրդատվական կամ այլ տեսակի ծառայություններ ձեռք բերելու պայմանագրեր մեղադրյալ պարոն *Մ.Ռ.-ի* կողմից վերահսկվող երկու ընկերություններից մեկի՝ *ՄՄ [MM]* կամ *ՄԿ [CW]* ընկերության հետ: Ընդհանուր առմամբ 400 000 եվրոյի չափով անօրինական գումար էր հավաքագրվել այս երկու ընկերությունների բանկային հաշիվներին:

Գործով ներկայացված խնդիրն այն էր, որ հանցագործությունը կատարելու պահին պարոն *Մ.Ռ.-ն* ոչ մի պաշտոնական կապ չունեւ *ՄՄ [MM]* եւ *ՄԿ [CW]* ընկերությունների հետ: Չնայած նա երկու ընկերությունների հիմնադիրն էր, նա քաղաքացիական ծառայող նշանակվելուց հետո ձեւականորեն վաճառել էր այս ընկերություններն իր կողմից վստահված անձանց: Այնուամենայնիվ, նոր սեփականատերերը եւ ղեկավարները պարզապես «դրածո անձինք էին», որոնք պարզապես կատարում էին պարոն

Մ.Ռ.-ի որոշումները: Դատարանը գտավ, որ այս նոր ղեկավարները չէին կարող ենթարկվել քրեական պատասխանատվության, քանի որ նրանք գործել են փաստերի սխալ իմացությամբ: Նրանք չեն իմացել ոչ փողերի ծագման, ոչ էլ պայմանագրերի կնքման պատճառների մասին: Ուստի, այս ընկերությունների դիտավորությունն առկա չէր ընկերությունների օրինական ղեկավարների մոտ, սակայն դիտավորությունն առկա էր փաստացի ղեկավարի մոտ, որը պարոն Մ.Ռ.-ն էր: Այս գործը ցույց է տալիս, որ Ռուսիայի մոդելը բավականին ճկուն է՝ ոչ ստանդարտ դեպքերին արձագանքելու համար եւ, ուստի, կարող է դառնալ օրենքը խախտող կորպորացիաներին վերահսկելու արդյունավետ գործիք: Այս գործը նաեւ օրինակ է, երբ պատասխանատվության է ենթարկվում ընկերության շահառու սեփականատերը:

## **2.4. Իրավաբանական անձի եւ գործակալի ոչ իրավաչափ արարքի միջեւ կապը**

### **«Ճահերի» չափանիշը**

Կորպորատիվ պատասխանատվության բոլոր մոդելները ձգտում են հստակ տարբերություն սահմանել իրավախախտի մասնավոր նպատակներին ծառայող հանցագործությունների եւ ընկերության գործունեությանը ծառայելուն միտված հանցագործությունների միջեւ: Ոչ մի մոդելի համաձայն՝ իրավաբանական անձինք պատասխանատվության չեն ենթարկվում պատասխանատու անձանց կողմից կատարված հանցանքի համար, եթե դրանք կատարվել են տվյալ անձի մասնավոր շահերից ելնելով: Ընկերության եւ իր գործակալի վարքագծի միջեւ կապի տեսակը պետք է սահմանվի օրենքով եւ սպացուցվի գործնականում: Առավել հաճախ այս կապը սահմանվում է «շահերի» չափանիշով, որը նշանակում է, որ ներկայացուցչի արարքները կարող են վերագրվել իրավաբանական անձին, միայն եթե դրանք կատարվել են առնվազն մասամբ՝ իրավաբանական անձի շահերից ելնելով: ՀԿՑ որոշ երկրներ եւս կիրառում են այս չափանիշը՝ կապելու համար գործակալի ոչ իրավաչափ գործողությունները ընկերության գործողությունների հետ: Այս չափանիշի համար ներկայումս կիրառվող ստանդարտ ձեւակերպումներն են՝ «անունից» [on behalf of, in the name of], «շահերից ելնելով» [in the interest of], «օգտին» [for the benefit of], «հանուն» [for the sake of] եւ «ի նպաստ» [in favour of] արտահայտությունները:

ՀԿՑ որոշ երկրներում ընկերության շահերին (կամ օգտին, եւ այլն) վերաբերող արտահայտությունների բացատրությունը չկա օրենսդրության մեջ: Այնուամենայնիվ, բոլոր պետությունների իշխանությունները պնդում են, որ այս հասկացությունները պետք է մեկնաբանվեն ընդհանուր իմաստով, եւ հաստատում են, որ իրավաբանական անձի կողմից ստացված կամ նրա համար նախատեսված օգուտը անպայման չէ, որ դրամական լինի:<sup>76</sup> Նույնը վերաբերում է նաեւ կորպորատիվ գործողությունների հետեւանքով պատճառված վնասին:<sup>77</sup> Հարկ է նշել, որ ոչ մի պետություն, որպես ընդհանուր կանոն չի նախատեսում պահանջ, ըստ որի՝ օգուտը պետք է փաստացիորեն ստացված լինի կամ որ փաստացի վնաս պետք է պատճառվի, որպեսզի հնարավոր լինի պատասխանատվություն կիրառել:<sup>78</sup>

Փոխարենը, այս պահանջն առկա է միայն Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության օրենսդրության մեջ՝ կապված վերահսկողական կանոնի բացակայության հետ:<sup>79</sup>

### **Փոխկապակցված անձի համար նախատեսված օգուտը**

Մի կարելուր հարց, որ պետք է տրվի կորպորատիվ պատասխանատվության ռեժիմը գնահատելիս, այն է, թե ինչ կարգավորումներ են նախատեսվում փոխկապակցված գործարար խմբերի մասով: Արդյունավետ ռեժիմի դեպքում, այն ընկերությունը, որը կաշառակերությամբ է զբաղվում դուստր կամ մայր ընկերության օգտին, պետք է առաջացնի ընկերություններից առնվազն մեկի, եթե ոչ երկուսի, պատասխանատվությունը: ՀԿՑ բազմաթիվ պետությունների իշխանություններ հայտնեցին, որ նման դեպքում իրենց երկրում առնվազն կաշառք տվող ընկերությունը ամենայն հավանականությամբ կենթարկվեր պատասխանատվության:<sup>80</sup> Այնուամենայնիվ, դեպքերի մեծ մասում կարծիքը հիմնված է եղել ընդհանուր իրավական սկզբունքների վրա, քանի որ օրենքն ուղղակիորեն չի կարգավորում այն իրավիճակները, երբ հանցագործությունը կատարվում է փոխկապակցված ընկերության կամ նույնիսկ երրորդ անձի օգտին: Այստեղ հիշատակման արժանի դրական բացառություն է ամրագրված Խորվաթիայի օրենսդրությամբ, որով բացահայտ սահմանվում է, որ իրավաբանական անձի նկատմամբ պետք է կիրառվի պատիժ՝ պատասխանատու անձի կողմից կատարված հանցագործության համար, եթե «իրավաբանական անձն օգուտ է ստացել կամ պետք է օգուտ ստանա անօրինական եկամուտներից՝ իր կամ մեկ այլ անձի համար»:<sup>81</sup>

### **Մեփական պատասխանատվության շրջանակներում գործելը**

ՀԿՑ բազմաթիվ երկրներում «շահերի» չափանիշը միակ առանձնահատկությունն է, որ հաշվի է առնվում, երբ որոշվում է՝ արդյոք գործակալի կողմից կատարված իրավախախտումը կարող է վերագրվել իրավաբանական անձին, թե ոչ: Այնուամենայնիվ, երկու երկրներում՝ Սերբիայում եւ Չեռնոգորիայում, գործում է լրացուցիչ պահանջ, ըստ որի՝ պատասխանատու անձը պետք է գործի իր պարտականությունների շրջանակում:<sup>82</sup> Սերբիայի օրենսդրության համաձայն՝ «իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում այն հանցանքների համար, որոնք կատարվել են իրավաբանական անձի օգտին պատասխանատու անձի կողմից՝ իր պարտականությունների, այն է՝ լիազորությունների շրջանակներում»:<sup>83</sup> Նմանապես, Չեռնոգորիայի օրենսդրությունը սահմանում է, որ «իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում այն պատասխանատու անձի հանցանքի համար, որը գործել է իր լիազորությունների շրջանակներում՝ իրավաբանական անձի անունից՝ իրավաբանական անձի համար որեւէ օգուտ ստանալու մտադրությամբ»:<sup>84</sup> Հստակ է, որ նման կանոնը զգալիորեն սահմանափակում է այն գործողությունների շրջանակը, որոնք կոնկրետ դեպքերում կարող են առաջացնել կորպորատիվ պատասխանատվություն: Խնդիրներ հատկապես կարող են առաջանալ խոշոր ընկերությունների դեպքում, երբ պարտականությունների առանձին ոլորտներ հաճախ վերապահված են կառավարման մարմինների կոնկրետ անդամների:

### **«Անունից գործելը» [Acting on behalf of]**

Իրավաբանական անձի անունից գործելը տարածված չափանիշ է գործակալի ոչ իրավաչափ գործողությունները ընկերության գործունեության հետ կապելու համար: Այնուամենայնիվ, կաշառակերության դեպքում այս չափանիշը չի ապահովում զգալի «հավելյալ արժեք» (օգուտ):<sup>85</sup> Կաշառակերությունը գործարք է, որից երկու կողմերն էլ օգուտ են ակնկալում: Ուստի, ընկերության անունից կաշառելը սովորաբար նույնն է, ինչ ընկերության օգտին կաշառելը: Այնուամենայնիվ, «շահերի» չափանիշի փոխարեն որպես երկրորդանք նախատեսված լինելու դեպքում՝ այս չափանիշը կարող է օգնել վեր հանել այն ընկերությանը, որը կաշառում է մեկ այլ ընկերության օգտին: Եթե իրավաբանական անձի անունից գործելը անկախ հիմք է պատասխանատվության համար, եւ դա ապացուցվում է կոնկրետ գործով, ապա տվյալ գործի շրջանակներում այլեւս Էական չէ, թե ով է օգուտ քաղել հանցագործությունից: Ուստի, երկրները, որոնք ընդունում են «անունից գործել» չափանիշը<sup>86</sup>, առնվազն տեսականորեն ունեն եւս մեկ գործիք՝ բազմապրոֆիլ ընկերություններին (կոնգլոմերատներ) ոչ իրավաչափ գործողությունների համար պատասխանատվության ենթարկելու համար:

Հարկ է նշել, որ «անունից գործելու» չափանիշը կարող է ունենալ հավելյալ արժեք միայն այն դեպքում, եթե նշվում է որպես այլընտրանք «շահերի» չափանիշին: Եթե դատապարտման համար որպես պարտադիր պայման սահմանվեր, որ մեկ գործի շրջանակներում պետք է ապացուցվի, որ այս երկու չափանիշներն էլ բավարարվել են, ապա դա անհիմն կբարդացներ համակարգը: Եթե ընկերությունն օգուտ է քաղում հանցագործությունից, ապա չպետք է Էական լինի այն հանգամանքը, թե արդյոք հանցանք կատարած անձը գործել է այդ կամ այլ ընկերության անունից:

### **Այլ «կապող» չափանիշներ**

Ի լրումն այս տարածված չափանիշների՝ որոշ երկրներ կիրառում են մի շարք ավելի յուրահատուկ չափանիշներ եւս: Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության օրենսդրության համաձայն, օրինակ, պատասխանատու անձի կողմից կատարված հանցանքը կարող է վերագրվել իրավաբանական անձին նաեւ այն դեպքում, եթե կատարվել է «իրավաբանական անձի հաշվին»:<sup>87</sup> Սա նշանակում է, որ արարքը պետք է համարվի իրավաբանական անձի արարք, եթե իրավաբանական անձը կրում է այդ արարքի իրավական կամ նյութական հետեւանքները, օրինակ՝ երբ կաշառակերության համար օգտագործվել են ընկերության փողերը: Կրկին, քանի որ այս չափանիշն անկախ է որպես այլընտրանք, շահառուի հարցն անպայման չէ, որ վերաբերելի լինի կոնկրետ գործի շրջանակներում: Նմանատիպ չափանիշ կիրառվում է նաեւ Բոսնիա եւ Հերցեգովինայում եւ Վրաստանում:<sup>88</sup>

Մեկ այլ չափանիշ կիրառվում է Ռումինիայում: «Շահերից ելնելով» [in the interest of] եւ «անունից» [on behalf of] հասկացությունների հետ միասին, Ռումինիայի օրենքը ներառում է «գործունեության առարկան իրականացնելիս» [in the carrying out of the activity object] արտահայտությունը:<sup>89</sup> Ըստ այս չափանիշի՝ գործակալի արարքի եւ ընկերության գործունեության միջեւ կապը բավականին թույլ է, ուստի այն կարող է հատկապես արժեքավոր լինել այն դեպքերում, երբ

հանցագործությունը կատարվել է ցածր օդակի գործակալի կողմից եւ (կամ) երրորդ անձի օգտին:

Վերջում հարկ է նշել երկու այլ յուրահատուկ չափանիշներ: Խորվաթիայի օրենքը սահմանում է կորպորատիվ պատասխանատվություն այն հանցագործությունների համար, որոնք «խախտում են իրավաբանական անձի որեւէ պարտականություն»: <sup>90</sup> Բուլղարիայում իրավաբանական անձինք պատասխանատվություն են կրում բոլոր այն հանցագործությունների համար, որոնք կատարվել են «կազմակերպված հանցավոր խմբի հրամանով կամ որոշումն իրագործելու համար»: <sup>91</sup>

## **2.5. Տարանջատված պատասխանատվություն**

Կորպորատիվ պատասխանատվության տարանջատված բնույթը կարող է վերլուծվել երկու մակարդակով: Նախեւառաջ, պետք է հարցնել, թե արդյոք իրավախախտում կատարած ֆիզիկական անձի դատապարտումը պարտադիր նախապայման է կորպորատիվ պատասխանատվության համար: Եթե պատասխանը բացասական է, ապա ընթացակարգային տարանջատման հարցը կարող է լրացուցիչ բարձրացվել: Երկրորդ հայեցակետը վերաբերում է նրան, թե արդյոք հնարավոր է իրավաբանական անձի եւ իրավախախտումը կատարողի նկատմամբ նախնական քննությունը եւ դատաքննությունն իրականացնել երկու տարբեր վարույթներով:

### **2.5.1. Տարանջատումը եւ իրավախախտում կատարած ֆիզիկական անձը**

Ընդհանուր առմամբ ընդունված է, որ իրավաբանական անձի պատասխանատվությունը չպետք է բացառի ֆիզիկական անձի պատասխանատվությունը միեւնույն հանցագործության համար եւ հակառակը. անձին պատասխանատվության ենթարկելը չպետք է բացառի ընկերությանը մեղադրանքի առաջադրումը: Արդյունավետ ռեժիմի պարագայում պետք է գործի եւս մեկ լրացուցիչ սկզբունք. անհատ իրավախախտի պատասխանատվությունը չպետք է լինի կորպորատիվ պատասխանատվության նախապայման: Այս կանոնն ինքնըստիներքյան դարձել է միջազգային իրավունքի ստանդարտ եւ ներկայումս այս կամ այն չափով ընդունվում է կորպորատիվ պատասխանատվություն ունեցող շատ համակարգերում: Երբ կորպորատիվ պատասխանատվությունը կախված է հանցանք կատարած ֆիզիկական անձի նկատմամբ բարեհաջող իրականացված քրեական հետապնդումից, իրավաբանական անձանց նկատմամբ արդյունավետ պատժամիջոցների կիրառումն ապահովելու ուղղությամբ ստանձնած միջազգային պարտավորությունները կատարելը դժվար է, եթե ոչ՝ անհնար:

ՏՀԶԿ-ի՝ Արդյունավետ գործելակերպի ուղեցույցում <sup>92</sup> նշվում է, որ իրավաբանական անձանց պատասխանատվությունը չպետք է սահմանափակվի այն դեպքերով, երբ ֆիզիկական անձինք, որոնք կատարել են իրավախախտումները, հետապնդվում են կամ դատապարտվել են: ՏՀԶԿ՝ Կաշառակերության հարցերով աշխատանքային խմբի մոնիթորինգի

հաշվետվությունների համաձայն՝ «Եթե ավյալ ռեժիմը պահանջում է ֆիզիկական անձի դատապարտում եւ պատիժ, ապա այն չի կարող կարգավորել շատ ավելի բարդ կորպորատիվ կառույցների հետ կապված խնդիրները, որոնց հաճախ բնորոշ է ապակենտրոնացված որոշումների կայացման գործընթացը»:<sup>93</sup> Մնան պահանջը նաեւ ուղղակիորեն հակասում է ԿՄԱԿ-ի 26-րդ հոդվածի 3-րդ պարբերությանը կամ հանգեցնում է դրա սխալ մեկնաբանության: Դեռեւս 1988 թվականին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն անդամ պետություններին ուղղված իր առաջարկությունում, որը վերաբերում էր իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ձեռնարկությունների պատասխանատվությանը, նշեց, որ նման ձեռնարկությունները պետք է ենթարկվեն պատասխանատվության՝ անկախ այն հանգամանքից՝ արդյոք ֆիզիկական անձը, որը կատարել է իրավախախտում համարվող գործողությունը կամ անգործությունը, կարող է նույնականացվել, թե ոչ:<sup>94</sup> Նույն ձեռով իր գնահատումներում ԳՐԵԿՈ-ին մտահոգում էր «այն փաստը, որ առաջին հերթին պետք է նույնականացվի իրավախախտում կատարած ֆիզիկական անձը, քանի որ խոշոր կորպորացիաներում այն մեծ հավանականությունը, որ անձինք պատասխանատու կլինեն ավարտված իրավախախտումների միայն մի փոքր մասի համար, ինչպես նաեւ կոլեկտիվ որոշումների կայացման գործընթացները կարող էր անհնար դարձնել կոնկրետ մեկ ֆիզիկական անձի նույնականացումը՝ որպես կասկածյալ եւ (կամ) հետապնդել նրան»:<sup>95</sup>

Այնուամենայնիվ, կանոնը կարող է ունենալ երկու էականորեն տարբեր կիրառություն: Որոշ ռեժիմների դեպքում ենթադրվում է, որ իրավախախտում կատարած ֆիզիկական անձը նույնականացվում է, սակայն չի դատապարտվում եւ չի պատժվում: Մյուս ռեժիմների դեպքում չի պահանջվում անգամ իրավախախտում կատարած անձի նույնականացումը:<sup>96</sup> Վերջին մոտեցումը նաեւ հնարավոր է դարձնում կորպորացիաներին պատասխանատվության ենթարկել այն դեպքերում, երբ քննությամբ պարզվում է, որ հանցագործությունը կատարվել է ընկերության շահերից ելնելով, սակայն հնարավոր չէ հաստատել իրադարձությունների ամբողջ ընթացքը: Այսպիսի իրավիճակ կարող է ի հայտ գալ, օրինակ, երբ հանցավոր որոշում է կայացվել կառավարման խորհրդի կողմից եւ պարզ չէ, թե որ անդամներն են մասնակցել որոշման կայացման գործընթացում: Այնուամենայնիվ, այս մոտեցման առավելությունը ոչ միայն այն է, որ հեշտացնում է քննիչների գործը, այլ նաեւ այն, որ կարող է կիրառվել խոշոր կորպորացիաներում, որտեղ, հաշվի առնելով նրանց բարդ կառուցվածքը եւ լիազորությունների բաշխումը, քաղաքականության ծրագրերը կամ որոշումները հաճախ մի քանի անհատների կոլեկտիվ գործունեության արդյունք են: Ուստի կարող է լինել այնպիսի իրավիճակ, որտեղ քրեական իրավունքի տեսանկյունից կոնկրետ գործ վերլուծելիս որեւէ ֆիզիկական անձ չի որակվի որպես հանցանք կատարող: Բնականաբար այն ռեժիմը, որը թույլ է տալիս ընկերության նկատմամբ հետապնդում իրականացնել նույնիսկ այն դեպքում, երբ չի նույնականացվում անհատ հանցանք կատարողը, շատ ավելի արդյունավետ է նման իրավիճակներում:

Այս համատեքստում լավագույն օրինակը Միացյալ Նահանգների դաշնային դատարանների կողմից մշակված դոկտրինն է: Քանի որ կորպորացիան ընկալվում է որպես դրա գործակալների ամբողջություն, չկա

անհրաժեշտությունն նույնականացնելու հանցանք կատարած որեւէ կոնկրետ անձի: Հետապնդումը պետք է միայն ցույց տա, որ հանցագործությունը կատարվել է ընկերության ներսից ինչ-որ անձի կողմից: Թեւեւ այս կետի վերաբերյալ օրենքը հստակ չէ, այնուամենայնիվ որոշ կորպորացիաներ դատապարտվել են որոշակի հոգեվիճակ (սուբյեկտիվ կողմ) ենթադրող հանցագործությունների համար՝ չնայած առանձին վերցված գործակալներից ոչ մեկը չի ունեցել անհրաժեշտ իմացությունը՝ այդ տարրը բավարարելու համար: Այս գործերով եզրակացվել է, որ ընկերությունում տարբեր անհատներ միասին տիրապետում են անհրաժեշտ իմացության բոլոր տարրերին, եւ համապատասխան միասնական իմացությունը վերագրվել է ընկերությանը:<sup>97</sup>

Գրեթե բոլոր ՀԿՑ երկրներն այս կամ այն կերպ հայտարարում են, որ կորպորատիվ պատասխանատվությունը կախված չէ իրավախախտի պատասխանատվությունից:<sup>98</sup> Սակայն միայն Վրաստանը եւ Լատվիան են կիրառում վերը նշված երկրորդ մոտեցումը: Վրաստանի օրենսդրության համաձայն՝ «իրավաբանական անձը քրեական պատասխանատվության ենթարկվում է նաեւ այն դեպքում, երբ հանցանքը կատարվել է իրավաբանական անձի անունից կամ իրավաբանական անձի միջոցով եւ (կամ) նրա օգտին, անկախ նրանից՝ հանցանք կատարած անձի ինքնությունը նույնականացվել է, թե՛ ոչ»:<sup>99</sup> Լատվիայում իրավաբանական անձի դեմ կարող է հարուցվել առանձին վարույթ, «եթե ի հայտ են եկել հանգամանքներ, որոնք թույլ չեն տալիս հայտնաբերել կամ քրեական պատասխանատվության ենթարկել կոնկրետ ֆիզիկական անձի»:<sup>100</sup> Թեւեւ Լատվիայի իշխանությունները պնդում են, որ այսպիսի իրավիճակները ներառում են այն դեպքերը, երբ հանցանքը կատարվում է «գաղտնի քվեարկությամբ» [by secret vote]<sup>101</sup>, սույն ուսումնասիրության հեղինակները կարծում են, որ այս ձեւակերպումը կարող է ներառել նաեւ ցանկացած այլ դեպք, երբ հանցանքը կատարվում է անհայտ անձի կողմից կամ խմբակային: (Տե՛ս վերը նշված՝ ԱՄՆ դոկտրինը): Լիովին տարանջատված պատասխանատվություն պետք է հնարավոր լինի կիրառել նաեւ Ռուսիայում, որովհետեւ ըստ կազմակերպական մոդելի՝ կորպորատիվ պատասխանատվությունը կապված չէ որեւէ անձի պատասխանատվության հետ:<sup>102</sup>

ՀԿՑ մյուս երկրների օրենքներով՝ այն հավանականությունը, որ այս կամ այն կերպ կպահանջվի անհատ իրավախախտի ինքնության նույնականացում, ավելի մեծ է: Իրավաբանական անձը ենթակա է պատասխանատվության, նույնիսկ եթե անհատ իրավախախտը «ենթակա չէ քրեական պատասխանատվության» (Բոսնիա եւ Հերցեգովինա, Բուլղարիա, Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետություն),<sup>103</sup> «չի դատապարտվել» (Չեռնոգորիա, Ռուսաստան),<sup>104</sup> «մեղավոր չէ» կամ գործել է «իրավաբանական անձի կողմից ուժի կիրառման կամ սպառնալիքի ազդեցությամբ» (Սլովենիա):<sup>105</sup> Այս բոլոր դրույթները հանգեցնում են այն ենթադրությանը, որ պատասխանատու անձի ինքնությունը նույնականացվում է եւ նրա նկատմամբ առնվազն որոշ չափով քննություն է իրականացվում: Հակառակ դեպքում հնարավոր չէր լինի եզրակացություն անել՝ «պատասխանատվության», «դատապարտված լինելու» կամ «մեղավորության» հիմքերի բացակայության վերաբերյալ:

Մերբիայում, Ադրբեջանում եւ Խորվաթիայում տարանջատման սկզբունքը սահմանված է ընթացակարգային կանոնների միջոցով: Մերբիայի օրենսդրության համաձայն՝ իրավաբանական անձը պետք է պատասխանատվության ենթարկվի, «նույնիսկ եթե պատասխանատու անձի դեմ հարուցված քրեական վարույթը կարճվել է կամ մեղադրական եզրակացությունը մերժվել է»:<sup>106</sup> Ճիշտ նույն կերպ, Ադրբեջանի օրենսդրությամբ սահմանվում է, որ «Ֆիզիկական անձի նկատմամբ քրեական հետապնդման դադարեցումը չպետք է խոչընդոտի իրավաբանական անձի նկատմամբ քրեաիրավական միջոցի կիրառումը»:<sup>107</sup> Խորվաթիայում օրենսդրությամբ նախատեսված է իրավաբանական անձի դեմ վարույթ հարուցելու եւ իրականացնելու բացառիկ հնարավորություն «այն դեպքում, երբ պատասխանատու անձի դեմ իրավական կամ որեւէ այլ պատճառով քրեական վարույթ չի կարող հարուցվել կամ իրականացվել»:<sup>108</sup>

Ուկրաինայի քրեական օրենսգրքում՝ կորպորատիվ պատասխանատվության վերաբերյալ նոր դրույթներում դրա մասին ուղղակիորեն չի նշվում, սակայն հստակ է, որ կորպորատիվ պատասխանատվությունը կապված է հանցանքը կատարած «լիազորված անձի» պատասխանատվության հետ: Կիրառված մոդելից («քրեական բնույթի միջոցներ») ինքնին ենթադրվում է, որ անհատական պատասխանատվությունը գերակայում է այդպիսի միջոցների նկատմամբ (սակայն տե՛ս Բուլղարիայի օրինակը, որը ներկայացված է ստորեւ): Ըստ այս մոդելի՝ պահանջվում է, որ լիազորված անձի կողմից «հանցագործությունը կատարվի» իրավաբանական անձի անունից կամ նրա շահերից ելնելով: Քրեական օրենսգրքի 9610-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձի նկատմամբ այդպիսի միջոցներ կիրառելիս դատարանը պետք է, ի թիվս այլոց, հաշվի առնի կատարված հանցագործության ծանրությունը եւ իրավախախտի հանցավոր մտադրության աստիճանը: Քրեական դատավարության օրենսգրքի 214-րդ հոդվածի 8-րդ պարբերության համաձայն՝ իրավաբանական անձի նկատմամբ վարույթն իրականացվում է ֆիզիկական անձի նկատմամբ իրականացվող վարույթի հետ միաժամանակ: Ի վերջո, Քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ իրավաբանական անձի առնչությամբ վարույթն ավարտվում է, եթե ֆիզիկական անձի դեմ քրեական վարույթն ավարտվել է կամ համապատասխան անձն արդարացվել է:<sup>109</sup>

### **2.5.2 Ընթացակարգային տարանջատումը**

Տարանջատված պատասխանատվության սկզբունքն ունի նաեւ ընթացակարգային կողմ: Այս հարցը վերաբերում է նրան, թե արդյոք իրավաբանական անձի գործով քննությունը եւ նրա դատապարտումը կարող են իրականացվել անկախ նրանից, թե ինչ որոշում է կայացվել կամ կայացվելու անհատ իրավախախտի վերաբերյալ: Այս հարցին դրական պատասխանը կորպորատիվ պատասխանատվության ռեժիմը դարձնում է առավել ճկուն, ինչը հատկապես կարեւոր է բարդ գործերում: Քանի որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ներկայացնելու իր պաշտպանությունը, ինչքան ավելի շատ մեղադրյալներ են ներգրավվում քննությանը, այնքան ավելի ժամանակատար է դառնում այն:

Քննությունները, որոնց նպատակն է բարդ կոռուպցիոն համակարգերի բացահայտումը, մշտապես առաջացնում են վաղեմության ժամկետների հետ կապված դժվարություններին բախվելու վտանգ՝ հատկապես այն պատճառով, որ այս համակարգերը կարող են գործել տեւական ժամանակահատվածում, դրանցում կարող են ներգրավված լինել բազմաթիվ անձինք ու ընկերություններ, եւ (կամ) դրանք կարող են հատել միջազգային սահմանները: Օրինակ՝ գրեթե ինը տարի տեւած Հողերի փոխանակման գործով (տե՛ս վերոնշյալ 2.3.1 բաժինը) Էստոնիայի գերագույն դատարանը մեկ ֆիզիկական անձի ազատել է պատասխանատվությունից եւ մեղմացրել է մեկ այլ ֆիզիկական անձի պատիժը, քանի որ գործընթացի տեւողությունը չի համապատասխանել «ողջամիտ ժամկետ» չափորոշչին: Եթե քննիչներին եւ դատախազներին թույլ տրվի ուշադրությունը սեւեռել իրավաբանական անձին եւ ֆիզիկական անձանց (կամ նրանցից մի քանիսին) որպես մեղադրյալ ներգրավել մեկ այլ գործով, ապա դա կարող է խնայել արժեքավոր ժամանակը, եւ, այդպիսով, մեծացնել համակարգի՝ նշանակալից գործերով արդարադատություն իրականացնելու կարողությունը:

Ինչ վերաբերում է ՀԿՑ երկրներին, ապա կարող է առանձնացվել երկու հիմնական մոտեցում: ՀԿՑ երկրների մեծ մասում վարույթի առանձնացումն օրենքով թույլատրվում է, սակայն որպես բացառություն ընդհանուր կանոնից, որով պահանջվում է համատեղ քննություն եւ մեկ ընդհանուր դատավճռի կայացում: Օրինակ՝ «Հանցանքների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Սերբիայի օրենքի 35-րդ հոդվածով նախատեսվում է հետեւյալը.

Քրեական վարույթը, որպես կանոն, իրավաբանական անձի եւ պատասխանատու անձի դեմ հարուցվում եւ իրականացվում է համատեղ, եւ կայացվում է ընդհանուր դատավճիռ:

Եթե օրենքով սահմանված պատճառների առկայության հիմքով հնարավոր չէ քրեական վարույթ հարուցել եւ իրականացնել պատասխանատու անձի դեմ, ապա վարույթը կարող է հարուցվել եւ իրականացվել միայն իրավաբանական անձի դեմ:<sup>110</sup>

Առավել մանրամասն է Բուլղարիայում գործող կարգավորումը, ըստ որի՝ ներումը, ժամկետները լրանալը, մահը եւ քրոնիկ հոգեկան հիվանդությունն օրենքով սպառիչ կերպով նշվում են որպես վարույթի առանձնացման հիմքեր: Ճիշտ նույն կերպ, Լատվիայում համապատասխան դրույթով նախատեսվում է հետեւյալը.

Վարույթը վարող անձը որոշման հիման վրա կարող է առանձնացնել վարույթը՝ իրաբանական անձի նկատմամբ հարկադրանքի միջոցներն առանձին նյութերով կիրառելու համար՝ հետեւյալ դեպքերում.

- 1) ֆիզիկական անձի դեմ քրեական վարույթը դադարեցվել է պատասխանատվությունից ազատման հետ կապ չունեցող պատճառներով,
- 2) եթե ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք թույլ չեն տալիս հայտնաբերել կամ քրեական

պատասխանատվության ենթարկել կոնկրետ ֆիզիկական անձի կամ եթե քրեական գործի ուղարկումը դատարան մոտ ապագայում (ողջամիտ ժամկետում) հնարավոր չէ օրյեկտիվ պատճառներով,

3) իր պաշտպանությունն իրականացնելու իրավունք ունեցող ֆիզիկական անձի հետ քրեաիրավական հարաբերությունները ժամանակին լուծելու նկատառումներից ելնելով,

4) այդպիսի պահանջ է ներկայացվում իրավաբանական անձի ներկայացուցչի կողմից:

Մյուս երկրներում օրենսդրությամբ որևէ ընդհանուր կամ հատուկ կանոն չի նախատեսվում: Օրինակ՝ Էստոնիայում Քրեական օրենսգրքում, ինչպես նաև Քրեական դատավարության օրենսգրքում որևէ դրույթ չի նախատեսվում այն հարցի վերաբերյալ, թե երբ կարելի է եւ արդյոք ընդհանրապես հնարավոր է կորպորացիայի նկատմամբ հետապնդում իրականացնել անհատ իրավախախտից առանձին:<sup>112</sup> Այնուամենայնիվ, Էստոնիայի իշխանությունները հաստատել են, որ եղել է առնվազն մեկ քրեական քննություն, որի շրջանակներում որոշակի փուլում դատարանի կողմից թույլատրվել է կիրառել հատուկ քննչական մեթոդներ, որոնք վերաբերում էին միայն գործով կասկածյալ իրավաբանական անձին:

Նշված հարցի կապակցությամբ պետք է հստակեցվի մի կարելուր հանգամանք: Կարծիք կա, որ տրամաբանորեն հնարավոր չէ քննչական միջոցները կիրառել անմիջապես իրավաբանական անձի նկատմամբ, քանի որ կորպորատիվ մարմինն ինքնին չի կարող խոսել, մտածել կամ գործել:<sup>113</sup> Այս պնդումը կարող է ճիշտ լինել որոշ ավանդական քննչական միջոցների առնչությամբ, սակայն անշուշտ ճիշտ չէ հատուկ քննչական մեթոդների դեպքում: Օրինակ՝ գործով կասկածյալ ընկերության գրասենյակը կարող է հսկողության տակ առնվել, ընկերության անունով գրանցված հեռախոսները կարող են գաղտնալսվել, ընկերությանն ուղարկվող նամակները կարող են գաղտնի բացվել եւ, ի վերջո, գաղտնի գործակալը կարող է ակնհայտորեն միայն մուտք գործել ընկերություն կամ ֆիզիկական անձանց մեկ այլ միավորում: Այսպիսով, հատուկ քննչական մեթոդները ֆիզիկապես հնարավոր է կիրառել ուղղակիորեն եւ միայն իրավաբանական անձի նկատմամբ, եթե միայն օրենքով դա թույլատրվում է: Հարցաշարում ներկայացված պատասխանների միջոցով գրեթե բոլոր ՀԿՑ երկրները հայտնել են, որ արդյունավետ բոլոր քննչական միջոցները կարող են առանձին կիրառվել իրավաբանական անձանց նկատմամբ:<sup>114</sup>

### **3. Կորպորատիվ պատասխանատվության գործողության ոլորտը**

#### **3.1. Անձինք, որոնց վրա տարածվում է կորպորատիվ պատասխանատվությունը**

##### ***Իրավասուրբյեկտությանը չօժտված անձինք***

Իրավական համակարգերի մեծ մասում «իրավաբանական անձ» հասկացությունը սահմանված է քաղաքացիական կամ առևտրային օրենսդրությամբ, իսկ քրեական իրավունքում այդ նույն սահմանումն օգտագործվում է կորպորատիվ պատասխանատվության գործողության ոլորտը սահմանելու համար: ՀԿՑ երկրները նույնպես կիրառում են այդ մոտեցումը. կորպորատիվ պատասխանատվությունը տարածվում է միայն այն անձանց վրա, որոնք համարվում են իրավաբանական անձինք, մինչդեռ համապատասխան սահմանումը տրվում է իրավունքի մեկ այլ ճյուղում: Այնուամենայնիվ, այլ մոտեցում է գործում Չեռնոգորիայում: Կորպորատիվ պատասխանատվության ենթակա անձանց ցանկը նախատեսված է «Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մասին» օրենքով: Օրենքի 4.1 հոդվածի համաձայն՝

«իրավաբանական անձ» նշանակում է ընկերություն, օտարերկրյա ընկերություն եւ օտարերկրյա ընկերության մասնաճյուղ, պետական ձեռնարկություն, պետական հաստատություն կամ տեղական եւ օտարերկրյա հասարակական կազմակերպություն, ներդրումային ֆոնդ, ցանկացած այլ ֆոնդ (բացի բացառապես պետական լիազորություններ իրականացնող ֆոնդից), սպորտային կազմակերպություն, քաղաքական կուսակցություն, ինչպես նաեւ ցանկացած այլ միավորում կամ կազմակերպություն, որը շարունակաբար կամ ժամանակ առ ժամանակ ստանում կամ ձեռք է բերում ակտիվներ եւ տնօրինում է դրանք իր գործունեության շրջանակներում:

Սահմանման վերջին մասը հստակորեն ցույց է տալիս, որ «իրավաբանական անձ» հասկացությունը քրեական իրավունքի համատեքստում ավելի լայն է, քան «իրավաբանական անձ» ընդհանուր հասկացությունը: Կորպորատիվ պատասխանատվության գործողության ոլորտն ավելի լայն է, քան «իրավաբանական անձ» հասկացության գործողության ոլորտը նաեւ Լատվիայում: Թեեւ քրեական իրավունքում «իրավաբանական անձ» հասկացության որեւէ կոնկրետ սահմանում չկա, Լատվիայի օրենքով հստակորեն սահմանվում է, որ հարկադրանքի միջոցները կարող են կիրառվել ոչ միայն իրավաբանական անձանց, այլեւ ընկերակցությունների, այսինքն՝ իրավասուրբյեկտությանը չօժտված՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունների նկատմամբ:<sup>115</sup>

Այսպիսի իրավաբանական անձինք կամ միավորումներն օժտված են իրավական գործողություններ իրականացնելու իրավունակությամբ, նույնիսկ եթե նրանք ձեւականորեն իրավաբանական անձի կարգավիճակ չունեն: Քանի որ այդպիսով նրանք կարող են մասնակցել կոռուպցիոն գործարքների կամ օգտագործվել դրանց համար, նրանց վրա պետք է տարածվեն կորպորատիվ

պատասխանատվության վերաբերյալ դրույթները:

### **Հանրային իրավունքի սուբյեկտները**

Մի շարք իրավական համակարգերում պարտադիր չէ, որ քրեական իրավունքը կիրառվի իրավաբանական անձանց բոլոր տեսակների նկատմամբ: Սովորաբար պետությունը, նրա վարչատարածքային միավորները եւ մյուս պետական մարմինները ենթակա չեն քրեական պատասխանատվության: Այս մոտեցումը գերակայում է նաեւ ՀԿՑ երկրների շրջանում, քանի որ դրանցից գրեթե բոլորի օրենսդրությամբ սահմանվում է, որ կորպորատիվ պատասխանատվությունը չի տարածվում պետության, առանձին շրջանների, համայնքների եւ մյուս պետական մարմինների վրա: Մի քանի երկրներում միջազգային կազմակերպությունները<sup>116</sup> կամ հանրային գործառույթներ իրականացնող իրավաբանական անձինք<sup>117</sup> նույնպես ներառվում են այս ցանկում: Խորվաթիայում եւ Մակեդոնիայի Նախկին Հարավարևելյան Հանրապետությունում տեղական կառավարման մարմիններին վերաբերող բացառությունը տարածվում է միայն դրանց լիազորությունների շրջանակներում կատարված իրավախախտումների վրա: Եթե իրավախախտումը կատարվել է դրանց լիազորությունների չարաշահմամբ, ապա տեղական կառավարման մարմինները եւ դրանց ստորաբաժանումները ենթակա են պատասխանատվության՝ այնպես, ինչպես ցանկացած այլ իրավաբանական անձ: Չեռնոգորիայի օրենսդրությամբ նույն սկզբունքն առավել ընդհանուր է սահմանվում: «Պետական լիազորություններով օժտված իրավաբանական անձը չպետք է պատասխանատվություն կրի այդպիսի լիազորությունների իրականացման շրջանակներում կատարված հանցանքի համար»:<sup>118</sup>

Բավականին տարբեր է Վրաստանի օրենսդրությունը: Վրաստանի քրեական օրենսգրքի 1071-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա են առեւտրային եւ ոչ առեւտրային իրավաբանական անձինք եւ նրանց իրավահաջորդները: Դատական նախադեպի միջոցով հետազայում պետք է հստակեցվի, թե արդյոք այս դրույթով թույլատրվում է պետության կենտրոնական կառավարման մարմինների նկատմամբ դատական հետապնդում իրականացնել:

### **Մասնավոր իրավունքի սուբյեկտները**

Իրավաբանական անձի սահմանումն ու դասակարգումը տարբեր երկրներում տարբեր են: Սակայն ՀԿՑ բոլոր երկրներում այս կամ այն կերպ տարանջատվում են՝

- շահույթ հետապնդող անձինք (ընկերությունները) եւ շահույթ չհետապնդող կազմակերպությունները,
- մասնավոր ընկերությունները եւ պետության կամ տեղական կառավարման մարմինների կողմից տնօրինվող ընկերությունները,

- տեղական եւ օտարերկրյա ընկերությունները:

Պետք է նշել, որ բոլոր ՀԿՑ երկրներում, բացի Սերբիայից, ընդլայնվել է կորպորատիվ պատասխանատվության գործողության ոլորտը՝ տարածվելով նաեւ այն առեւտրային ընկերությունների վրա, որոնք պատկանում են պետությանը, առանձին շրջանին կամ տեղական կառավարման մարմիններին կամ տնօրինվում են դրանց կողմից: Նույնը վերաբերում է նաեւ օտարերկրյա ընկերություններին<sup>119</sup> եւ շահույթ չհետապնդող կազմակերպություններին: Լատվիայում *ԳԱՄԱ-ի* [GAMA] գործը (տե՛ս վերոնշյալ 1.3 բաժինը) ցույց է տալիս, որ օտարերկրյա ընկերությունների նկատմամբ գործնականում կարող է հաջողությամբ քննություն իրականացվել: Այդ գործով պատժամիջոց է կիրառվել միջազգային գործառնություններ իրականացնող խոշոր ընկերության, ինչպես նաեւ նրա՝ Թուրքիայի քաղաքացի հանդիսացող տարածաշրջանային ներկայացուցչի նկատմամբ: Խորվաթիայում *Ֆիմի Մեդիայի* [Fimi Media] գործը (տե՛ս վերոնշյալ 2.3.1 բաժինը) ցույց է տալիս շահույթ չհետապնդող կազմակերպությունները ներառելու կարելոթությունը: Այդ գործով քաղաքական կուսակցության նկատմամբ հետապնդում է իրականացվել՝ պետական միջոցների եւ որպես նվիրաբերություն հավաքված գումարների յուրացման համար: Քաղաքական կուսակցությունների նկատմամբ հետապնդում է իրականացվել, եւ դրանք դատապարտվել են նաեւ Էստոնիայում ու Լիտվայում:<sup>120</sup>

### ***Իրավաբանական անձի վերակազմակերպումից հետո իրավահաջորդ հանդիսացող անձինք***

Կորպորատիվ պատասխանատվության ռեժիմ սահմանելիս պետք է ուշադրություն դարձնել մեկ այլ կարելոր հարցի, այն է՝ ինչպես են այդ ռեժիմով կարգավորվելու իրավաբանական անձի վերակազմակերպման հետ կապված հարցերը: Արդյունավետ կորպորատիվ պատասխանատվության համակարգում կորպորատիվ գործարքները, ինչպես օրինակ՝ մի ընկերության միաձուլումը մեկ այլ ընկերության հետ կամ ընկերության կազմից մեկ այլ ընկերության առանձնանալն ու որպես նոր անձ վերակազմակերպվելը չպետք է հնարավորություն տան անձին խուսափելու պատասխանատվությունից: Ռումինիայի օրենսդրությունը լավ օրինակ է, թե ինչպես կարելի է խուսափել անբարեխիղճ վերակազմակերպումից: Մասնավորապես, Ռումինիայի օրենսդրությամբ թույլատրվում է գործի նախնական քննության կամ դատաքննության ընթացքում իրաբանական անձի նկատմամբ կիրառել հետեւյալ կանխարգելիչ միջոցները՝

- իրավաբանական անձի կազմալուծման կամ լուծարման կասեցումը,
- իրավաբանական անձի միաձուլման կամ բաժանման կասեցումը,
- ակտիվների հետ կապված այնպիսի հատուկ գործարքների արգելումը, որոնք կարող են նվազեցնել իրավաբանական անձի ակտիվները,
- որոշակի իրավական ակտեր կնքելու արգելքը,

- որոշակի գործողությունների, ինչպես օրինակ՝ նախկինում կատարված իրավախախտման պատճառ դարձած գործողությունների արգելումը:<sup>121</sup>

Այսպիսի միջոցների անհրաժեշտությունը կարող է վերլուծվել *Հողերի փոխանակման* գործի օրինակով: Նշված գործով խոշոր շինարարական ընկերությունը դատապարտվել է կաշառակերության համար եւ պատժվել է տուգանքով՝ 798 000 եվրոյի չափով: (Տե՛ս վերոնշյալ 2.3.1 բաժինը): Էստոնիայում, որտեղ սկիզբ է առել գործը, օրենսդրությամբ որեւէ դրույթ չի նախատեսվում գործի քննության մեջ ներգրավված իրավաբանական անձի վերակազմակերպման հետեւանքների վերաբերյալ: *Հողերի փոխանակման* գործով քննությունը հրապարակային է դարձել 2006 թվականի հոկտեմբերին, երբ *ԱՄ Մերկո Էհիտուս* ընկերության գլխամասում կատարվել է խուզարկություն: 2008 թվականի մարտին ղեկավարությունը որոշել է վերակազմակերպել ընկերությունը՝ տնտեսական գործունեության եւ քրեական գործի քննության տարանջատման նպատակով: Հիմնվել են երկու նոր ընկերություններ՝ *ԱՄ Մերկո Էհիտուս* եւ *ԱՄ Յարվեվանա* [AS Järvevana]: Տնտեսական բոլոր գործողությունների իրականացումը եւ ակտիվների մեծ մասը փոխանցվեցին *ԱՄ Մերկո Էհիտուսին*, իսկ *ԱՄ Յարվեվանան* ստացավ 17.5 միլիոն եվրո (օրենքով սահմանված՝ տուգանքի առավելագույն չափից ավելի մեծ գումար)՝ տուգանքները վճարելու եւ քրեական գործի արդյունքում առաջացած մյուս ծախսերը հոգայու համար: Քանի որ երկու ընկերություններն էլ մնացել են արժեթղթերի շուկայում գրանցված, ամենայն հավանականությամբ *ԱՄ Յարվեվանան* դարձել է քրեական գործով հետապնդվող առաջին ընկերությունը, որը գրանցված է եղել բորսայում: 2008 թվականին «նոր» *ԱՄ Մերկո Էհիտուսը* փորձեց մասնակցել պետական գնումների գործընթացին, սակայն նրա մրցույթի հայտը մերժվեց: Ընկերությունը հաջողությամբ վիճարկեց որոշումը: Վարչական դատարանը գտավ, որ վերակազմակերպման արդյունքում ստեղծված ընկերությունը նոր ընկերություն է, որն իրավունք ունի մասնակցելու պետական գնումների գործընթացին: Քրեական գործն ավարտվեց 2014 թվականի հունիսին, երբ *ԱՄ Յարվեվանան* Գերագույն դատարանի քրեական իրավունքի պալատի դատավճռով վերջնականապես դատապարտվեց:

Այս վերակազմակերպման միջոցով ի՞նչ արդյունքի հասավ *ԱՄ Մերկո Էհիտուսը* (սկզբնական ընկերությունը): Այն չկարողացավ խուսափել հիմնական պատժից՝ 798 000 եվրոյի չափով տուգանքից: Այս գումարը գանձվել է 2008 թվականին: Ընկերությունը նաեւ չկարողացավ վերականգնել իր ապրանքանիշի հեղինակությունը, որովհետեւ քրեական գործը դեռեւս փոխկապակցված էր «Մերկո» անվանման հետ: Այնուամենայնիվ այն պահպանեց պետական գնումների գործընթացին մասնակցելու իր իրավունքը, որը երկարաժամկետ կտրվածքով հավանաբար ավելի կարելու է, քան միանվագ դրամական պատիժը: Վերակազմակերպումն ամենայն հավանականությամբ նաեւ կայունացնող ազդեցություն ունեցավ. վերակազմակերպումից հետո բաժնետերերը, ներդրողները եւ հաճախորդները կարող էին վստահ լինել, որ վերջնական տուգանքը չէր ազդի վերակազմակերպված ընկերության ակտիվների վրա:

### **3.2. Իրավախախտումները, որոնց վրա տարածվում է կորպորատիվ պատասխանատվությունը**

Կորպորատիվ պատասխանատվության ռեժիմները տարբերակող մեկ այլ կարեւոր հանգամանք է պատասխանատվության հատուկ կամ ընդհանուր բնույթը, այսինքն՝ պատասխանատվությունը սահմանափակվում է միայն հատուկ նշված իրավախախտումներով, թե վերաբերում է ցանկացած իրավախախտման: Ընդհանուր պատասխանատվության մոտեցումը գերակայում է ընդհանուր իրավունքի երկրներում, մինչդեռ քաղաքացիական իրավունքի երկրները պատմականորեն ձգտել են կիրառել հատուկ պատասխանատվության մոտեցումը:<sup>122</sup> Թեև այս երկրորդ մոտեցումը գերակայում է ՀԿՑ երկրների մեծ մասում, սակայն հինգ երկրներում՝ Բոսնիա եւ Հերցեգովինայում, Խորվաթիայում, Չեռնոգորիայում, Ռումինիայում եւ Սերբիայում, կորպորատիվ պատասխանատվությունը կարող է ծագել քրեական օրենսգրքով նախատեսված բոլոր իրավախախտումների համար: Բավականին տարբեր է Բուլղարիայի օրենսդրությունը: Որպես ընդհանուր կանոն՝ կորպորացիաները պատասխանատվություն են կրում միայն սահմանափակ թվով հանցագործությունների համար, սակայն իրավաբանական անձը կարող է պատասխանատվություն կրել ցանկացած հանցագործության համար, որը կատարվել է կազմակերպված հանցավոր խմբի հրամաններով կամ ի կատարումն այդ խմբի որոշման:<sup>123</sup>

Ինչ վերաբերում է հատուկ պատասխանատվության մոտեցումը կիրառող երկրներին, ապա իրավաբանական անձանց վերագրվող իրավախախտումների թիվը տարբեր երկրներում տարբեր է: Ուկրաինայում եւ Բուլղարիայում, օրինակ, այդ թիվը հարաբերականորեն փոքր է, մինչդեռ Լիտվայում, ընդհակառակը, իրավաբանական անձը կարող է պատասխանատվություն կրել յուրաքանչյուր երկրորդ հանցագործության համար: Այնուամենայնիվ, ՀԿՑ բոլոր երկրներում կորպորատիվ պատասխանատվությունը տարածվում է կաշառակերության եւ այլ կոռուպցիոն իրավախախտումների վրա, ինչպես օրինակ՝ ազդեցության չարաշահման, փողերի լվացման եւ այլն: Պասիվ կաշառակերության համար պատասխանատվությունից ազատման մասով վերապահում նախատեսվում է միայն երկու ՀԿՑ երկրներում՝ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետությունում եւ Սլովենիայում. Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետությունում իրավաբանական անձը պատասխանատվության չի ենթարկվում ազդեցության չարաշահման համար:<sup>124</sup>

## **4. Կորպորատիվ պատասխանատվությունը գործնականում**

### **4.1. Ընդհանուր գործելակերպը**

Օրենքն օրենք է դառնում դատարանի դահլիճում, իսկ մինչ այդ այն ընդամենը թղթի վրա գրված բառերի կույտ է: Հետեւաբար, սույն ուսումնասիրությունը չի կարող չներառել գործնականում կորպորատիվ պատասխանատվության կիրառման վերաբերյալ փոքրիկ վիճակագրական վերլուծություն: Բացարձակ թվերն ուղղակիորեն համեմատելի չեն, քանի որ տարբեր ժամանակահատվածներում գործել են կորպորատիվ պատասխանատվության տարբեր ռեժիմներ: Երկրները նաեւ տարբերվում են իրենց մեծությամբ եւ տարածքային կառուցվածքով: Այնուամենայնիվ, հնարավոր է կատարել որոշ ընդհանրացումներ եւ եզրահանգում:

Մի կողմ թողնելով այն երկրները, որոնցում կորպորատիվ պատասխանատվության ռեժիմը բացարձակապես նոր է (Ադրբեջան եւ Ուկրաինա)՝ ՀԿՑ երկրները կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խմբում իրավաբանական անձանց դատապարտումը դարձել է կամ դառնում է դատական պրակտիկայի անբաժանելի մասը (Էստոնիա, Լիտվա, Չեռնոգորիա, Ռումինիա եւ Սլովենիա): Երկրների երկրորդ խումբը որոշակի փորձ ունի (Բուլղարիա եւ Սերբիա), իսկ երրորդ խումբը նոր է սկսել գործելակերպի կիրառումը (Վրաստան եւ Լատվիա): (Տե՛ս ստորեւ ներկայացված 3-րդ աղյուսակը):<sup>125</sup> Մեղադրական եզրակացությունների թվի, ինչպես նաեւ այն փաստի հիման վրա, որ բազմաթիվ իրավաբանական անձինք դատարանի կողմից արդարացվել են, կարելի է ենթադրել, որ կորպորատիվ պատասխանատվությունը դարձել է ընդունված նորմ: Արդարացման դեպքերը ցույց են տալիս, որ դատախազները պատրաստ են ռիսկի դիմել: Նոր եւ անձանոթ միջավայրում սովորաբար նման բան տեղի չի ունենում:

**Աղյուսակ 3. Իրավաբանական անձինք, որոնց նկատմամբ հետապնդում է իրականացվել 2010-ից 2013 թվականների միջև ընկած ժամանակահատվածում**

Երկիրը	Մեղադրված	Դատապարտված	Արդարացված	Բնակչությունը՝ միլիոն	Կորպորատիվ պատասխանատվությունը՝ սկսած
Բուլղարիա <sup>126</sup>	38	տվյալներ չկան	տվյալներ չկան	7.42	2005 թվականից
Էստոնիա	200	246	17	1.33	2002 թվականից
Վրաստան	2	2	0	4.93	2006 թվականից
Լատվիա	11	տվյալներ չկան	0	2.24	2005 թվականից
Լիտվա	316	178	21	3.33	2002 թվականից
Չեռնոգորիա <sup>127</sup>	81	50	տվյալներ չկան	0.63	2007 թվականից
Ռումինիա	463	տվյալներ չկան	տվյալներ չկան	21.43	2006 թվականից
Սերբիա	30	տվյալներ չկան	տվյալներ չկան	7.38	2008 թվականից
Սլովենիա	533	82	19	2.03	1999 թվականից
<b>Ընդամենը</b>	<b>1674</b>	<b>558</b>	<b>57</b>		

Հեշտ չէ բացատրելը, թե ինչու որոշ երկրներ իրենց կորպորատիվ պատասխանատվության ռեժիմներն առավել ակտիվորեն են կիրառել, քան մյուսները: Փոխադարձ կապ կարելի է տեսնել գործերի թվի եւ այն ժամանակահատվածի միջև, որի ընթացքում կորպորատիվ պատասխանատվության ռեժիմը գործել է: Էստոնիան, Լիտվան եւ Սլովենիան, որոնց դեպքում գործերի թիվը մեծ է, նաեւ եղել են տարածաշրջանի առաջին պետությունները, որոնք այս դարասկզբին ընդունել են կորպորատիվ քրեական պատասխանատվության հայեցակարգը, ընդ որում՝ Սլովենիան սկսել է այն կիրառել 1999 թվականից: Մինչդեռ Չեռնոգորիայում, որտեղ օրենքն ընդունվել է 2006 թվականին, համապատասխան ժամանակահատվածում կազմվել է 81 մեղադրական եզրակացություն: Սա բարձր ցուցանիշ է՝ մանավանդ հաշվի առնելով այն, որ այս երկիրը մյուսների համեմատ զգալիորեն ավելի փոքր է: Դրան հակառակ՝ Լատվիայում 2010-2013 թվականների միջև ընկած ժամանակահատվածում կազմվել է ընդամենը 11 մեղադրական եզրակացություն, մինչդեռ օրենքն ուժի մեջ է եղել 2005 թվականից: Երկրի մեծությունը, որքան էլ անսպասելի է, կարելի է համարել մեկ այլ կարեւոր գործոն: Ավելի փոքր երկրների իշխանությունները, կարծես, նոր օրենքներին ավելի արագ են հարմարվում: Հնարավոր բացատրություններից մեկն այն է, որ փոքր երկրներում իշխանություններն ավելի հեշտ կառավարելի են (ավելի քիչ քննարկումներ, ավելի փոքր թվով մարդկանց վերապատրաստում եւ այլն):

Ուսումնասիրության ընթացքում երկրներին հարցադրում է ներկայացվել՝ արդյոք կորպորատիվ պատասխանատվության համակարգը ներդրվելուց հետո իրավապահ մարմինների աշխատակիցներն ու դատական իշխանության ներկայացուցիչներն անցել են վերապատրաստում: Բոլոր պետությունները, բացի Վրաստանից, դրական պատասխան են տվել այդ հարցին եւ սպասուհի ընդհանուր տվյալներ են ներկայացրել քննիչների ու դատախազների, ինչպես նաեւ դատավորների համար կազմակերպված վերապատրաստման դասընթացների վերաբերյալ: Գրեթե բոլոր երկրներում առկա են նաեւ ուսուցման նյութեր, ինչպես օրինակ՝ մեկնաբանություններ, պաշտոնական ուղեցույցներ եւ գիտական աշխատանքներ: Դրանից հետեւում է, որ

վերապատրաստման դասընթացները եւ ուղեցույցներն այն կարելորագույն գործոնները չեն, որոնք ոստիկաններին ու դատախազներին կիրախուսեն թիրախի տակ առնել իրավաբանական անձանց: Բավարար հիմքեր կան կարծելու, որ պետք է առկա լինի որեւէ արտաքին գործոն, որը կստիպի մարդկանց փոխել իրենց համոզմունքներն ու սովորությունները կամ, ինչպես արտահայտվում են Ռուսիայի իշխանությունները, ձերբազատվել դատախազների՝ ֆիզիկական անձանց նույնականացնելու, նրանց նկատմամբ քննություն եւ հետապնդում իրականացնելու ռեֆլեքսից:<sup>128</sup> Կիրառման բարձր ցուցանիշներ ունեցող երկրների վերաբերյալ առավել մանրամասն ուսումնասիրություն է անհրաժեշտ, որպեսզի հստակորեն մատնանշվեն այն գործոնները, որոնք այդ երկրներում խթանել են ակտիվ կիրառումը:

#### **4.2. Կաշառակերության գործով հետապնդում իրականացնելը**

Ընդհանուր ցուցանիշները ցույց են տալիս, որ տարբեր երկրներում կիրառման մակարդակը տարբեր է, սակայն արդյունքում կարելի է եզրակացնել, որ ՀԿՑ տարածաշրջանում կորպորատիվ պատասխանատվությունը միայն թղթի վրա գրված չէ: Սակայն, ցավոք, նույնը չի կարելի ասել կոռուպցիոն իրավախախտումների, մասնավորապես՝ կաշառակերության վերաբերյալ: Այդ առումով իրավիճակը հիասթափեցնող է նաեւ այն երկրներում, որտեղ ընդհանուր պատկերը գոհացուցիչ է: (Տե՛ս ստորեւ ներկայացված 4-րդ աղյուսակը): Միայն Էստոնիայում է, որ կաշառակերության գործով հետապնդման ենթարկված իրավաբանական անձանց թիվը համեմատական է կորպորատիվ հետապնդումների ընդհանուր ցուցանիշներին: Այդ երկրում 2010-2013 թվականների միջեւ ընկած ժամանակահատվածում գործով որպես մեղադրյալ ներգրավված ընկերությունների մեկ քառորդը մեղադրվել է կաշառակերության մեջ: Համեմատության համար պետք է նշել, որ Սլովենիայում 533 իրավաբանական անձանցից միայն երեքն են (այսինքն՝ 0.6%) մեղադրվել կաշառակերության մեջ: Լիտվայում եւ Ռուսիայում տոկոսով արտահայտված համապատասխան ցուցանիշները եղել են 2.2% եւ 3%: Այս ցուցանիշները հստակորեն ցույց են տալիս, որ կոռուպցիայի առնչությամբ կորպորատիվ պատասխանատվության ռեժիմի կիրառումը կրում է բավականին էպիզոդային բնույթ:

**Աղյուսակ 4. Իրավաբանական անձինք, որոնց նկատմամբ կաշառակերության գործով հետապնդում է իրականացվել 2010-ից 2013 թվականների միջև ընկած ժամանակահատվածում**<sup>129</sup>

Երկիրը	Մեղադրված	Դատապարտված	Արդարացված
Բոսնիա եւ Հերցեգովինա	0	0	0
Խորվաթիա	1	0	0
Էստոնիա	27	16	3
Լատվիա	2	1	0
Լիտվա	7	7	0
Ռումինիա <sup>130</sup>	14	1	0
Սերբիա	1	0	0
Սլովենիա	3	0	0
<b>Ընդամենը</b>	<b>55</b>	<b>25</b>	<b>3</b>

Կաշառք տվող կորպորացիաներին բացահայտել եւ նրանց նկատմամբ հետապնդում իրականացնել չկարողանալը կարելի է հասկանալ այն դեպքում, երբ ցածր է կոռուպցիայի բացահայտման ընդհանուր կարողությունների մակարդակը: Սակայն սա այդ դեպքը չէ: Ինչպես երևում է ստորև ներկայացված 5-րդ աղյուսակից, կաշառակերության համար դատապարտված ֆիզիկական անձանց թիվը տարածաշրջանի մի շարք երկրներում զգալիորեն բարձր է: Հետեւաբար գոյություն ունեն որոշ «իռացիոնալ» պատճառներ, որ կոռուպցիայի դեմ պայքարի համար պատասխանատու քննիչներն ու դատախազները կաշառք տվող կորպորացիաների դեպքում հաջողությամբ չեն իրականացնում իրենց առջև դրված խնդիրները: Սույն ուսումնասիրության միջոցով, որն առավելապես հիմնված է երկրորդային վերլուծության վրա, հնարավոր չի եղել բացահայտել այս պատճառները:

**Աղյուսակ 5. Ֆիզիկական անձինք, որոնց նկատմամբ կաշառակերության գործով հետապնդում է իրականացվել 2010-ից 2013 թվականների միջև ընկած ժամանակահատվածում**

Երկիրը	Մեղադրված	Դատապարտված	Արդարացված
Բոսնիա եւ Հերցեգովինա	27	17	6
Էստոնիա	206	263	13
Լատվիա	603	222	0
Լիտվա	2469	2064	29
Ռումինիա	1742	1071	108
Սլովենիա	140	56	24

**5. Պատժամիջոցների կիրառումը**

Միջազգային իրավունքով չի սահմանվում այն պատժամիջոցների ցանկը, որոնք կարող են նշանակվել իրավաբանական անձանց նկատմամբ: 1) ՏՀԶԿ կոնվենցիայում, 2) Եվրոպայի խորհրդի քրեական իրավունքի կոնվենցիայում եւ

3) Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայում որպես պարտադիր պատժամիջոցներ նշված են միայն տուգանքները եւ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագանձումը (կամ համեմատելի ազդեցություն ունեցող դրամական պատժամիջոցը):<sup>131</sup> Նույնը կարելի է ասել պատժամիջոցների կիրառման սկզբունքների վերաբերյալ. կոնվենցիաներում որեւէ դիրքորոշում արտահայտված չէ հանցագործությունների կամ դրանք կատարողների հետ կապված այն գործոնների վերաբերյալ, որոնց հիման վրա պետք է որոշվի պատժի խստության աստիճանը: Գոյություն ունի միայն ընդհանուր պահանջ, որ պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, համաչափ եւ տարհամոզիչ:

### **5.1. Պատժամիջոցները**

Տարբեր օրենսդրություններում պատժամիջոցների դասակարգումները տարբեր են: Որոշ երկրներում առանձնացվում են հիմնական եւ լրացուցիչ պատիժներ, մյուսներում տարբերակվում են պատիժներն ու անվտանգության միջոցները: Այսպիսով, միեւնույն պատժամիջոցը, օրինակ՝ պետական գնումների գործընթացին մասնակցության արգելումը, մի երկրում կարող է համարվել պատիժ (Ռումինիա), մյուս երկրում՝ անվտանգության միջոց (Խորվաթիա), երրորդ երկրում՝ վարչական պատժամիջոց (Էստոնիա): Ավելին, այն երկրներում, որոնցում գործում է կորպորատիվ պատասխանատվության քվազի-քրեական համակարգ, նախատեսվում են ոչ թե պատիժներ, այլ հարկադրանքի միջոցներ կամ քրեաիրավական բնույթի միջոցներ: Հետեւաբար, սույն ուսումնասիրության մեջ յուրաքանչյուր պատժամիջոց քննարկվում է հիմնականում բովանդակության տեսանկյունից եւ առանց տարբեր դասակարգումներին ու սահմանումներին անդրադառնալու:

#### **5.1.1. Տուգանքը**

##### ***Տուգանքի՝ օրենսդրությամբ սահմանված չափը***

Գոյություն ունեն երկու էապես տարբեր ձեւեր, որոնցով կորպորատիվ պատասխանատվության ռեժիմները կարող են սահմանել տուգանքի այն չափը, որը կարող է նշանակվել օրենքով. Փակ համակարգում նվազագույն եւ առավելագույն տուգանքի կամ առնվազն երկրորդի համար սահմանված է ֆիքսված գումար կամ բանաձեւ, որով գումարը կարող է հաշվարկվել (օրինակ՝ նվազագույն ամսական աշխատավարձի բազմապատիկը): Բաց համակարգում տուգանքի չափը որոշվում է մեկ կամ մի քանի գործոններով, որոնք կապված են կոնկրետ հանցագործության (օրինակ՝ ստացված օգուտը) կամ մեղադրյալի հետ (օրինակ՝ ընկերության շրջանառությունը): ՀԿՑ երկրների մեծ մասում կիրառվում է փակ համակարգ, որի դեպքում օրենսդրությամբ սահմանվում է եւ՝ նվազագույն, եւ՝ առավելագույն տուգանքի չափը: Նվազագույն տուգանքի չափը տատանվում է 38 եվրոյից (Լիտվա) 100 000 եվրո (Չեռնոգորիա), իսկ առավելագույնը՝ 21 000 եվրոյից (Մոլդովա) 32 միլիոն եվրո (Լատվիա): (Տե՛ս ստորեւ ներկայացված 6-րդ աղյուսակը):

Այնուամենայնիվ, որոշ երկրներ հաջողությամբ համակցել են երկու համակարգերի սկզբունքները կամ նույնիսկ դրանք միաժամանակ կիրառում են տարբեր հանցագործությունների առնչությամբ: Ադրբեջանում, Բուլղարիայում, Մակեդոնիայի Տախկին Հարավսլավական Հանրապետությունում, Չեռնոգորիայում, Սլովենիայում եւ Ուկրաինայում տարանջատվում են գույքից ստացված օգուտի կամ նյութական վնասի հետ կապված հանցագործությունները եւ այն հանցագործությունները, որոնք կամ այնպիսի վնաս են հասցնում, որը չի ազդում գույքային շահերի վրա կամ որի արժեքը չի կարող ճշգրտվել: Առաջին դեպքում տուգանքը կախված է ստացված օգուտի կամ հասցված վնասի չափից, մինչդեռ մյուս դեպքում հանցագործությունների համար պատիժը որոշվում է ֆիքսված գումարի չափով: Այս օրենքներից խստագույնը Սլովենիայի օրենքն է, որի համաձայն կորպորատիվ կաշառակերությունը պատժվում է տուգանքով՝ ստացված նյութական օգուտի գումարի մինչեւ երկուհարյուրապատիկի չափով: Առավել լուրջ գործերի դեպքում տուգանքի փոխարեն կորպորացիայի ամբողջ գույքի վրա կարող է տարածվել բռնագանձում (օրինակ՝ Ուկրաինայում, սակայն ոչ կոռուպցիոն իրավախախտումների դեպքում):<sup>132</sup> Այս առումով նույնն է Ռուսաստանի օրենքը, որում կաշառքի չափի բազմապատիկն օգտագործվում է՝ որոշելու համար տուգանքի առավելագույն սահմանաչափը եւ նվազագույն սահմանաչափի ամրագրման դրամական շեմը: Օրենքի հետաքրքիր կետերից մեկն այն է, որ կաշառքի գումարի հետ զուգահեռ աճում է ոչ միայն փաստացի տուգանքը, այլեւ հենց բազմապատիկը: Ռուսաստանի օրենքով սահմանվում են հետեւյալ տուգանքները՝

- 1) 13 900 եվրոյից (1 միլիոն ռուսական ռուբլի) պակաս չափով կաշառքի համար՝ կաշառքի գումարի մինչեւ եռապատիկի չափով, սակայն ոչ պակաս, քան 13 900 եվրոյի չափով տուգանք,
- 2) 13 900 եվրոյից 277 000 եվրոյի (20 միլիոն ռուսական ռուբլի) չափով կաշառքի համար՝ կաշառքի գումարի մինչեւ երեսնապատիկի չափով, սակայն ոչ պակաս, քան 277 000 եվրոյի չափով տուգանք,
- 3) 277 000 եվրոյից ավելի կաշառքի համար՝ կաշառքի գումարի մինչեւ հարյուրապատիկի չափով, սակայն ոչ պակաս, քան 1 390 000 եվրոյի (100 միլիոն ռուսական ռուբլի) չափով տուգանք:<sup>133</sup>

Վրաստանում նվազագույն սահմանաչափը նույնպես որոշվում է ֆիքսված գումարով (44 000 եվրո), սակայն օրենքով չի սահմանվում առավելագույն տուգանքը, ինչպես նաեւ չեն նախատեսվում ցուցումներ, որոնցով դատարանը պետք է առաջնորդվի առավելագույն տուգանքը հաշվարկելիս:

### Աղյուսակ 6. ՀԿՑ երկրներում կոռուպցիոն իրավախախտումների համար սահմանված կորպորատիվ տուգանքները

Երկիրը	Նվազագույնը (եվրո)	Առավելագույնը (եվրո)	Այլընտրանքային նվազագույնը	Այլընտրանքային առավելագույնը
Այրանիա	2 150	360 000		
Ադրբեջան	52 000	156 000	կամ անօրինական	անօրինական ճանապարհով

				ճանապարհով ստացված օգուտի կամ պատճառով վնասի արժեքը	ստացված օգուտի կամ պատճառով վնասի արժեքի հնգապատիկը
Բոսնիա եւ Հերցեգովինա	2 550	2 550 000			
Բուլղարիա	2 600	51 000	կամ	անօրինական ճանապարհով ստացված օգուտի արժեքից ոչ պակաս	510 000 եվրո
Եստրվաթիա	650	1 965 000			
Էստոնիա	4 000	16 000 000			
Վրաստան	44 000	-			
Լատվիա <sup>135</sup>	3 200	32 000 000			
Լիտվա	38	1 900 000			
Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետություն	1 620	972 500	բայց		անօրինական ճանապարհով ստացված օգուտի կամ պատճառով վնասի արժեքի տասնապատիկից ոչ ավելի
Մոլդովա	525	21 000			
Չեռնոգորիա	100 000	5 000 000	կամ	անօրինական ճանապարհով ստացված օգուտի կամ պատճառով վնասի արժեքի քսանապատիկը	անօրինական ճանապարհով ստացված օգուտի կամ պատճառով վնասի արժեքի հարյուրապատիկը
Ռումինիա	4000	334 000			
Ռուսաստանի Դաշնություն	13 900	-		կաշառքի արժեքի եռապատիկը	կաշառքի արժեքի հարյուրապատիկը
Սերբիա	9 000	4 400 000			
Սլովենիա	10 000	1 000 000	կամ	-	անօրինական ճանապարհով ստացված օգուտի կամ պատճառով վնասի արժեքի երկուհարյուրապատիկը
Ուկրաինա <sup>136</sup>	4 250	64 000	կամ		անօրինական ճանապարհով ստացված օգուտի արժեքի կրկնապատիկը (Ֆիքսված առավելագույն եւ նվազագույն տուգանքները կիրառվում են միայն այն դեպքում, երբ օգուտ չի ստացվել կամ այն քանակապես չի կարող արտահայտվել)

**Արդյունավետությունը, համաչափությունը եւ տարհամոզիչ բնույթը**

Դրամական պատժամիջոցները մշտապես եղել են կորպորացիաներին պատժելու հիմնական ազդեցության միջոցը, եւ այն, ինչպես արդեն նշվել է, նաեւ միջազգային իրավունքի փաստաթղթերով սահմանված միակ պատիժն է: Այսպիսով, հիմքեր կան կարծելու, որ պատժամիջոցների կիրառման ոլորտի արդյունավետությունը, համաչափությունը եւ տարհամոզիչ բնույթը մեծապես

կախված են այն հարցից, թե արդյոք տուգանքի գումարը համարվում է բավարար:

Այս առումով կարելի է կատարել առնվազն երկու համեմատություն: Առաջին հերթին կոռուպցիոն իրավախախտումների համար սահմանված տուգանքները կարող են համեմատվել պաշտոնական հանցագործությունների հետ: Քանի որ կոռուպցիան համարվում է լուրջ իրավախախտում, հարակից տույժերը պետք է հավասարազոր լինեն այնպիսի հանցագործությունների համար նշանակվող տույժերին, ինչպիսիք են խարդախությունը, յուրացնելը, հարկերի վճարումից խուսափելը և այլն: Երկրորդ համեմատությունը կարող է կատարվել ԳՐԵԿՈ-ի, Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի և ՏՀԶԿ ԿԱԽ-ի կողմից սահմանված չափանիշների հետ: Թեև այս կազմակերպություններից որևէ մեկը չի հրապարակել բավարարության վերաբերյալ համընդհանուր նորմ, սակայն գոյություն ունեն որոշ ուղենիշներ: ՏՀԶԿ ԿԱԽ-ն իր գնահատման հաշվետվություններում բազմիցս նշել է, որ դրամական պատժամիջոցները պետք է բավարար չափով խիստ լինեն, որպեսզի անդրազգային կորպորացիաների վրա դրանց ազդեցությունը զգալի լինի: Այս տեսանկյունից ՏՀԶԿ ԿԱԽ-ն նշել է, որ Գերմանիայում և Իտալիայում 1 միլիոն եվրո, Սլովակիայում 1.6 միլիոն եվրո և Ճապոնիայում 2.7 միլիոն եվրո կազմող առավելագույն տուգանքի չափը բավարար չէ, մինչդեռ Էստոնիայում 16 միլիոն եվրո և Բելգիայում 10 միլիոն եվրո կազմող առավելագույն տուգանքի չափը համարել է բավարար:<sup>137</sup>

ՀԿՑ երկրներն ընդհանուր առմամբ կարող են անցնել առաջին քննությունը: Այնուամենայնիվ, շատ երկրներում օրենքով սահմանվում են կորպորատիվ տուգանքների միայն ընդհանուր սահմանաչափեր, որոնք կիրառվում են բոլոր հանցագործությունների դեպքում: Չկան հատուկ ուղեցույցներ կոնկրետ հանցագործության համար տուգանք հաշվարկելու համար: Սա նշանակում է, որ այս երկրների դեպքում իմաստ ունի համեմատել միայն օրենքի փաստացի կիրառումը: Ի տարբերություն սրան՝ Սլովենիայում, Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետությունում<sup>138</sup> և Խորվաթիայում<sup>139</sup> օրենքներն ավելի հստակ կարգավորումներ են նախատեսում: Այս երկրներում կորպորատիվ տուգանքների գումարները կապված են նույն հանցագործությունը կատարելու դեպքում ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվող պատիժների հետ, և, քանի որ կաշառակերությունը, փողերի լվացումն ու մյուս կոռուպցիոն հանցագործությունները պատժվում են ազատազրկմամբ, այս հանցագործությունների համար նախատեսված կորպորատիվ տուգանքները նույնպես հասնում են պատժի սանդղակի վերին շեմին: Օրինակ՝ Սլովենիայում առավելագույն կորպորատիվ տուգանք կարող է նշանակվել այն դեպքերում, երբ ֆիզիկական անձը կդատապարտվեր ավելի քան երեք տարվա ազատազրկման:<sup>140</sup> Այս դրույթը կարող է կիրառվել կաշառակերության և փողերի լվացման դեպքում, քանի որ դրանք պատժվում են համապատասխանաբար մեկից հինգ և մինչև հինգ տարի ազատազրկմամբ:<sup>141</sup>

Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է երկրորդ քննությանը, շատ ՀԿՑ երկրներ չեն համապատասխանում ՏՀԶԿ ԿԱԽ-ի կողմից սահմանված ստանդարտին: Իրականում դրանցից մի քանիսը շատ հեռու են նշված ստանդարտից: Այնուամենայնիվ, ՀԿՑ այն երկրները, որտեղ կիրառվում է

առավելագույն տուգանքի հաշվարկման այլընտրանքային եղանակ, որի հիմքը հանցագործության միջոցով ստացված օգուտի գումարն է (կամ մեկ այլ արտաքին գործոն), առավել բարենպաստ վիճակում են: Եթե վերին սահմանաչափ նախատեսված չէ, ապա ցանկացած գումար հնարավոր է: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի լիազուար նիստի՝ մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվության մեջ նշվում է, որ տեսականորեն այն տուգանքները, որոնք կարող են հաշվարկվել պատճառված վնասի կամ ստացված օգուտի հիման վրա եւ հասնում են մինչև դրանց արժեքի հնգապատիկը, կարող են արդյունավետ ու տարհամոզող կանխարգելիչ միջոց լինել:<sup>142</sup>

### **Տուգանքի չափը գործնականում**

Քրեական պատժամիջոցների կանխարգելիչ ազդեցությանը չի կարելի հասնել միայն օրենսդրական հնարքների միջոցով. օրենքների փաստացի կիրառումը նույնքան կարևոր է: Այս առումով նույնիսկ ՀԿՑ այն երկրները, որտեղ օրենքը բավականաչափ խիստ է, կարող են քննադատության արժանանալ: Իրավաբանական անձանց նկատմամբ երբեմն սահմանված՝ նույնիսկ ամենաբարձր տուգանքները բավականին զիջում են այդ երկրների օրենքներով նախատեսված առավելագույն տուգանքներին: Ինչ վերաբերում է կաշառակերության հանցանքին, դատապարտման պրակտիկան բավականին թույլ է: (Տե՛ս անմիջապես ստորեւ ներկայացված 7-րդ եւ 8-րդ աղյուսակները):

### **Աղյուսակ 7. Հանցանքի համար իրավաբանական անձի նկատմամբ երբեմն կիրառված առավելագույն տուգանքները**

<b>Երկիրը</b>	<b>Օրենքով սահմանված առավելագույնը (Եվրո)</b>	<b>Կիրառված առավելագույնը (Եվրո)<sup>143</sup></b>	<b>Գործակից (%)</b>
Խորվաթիա	1 965 000	667 000	34.0
Էստոնիա	16 000 000	798 000	5.0
Լատվիա <sup>144</sup>	2 849 000	1 210 688	42.5
Լիտվա	1 900 000	150 725	7.9
Սլովենիա	1 000 000	100 000	10.0
	կամ անօրինական ճանապարհով ստացված օգուտի արժեքի երկուհարյուրապատիկը		


### **Աղյուսակ 8. Կաշառակերության համար իրավաբանական անձի նկատմամբ երբեմն կիրառված առավելագույն տուգանքները**

<b>Երկիրը</b>	<b>Օրենքով սահմանված առավելագույնը (Եվրո)</b>	<b>Կիրառված առավելագույնը (Եվրո)</b>	<b>Գործակից (%)</b>
Էստոնիա	16 000 000	798 000	5.0
Լատվիա	32 000 000	6 400	0.02
Լիտվա	1 900 000	22 610	1.2
Ռումինիա <sup>145</sup>	134 000	35 000	26.1

Էստոնիայում երբեւէ կիրառված ամենաբարձր տուգանքը նշանակվել է *ԱՍ Յարվեվանայի [AS Järvevana]* նկատմամբ (որն առանձնացել էր սկզբնական *ԱՍ Մերկո Էհիտուս [AS Merko Ehitus]* ընկերությունից) Հողերի փոխանակման գործով դատապարտվելուց հետո: (Տե՛ս վերոնշյալ 2.3.1 եւ 3.1 բաժինները): Պետք է նշել, որ մինչ Ներքին անվտանգության ծառայությունն ուսումնասիրում էր հողերի փոխանակման գործարքները, սկզբնական ընկերության վերակազմակերպումից հետո մնացած «նոր» *ԱՍ Մերկո Էհիտուսի [AS Merko Ehitus]* դեմ մեկ այլ գործ բացվեց: Այս գործն ավելի արագ ընթացք ստացավ, եւ ընկերությունը վեց այլ ֆիրմաների հետ 2012 թվականին վերջնականապես դատապարտվեց *Փարբուսի* գործով Տայիինի քաղաքապետարանի պաշտոնյաներին կաշառելու համար: Նոր *ԱՍ Մերկո Էհիտուսը [AS Merko Ehitus]* պատժվեց 300 000 եվրո տուգանքով, իսկ այդ գործով մյուս իրավաբանական անձանց նկատմամբ սահմանվեցին տուգանքներ՝ 50 000 եվրոյից 200 000 եվրոյի չափով:

Հողերի փոխանակման գործով վերջնական դատավճռի կայացումից անմիջապես հետո Էստոնիայի արդարադատության նախարարությունը հարցում անցկացրեց՝ պարզելու, թե ինչպես են քրեական վարույթները եւ պատիժներն ազդում շահագրգիռ ընկերությունների տնտեսական ցուցանիշների վրա:<sup>146</sup> Ինչ վերաբերում է *ԱՍ Մերկո Էհիտուսին [AS Merko Ehitus]*, հարցման արդյունքում հանգել են այն ընդհանուր եզրակացության, որ գործը միայն կարճաժամկետ ազդեցություն է ունեցել (եթե իհարկե ընդհանրապես ունեցել է): Երկարաժամկետ կտրվածքով ընկերությունը շինարարության շուկայում պահպանեց իր կարգավիճակը որպես առաջատար ընկերություն: Ընկերության եկամուտների (վաճառքի) ցուցանիշները, շահույթն ու բորսայական գինը հետեւեցին շուկայի ընդհանուր միտումներին՝ քննությունների եւ դատաքննությունների ամբողջ ժամանակահատվածի ընթացքում: (Տե՛ս ստորեւ ներկայացված 1-ին պատկերը):

**Գծապատկեր 1. ԱՄ Մերկո [AS Merko] ընկերությունների բորսայական գների փոփոխությունները Նասդաք օեմբրս Բալթիք-ում [Nasdaq OMX Baltic]**



Գծապատկերը հիմնված է Նասդաք օեմբրս Բալթիքի<sup>147</sup> [Nasdaq OMX Baltic] ֆոնդային բորսայից: Գծապատկերում պատկերված են բորսայական գների տատանումներն ըստ ԱՄ Մերկո Էհիտուսի [AS Merko Ehitus] եւ ԱՄ Յարվեվանայի<sup>148</sup> [AS Järvevana] հողերի փոխանակման հետ կապված սկանդալ ժամանակ: Այն օրերի տվյալները, երբ վերոնշյալ բորսաներից ոչ մեկը փոխանակում չէր կատարում, հանվել են: Նորդեքոն ԱՄ-ի<sup>149</sup> [Nordecon AS] բորսայական գինը եւ բորսայի ցուցիչը Բալթյան շինարարության եւ հումքային հատվածի մասով<sup>150</sup> ներկայացվել են համեմատության համար: Ավելի լավ համեմատություն ապահովելու համար ԱՄ Մերկո Էհիտուսի [AS Merko Ehitus], իսկ ԱՄ Յարվեվանայի [AS Järvevana] եւ Նորդեքոն ԱՄ-ի [Nordecon AS] բորսայական գները ներկայացված են եվրոյով, եւ Բալթյան բորսայի ցուցիչը բաժանված է հարյուրի: Այս համատեքստի համար ներառված է կարճ ժամանակացույց:

Գծապատկերի սկզբնակետը 2006 թվականի հոկտեմբերի 3-ն է, երբ Էստոնիայի Ներքին անվտանգության ծառայությունը խուզարկություններ անցկացրեց Հողի հարցերով Էստոնիայի խորհրդում եւ ներգրավված ընկերությունների գլխամասային գրասենյակներում: Այդ ժամանակ հանրությունն առաջին անգամ լրատվամիջոցներից տեղեկացավ հողերի

փոխանակման հետ կապված սկանդալում *ԱՍ Մերկո Էհիտուսի* հնարավոր ներգրավվածության մասին: Գծապատկերից պարզ է դառնում, որ չնայած կասկածների առաջացմանը, ընկերության բաժնետոմսերի գինը, ինչպես էլ բաժնետոմսերի ամբողջ շուկան, պահպանեցին բարձրացման միտումը՝ ընդհանուր տնտեսական աճին համահունչ: Աճը շարունակվեց մինչև 2007 թվականը, երբ բաժնետոմսերի շուկայում գրանցվեց կտրուկ անկում՝ կապված միջազգային ֆինանսական ճգնաժամի հետ, որը 2008 թվականի սեպտեմբերին վերածվեց համաշխարհային տնտեսական հետընթացի: *ԱՍ Մերկո Էհիտուսի* բաժնետոմսերի գինն սկսեց վերականգնվել 2009 թվականի երկրորդ կեսին: Այդ ժամանակ ներդրողների լավատեսությունը, կապված համաշխարհային շուկայի հետ, սկսեց բարելավվել: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ նշված ժամանակահատվածում *ԱՍ Մերկո Էհիտուսի* բաժնետոմսերի գնի վրա հիմնականում ազդել էին շուկայի ընդհանուր պայմանները եւ գործալ ֆինանսական ճգնաժամը: Քրեական հետապնդումը եւ դատավճիռները լուրջ ազդեցություն չունեցան ներդրողների կողմից ընկերության հեռանկարների գնահատման վրա: Տնտեսական ճգնաժամի հետեւանքները պարզորոշ նկատելի են նաեւ եկամուտների (վաճառք) եւ գուտ շահույթի ցուցանիշներում: Ինչպես եկամուտները, այնպես էլ գուտ շահույթը գործալ ֆինանսական ճգնաժամի պատճառով 2007 թվականից հետո նվազել են եւ սկսել են վերականգնվել 2009 թվականի վերջին գրանցված ընդհանուր կայունացմանը համարալ:

Մի կողմ թողնելով համաշխարհային շուկայի հետ կապված նրբությունները՝ *Հողերի փոխանակման* գործը կարող է վերլուծվել նաեւ ողջամտության տեսանկյունից: Հաշվի առնելով այն փաստը, որ կաշառք ստացողները եղել են գործող նախարարը եւ պետական գործակալության գլխավոր տնօրենը, որ կաշառք տվողը եղել է երկրի ամենամեծ ընկերություններից մեկը, եւ որ կոռուպցիոն մեխանիզմը գործել է տարիներ շարունակ եւ միլիոնավոր եվրոներ է բերել ընկերությանն ու հարյուր հազարավոր եվրոներ՝ մեղադրյալներին, այդ հանցանքը կարող է անկասկած համարվել բարձր մակարդակի կոռուպցիա: Սակայն, նշանակված կորպորատիվ պատիժը համապատասխանում է առավելագույն պատժի միայն 5%-ին: Եթե դա է կոռուպցիայի նման բացահայտ դեպքի համար նշանակված պատիժը, ապա դժվար է պատկերացնել՝ ինչ պետք է իրավաբանական անձն անի, որպեսզի նրա նկատմամբ կիրառվի օրենքով թույլատրելի առավելագույն պատժամիջոցին նույնիսկ հեռավոր կերպով մոտ պատիժ: Նմանատիպ իրավիճակ է առկա Լատվիայում *ԳԱՄԱ-ի* գործի առնչությամբ, որի դեպքում իրավաբանական անձի նկատմամբ նշանակվել է այդ երկրի պատմության մեջ երբեւէ սահմանված ամենամեծ դրամական տուգանքը (Տե՛ս վերը նշված 1.3 բաժինը): Առանձին վերցրած, 1.2 միլիոն եվրոն մեծ գումար է, սակայն այն փոքր է թվում, երբ համեմատվում է ընկերության տնտեսական դրության եւ այն պայմանագրի արժեքի հետ, որն այն կնքել էր: *ԳԱՄԱ* հողիինգը մոտավորապես 590 միլիարդ եվրո ընդհանուր արժողությամբ ակտիվներ ունեցող անդրազգային ընկերություն է,<sup>151</sup> որի կողմից՝ առնվազն մասամբ անարդար գործողությունների արդյունքում ձեռք բերված՝ շինարարական աշխատանքների կատարման պայմանագրի դրամական արժեքը կազմել է 323.5 միլիոն եվրո: Այս ցուցանիշների համեմատությամբ 1.2 միլիոն եվրոն չի թվում բավականաչափ

տարհամոզիչ:

Այս օրինակները հաշվի առնելով՝ ՏՀԶԿ ԿԱԽ ստանդարտը, որով պահանջվում է, որ դրամական պատժամիջոցներն այնքան խիստ լինեն, որ հնարավոր լինի ազդել մեծ կորպորացիաների վրա, ակնհայտորեն կարելու է դառնում: Իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող պատժամիջոցներին վերաբերող՝ փոքր երկրի օրենսդրական եւ դատական պրակտիկան չպետք է գնահատվի միայն միջին տեղական ընկերությունների տեսանկյունից, այլ պետք է հաշվի առնվի նաեւ ամենախոշոր տեղական, ինչպես նաեւ օտարերկրյա ընկերություններին իրավախախտում կատարելուց հետ պահելու հանգամանքը:

### **5.1.2. Բռնագանձումը**

#### ***Բռնագանձման մակարդակները***

Ցանկացած տուգանքի գումար, հատկապես գործնականում, պետք է դիտարկվի հանցագործությանն առնչվող գույքի վրա բռնագանձում տարածելու առումով: Բռնագանձման խիստ ռեժիմի առկայության դեպքում երկրում տուգանքի առավելագույն չափը կարող է ավելի ցածր լինել: Տեսականորեն կարելի է տարբերակել բռնագանձման հետեւյալ տեսակները՝

1) հանցագործություն կատարելու համար օգտագործված կամ այդ նպատակով օգտագործման համար նախատեսված գործիքների բռնագանձում (օրինակ՝ սպանության գործիք, թմրամիջոցներ, ինչպես նաեւ կաշառքի առարկա).

2) հանցագործության կատարման արդյունքում ստացված կամ ձեռք բերված եկամուտների բռնագանձում.

3) ընդլայնված բռնագանձում, որով թույլ է տրվում բռնագանձել դատապարտված անձի գույքը, երբ հնարավոր չէ ապացուցել դրա ծագման օրինականությունը: Ի տարբերություն նախորդ տեսակի՝ բռնագանձման այս տեսակի համար չի պահանջվում ապացուցել, որ բռնագանձման ենթակա ակտիվները փաստացիորեն ձեռք են բերվել այն հանցագործության կատարման արդյունքում, որի համար դատապարտվել է դրանց սեփականատերը.

4) քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված բռնագանձում, որով թույլ է տրվում բռնագանձել ցանկացած գույք, որի ծագման օրինականությունը հնարավոր չէ ապացուցել: Ի տարբերություն նախորդ երեք տեսակի՝ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված բռնագանձումը կարող է կիրառվել նույնիսկ այն դեպքում, երբ գույքի սեփականատերը որեւէ հանցագործության համար չի դատապարտվել:

Բռնագանձման առաջին տեսակը ճանաչվում է գրեթե բոլոր պետություններում: Այն առաջին հերթին նախատեսված չէ որպես պատժիչ միջոց, այլ փոխարենը՝ որպես անձի կողմից նմանատիպ հանցագործության կրկին կատարումը կանխելու կամ, ավելի լայն իմաստով, հասարակությանը

պաշտպանելու միջոց (օրինակ՝ վտանգավոր գեները փողոցներից հեռու պահելու միջոցով): Որոշ երկրներում, այդ պատճառով, դատավարական օրենքով կարգավորվում է հանցագործության գործիքների բռնագանձումը: Սակայն, որոշ դեպքերում, այդ թվում՝ կաշառքի պարագայում, հանցագործության կատարման համար օգտագործված գործիքից գրկելը կարող է ունենալ նաև պատժիչ ազդեցություն: Օրինակ, եթե ծանր աշխատանքի արդյունքում վաստակած գումարն օգտագործվում է կաշառք տալու համար, ապա այդ գումարի կորուստը կարող է նույնքան ծանր լինել, որքան տուգանքը:

Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագանձումը, որը նույնպես գրեթե համընդհանուր կիրառություն ունի, իրականում նույնպես չունի պատժիչ ազդեցություն, քանի որ դրա միջոցով պարզապես վերականգնվում է այն իրավիճակը, որը գոյություն է ունեցել նախքան հանցագործությունը կատարելը: Հետևաբար, նախ եւ առաջ, ընդլայնված բռնագանձման եւ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված բռնագանձման հնարավորության առկայությունն է, որ կարելի է դիտել որպես բռնագանձման արդյունավետ ռեժիմ, որի միջոցով կարելի է լրացնել փոքր տուգանքները կամ նույնիսկ որոշ չափով փոխհատուցել դրանց դիմաց: Ընդլայնված բռնագանձման եւ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված բռնագանձման առանձնահատկություններն առկա են նաև ապօրինի հարստացման առանձին հանցանքի պարագայում, որի ժամանակ անձի ակտիվները զգալիորեն աճում են, եւ դա հնարավոր չէ ողջամտորեն բացատրել՝ ելնելով այդ անձի օրինական եկամուտներից: Այս դեպքում, ինչպես եւ ընդլայնված ու քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված բռնագանձման պարագայում, գույքի անօրինական ծագման մասին ենթադրություններ կարելի է անել՝ հիմնվելով որոշակի փաստերի վրա (օրինակ՝ այդ անձի տիրապետման տակ գտնվող գույքի արժեքի եւ նրա օրինական եկամուտների անհամամասնություն): Այսպիսով, այս ենթադրությունը հերքելու համար ապացույցներ ներկայացնելու պարտավորությունը դրված է գույքի սեփականատիրոջ վրա, իսկ դատարանը հետեւություններ կանի, երբ մեղադրյալին չհաջողվի բացատրել տվյալ ակտիվների ծագումը:

Բռնագանձման կանոնները գնահատելիս անհրաժեշտ է դիտարկել եւս երկու հարց: Նախ եւ առաջ, բռնագանձման արդյունավետ ռեժիմի պարագայում պետք է հնարավոր լինի իրականացնել արժեքի վրա հիմնված բռնագանձում այն դեպքերում, երբ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները թաքցվել, ծախսվել կամ փոխանցվել են բարեխիղճ երրորդ կողմի տիրապետմանը (այսինքն՝ «արժեքի վրա հիմնված բռնագանձում»): Բռնագանձման արդյունավետ կարգավորմանը բնորոշ մեկ այլ առանձնահատկություն երրորդ անձին փոխանցված ակտիվների վրա բռնագանձում տարածելու հնարավորությունն է՝ առնվազն այն դեպքում, երբ այդ երրորդ անձը գույքը ձեռք է բերել անվճար հիմունքներով կամ շուկայական արժեքից զգալիորեն ցածր գնով:

### **Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագանձումը**

ՀԿՑ երկրներից շատերը հանցագործության գործիքների եւ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագանձումն ընդունել են որպես պարտադիր կամ այլընտրանքային պատժամիջոց: Ընդհանուր առմամբ, որեւէ սահմանափակում չի կիրառվում իրավաբանական անձանց կամ կոռուպցիայի հանցագործության առումով: Արժեքի վրա հիմնված բռնագանձման, ինչպես նաեւ երրորդ անձի կողմից ձեռք բերված գույքի բռնագանձման վրա տարածվող՝ հարկադրաբար վերցնելու կանոնի լավ օրինակ կարելի է գտնել Չեռնոգորիայի օրենսդրության մեջ: «Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մասին» օրենքի 36-րդ հոդվածն ունի հետևյալ բովանդակությունը՝

1) Հանցանքի կատարման արդյունքում ձեռք բերված գումարը, նյութական արժեքները եւ ցանկացած այլ նյութական օգուտ առգրավվում է իրավաբանական անձից, իսկ այն դեպքում, երբ առգրավումը հնարավոր չէ, իրավաբանական անձը պարտավորվում է վճարել ձեռք բերված նյութական օգուտի դրամական արժեքը:

2) Հանցանքի կատարման արդյունքում ձեռք բերված նյութական օգուտն առգրավվում է նաեւ այն անձանցից, որոնց այն փոխանցվել է անհատույց կամ դրա իրական արժեքին ակնհայտորեն չհամապատասխանող փոխհատուցման դիմաց:

3) Ցանկացած նյութական օգուտ, որը հանցանքի կատարման արդյունքում ձեռք է բերվել հօգուտ այլ անձանց, առգրավվում է:

Սակեղոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության օրենսդրությամբ նախատեսվում է նաեւ հատուկ կանոն այն դեպքերի համար, երբ կասկածվող ընկերությունն իր գործունեությունը դադարեցնում է՝ նախքան բռնագանձումը: Այդ դեպքում, իրավահաջորդները կամ, դրանց բացակայության դեպքում, իրավաբանական անձի հիմնադիրները պարտավորվում են համատեղ վճարել ձեռք բերված գույքային օգուտին համարժեք գումարը:<sup>152</sup>

### **Ընդլայնված բռնագանձման ձեւերը**

Կորպորատիվ ակտիվների ընդլայնված բռնագանձում կիրառվում է Էստոնիայում, Մոլդովայում, Չեռնոգորիայում, Ռումինիայում եւ Լիտվայում, քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված բռնագանձում կիրառվում է Սլովենիայում, իսկ ապօրինի հարստացման կորպորատիվ հանցանքը սահմանված է Լիտվայի եւ Մոլդովայի օրենսդրություններով:<sup>153</sup>

Էստոնիայի Քրեական օրենսգրքի վերջերս ընդունված 83<sup>2</sup>-րդ հոդվածի 21-րդ պարբերության համաձայն՝ դատարանը կարող է բռնագանձում տարածել դատապարտելու պահին իրավաբանական անձին պատկանող բոլոր ակտիվների կամ դրանց մի մասի վրա, եթե հանցանքի բնույթը հիմք է տալիս ենթադրելու, որ իրավաբանական անձի հիմնական գործունեությունը նպատակաուղղված է եղել հանցանք կատարելուն եւ ակտիվները ձեռք են բերվել հանցանք կատարելու արդյունքում: Բռնագանձում չի տարածվում այն ակտիվների վրա, որոնք, ինչպես ցույց է տալիս տվյալ անձը, ձեռք են բերվել օրինական միջոցներով:

Սյուվենիայում հատուկ ֆինանսական քննություն կարող է սկսվել այն դեպքում, երբ թվարկված հանցագործությունների կատարման մեջ կասկածվող անձին պատկանում են այն ակտիվները, նա տիրապետում, օգտագործում է այն ակտիվները կամ օգտվում է այն ակտիվներից, որոնք (i) անօրինական ծագում ունեն, (ii) պահվել են այդ անձի իրավահաջորդների կողմից կամ հանձնվել են նրանց, (iii) փոխանցվել են փոխկապակցված կողմերի՝ առանց պատշաճ փոխհատուցման կամ (iv) միացվել են իրավահաջորդների կամ փոխկապակցված անձանց ակտիվներին: Այդպիսի քննություն կարող է սկսվել նաև դատապարտված անձի, ինչպես նաև այն անձի նկատմամբ, որի մահվան պատճառով կարճվել է նրա նկատմամբ իրականացվող մինչդատական կամ դատական վարույթը, կամ որի առնչությամբ հիմքեր կան կասկածելու, որ նա հանցանք է կատարել: Այն դեպքում, երբ ֆինանսական քննության արդյունքում բավականաչափ ապացույցներ են ձեռք բերվում, որոնք թույլ են տալիս եզրակացնել, որ գույքն ունի անօրինական ծագում, Հատուկ հարցերով ազգային դատաստագրությունը քաղաքացիական հայց է հարուցում կասկածների տեղիք տվող գույքի սեփականատիրոջ դեմ: Վերջինս կարող է դատական գործը շահել՝ ապացուցելով, որ այդ ակտիվները ձեռք չեն բերվել անօրինական ճանապարհով, իսկ փոխկապակցված անձանց դեպքում՝ որ ակտիվների դիմաց վճարվել է դրանց իրական արժեքը: Եթե սեփականատերը չի կարողանում դա անել, ապա ակտիվները հարկադրաբար վերցվում են քաղաքացիական դատարանի կողմից և դառնում են Սյուվենիայի Հանրապետության սեփականությունը:<sup>154</sup> Կարելու է նշել, որ այս կարգավորումը նաև կիրառվում է կաշառակերության մեջ կասկածվող կամ դրա համար դատապարտված իրավաբանական անձանց նկատմամբ:

Լիտվան միակ ՀԿՑ երկիրն է, որտեղ իրավաբանական անձը կարող է դատապարտվել ապօրինի հարստացման համար: Քրեական օրենսգրքի 189<sup>1</sup> հոդվածով տվյալ հանցանքը սահմանվում է հետևյալ կերպ՝

Անձը, որը սեփականության իրավունքով տիրապետում է կենսապահովման նվազագույն բյուջեի [minimum subsistence level] 500-ապատիկը<sup>155</sup> գերազանցող արժողությամբ գույքի, և որը տեղյակ էր, կամ պարտավոր էր տեղյակ լինել կամ կարող էր տեղյակ լինել, որ այդ գույքը չէր կարող ձեռք բերված լինել օրինական ճանապարհով ստացված եկամուտների հաշվին, պատժվում է տուգանքով կամ կալանավորմամբ կամ ազատազրկմամբ՝ մինչև հինգ տարի ժամկետով: Այդ գույքը ենթակա է պարտադիր բռնագանձման:

Իրավաբանական անձը նույնպես պատասխանատվություն է կրում սույն հոդվածով նախատեսված արարքների համար:

Եթե գույքի արժեքը քրեական պատասխանատվության ենթարկելու համար սահմանված շեմից ցածր է, անձին կհանձնարարվի հարկեր վճարել ակտիվների համար, և նրա նկատմամբ վարչական վարույթի շրջանակներում կարող է նշանակվել տուգանք՝ գույքի արժեքի 10%-ից 50%-ի չափով:<sup>156</sup>

Մինչ այժմ այս կանոններից ոչ մեկը գործնականում չի կիրառվել: Սակայն, 2013 թվականի նոյեմբերի դրությամբ Սլովենիայում իրականացվում էին 11 ֆինանսական քննություններ, որոնցում ներգրավված են եղել 55 ֆիզիկական եւ 75 իրավաբանական անձինք:

Ավելին, 3.72 միլիոն եվրո կազմող գումարներ ներառող երեք քաղաքացիական հայց է ներկայացվել դատարան՝ հինգ ֆիզիկական եւ երկու իրավաբանական անձանց դեմ:<sup>157</sup>

### **Քոնագանձումը՝ որպես պատժատեսակ**

Որոշ ՀԿՑ երկրներ բոնագանձումը ճանաչում են որպես որոշակի դրամական պատիժ, որը ոչ մի կերպ չի առնչվում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներին կամ անօրինական ճանապարհով ձեռք բերված գույքին: Լատվիայում, օրինակ, գույքի բոնագանձումը վերաբերում է պետության կողմից առանց փոխհատուցման՝ անձի գույքի հարկադիր օտարմանը: Այդ պատժամիջոցը կարող է նշանակվել իրավաբանական անձանց նկատմամբ հարկադրանքի այլ միջոցների հետ՝ բացառությամբ կազմալուծման:<sup>159</sup> Սլովենիայում վերը նկարագրված քրեական եւ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված բոնագանձումից բացի գոյություն ունեն նաեւ նմանատիպ պատժամիջոցներ:

«Հանցանքների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» ակտի 14-րդ հոդվածի համաձայն՝ առավել լուրջ դեպքերում կարող է բոնագանձվել իրավաբանական անձի գույքի կեսը կամ նույնիսկ ամբողջ գույքը: Այդպիսի պատիժ կարող է նշանակվել նաեւ կազմալուծմանը զուգահեռ:<sup>160</sup> Չեռնոգորիայում օրենքով նախատեսված է, որ ընկերության նկատմամբ կազմալուծման ձեռով պատիժ նշանակվելու դեպքում ընկերության ակտիվները պետք է բոնագանձվեն հօգուտ պետության:<sup>161</sup>

### **5.1.3. Կազմալուծումը**

ՀԿՑ երկրներում լայնորեն կիրառվող՝ կորպորատիվ պատժի մեկ այլ ձեւ է իրավաբանական անձանց հարկադիր կազմալուծումը:<sup>162</sup> Սակայն, շատ երկրներում կազմալուծումը բացառիկ պատժամիջոց է, որը կարող է կիրառվել միայն որոշակի հանգամանքներում: Սովորաբար դատարանի կողմից իրավաբանական անձի կազմալուծում կարող է կիրառվել այն դեպքում, երբ պարզվել է, որ տվյալ իրավաբանական անձը հիմնադրվել է անօրինական նպատակով կամ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ մեծ մասամբ իրականացվել է հանցագործություններ կատարելու համար: Դրա վերաբերյալ դրույթներ կարելի է գտնել Խորվաթիայի, Լատվիայի, Չեռնոգորիայի, Ռումինիայի եւ Սլովենիայի օրենքներում:<sup>163</sup> Ռումինիայում կազմալուծումը հնարավոր է նաեւ այն դեպքում, երբ դատապարտված իրավաբանական անձն անբարեխղճության հետեւանքով չի կատարել լրացուցիչ պատժամիջոցներից որեւէ մեկը:<sup>164</sup> Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետությունում կազմալուծում կարող է նշանակվել ռեցիդիվի կամ նույնիսկ ռեցիդիվի վտանգի դեպքում: Քրեական օրենսգրքի 96-գ հոդվածի համաձայն՝ կազմալուծում կարող

Է նշանակվել ծանր հանցագործությունների համար, եթե արարքը կատարելու ձեռնարկ կարելի է ենթադրել, որ նմանատիպ արարք կարող է կրկին կատարվել (7-րդ պարբերություն), կամ երբ քրեորեն պատժելի արարքը կատարվել է իրավաբանական անձի կողմից որոշակի գործունեության իրականացումն արգելելու մասին վերջնական դատավճիռը հրապարակելուց հետո (8-րդ պարբերություն):

Որոշ օրենքներով սահմանափակվում է նաեւ այն իրավաբանական անձանց շրջանակը, որոնց նկատմամբ կարող է կազմալուծման ձեւով պատիժ նշանակվել: Ռումինիայում, Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետությունում եւ Խորվաթիայում քաղաքական կուսակցությունները պաշտպանված են հարկադիր կազմալուծումից: Նման անձեռնմխելիություն ունեն լրատվական կազմակերպությունները Ռումինիայում, ինչպես նաեւ օրենքով ստեղծված իրավաբանական անձինք՝ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետությունում եւ տեղական ու տարածքային ինքնակառավարման միավորները՝ Խորվաթիայում:<sup>165</sup>

Թեւ իրավաբանական անձանց կազմալուծումն առանձնակի խիստ պատժամիջոց է, որոշ դեպքերում այն կիրառվել է: Խորվաթիայում *Ֆիմի մեդիայի* գործով *Ֆիմի մեդիա Դ.Օ.Օ. [Fimi Media d.o.o.]* ընկերությունը, որն, ըստ մեդադրական եզրակացության, պետական ընկերություններին ներկայացրել էր կեղծ հաշիվ-ապրանքագրեր՝ հօգուտ իր թաքնված սեփականատերերի, ինչպես նաեւ քաղաքական կուսակցության ֆինանսավորման համար անօրինական միջոցների հավաքման նպատակով, կազմալուծվել էր առաջին ատյանի դատարանի դատավճռով (Տե՛ս վերոնշյալ 2.3.1 բաժինը): Ռումինիայում Մ.Ռ.-ի գործով երկու ընկերություններ, որոնց կաշառք ստացող անձն օգտագործել էր կաշառք հավաքելու նպատակով, դատապարտվել են եւ նրանց նկատմամբ նշանակվել է կազմալուծման ձեւով լրացուցիչ պատժամիջոց (Տե՛ս վերոնշյալ 2.3.4 բաժինը): Դատարանն իր դատավճռում նշել էր, որ երկու ընկերություններն էլ «սկսել էին օգտագործվել հանցանքներ կատարելու համար»: Հարկ է նշել նաեւ, որ հանցագործություն կատարելու համար Վրաստանում դատապարտվել է ընդամենը երկու իրավաբանական անձ, եւ երկուսի նկատմամբ էլ կիրառվել է հարկադիր կազմալուծում:

#### **5.1.4. Կորպորատիվ իրավունքների սահմանափակումը**

Թեւ դրամական պատժամիջոցները եղել են օրենքը խախտող կորպորացիաներին պատժելու հիմնական գործիքը, ժամանակի ընթացքում մշակվել են նաեւ մի շարք այլ միջոցներ: Սովորաբար այդ միջոցները ենթադրում են կորպորատիվ իրավունքի հետ կապված տարբեր սահմանափակումներ, որոնք կարող են կիրառվել քրեական կամ վարչական իրավունքի շրջանակներում: ՀԿՑ երկրները կորպորատիվ պատասխանատվության իրենց ռեժիմները մշակելիս հաշվի են առել նաեւ այս զարգացումները:

#### **ՀԿՑ երկրներում առկա սահմանափակումները**

Սահմանափակումների ամենաերկար ցանկը կարելի է գտնել

Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության օրենսդրության մեջ: Քրեական օրենսգրքի 96-ր հոդվածի համաձայն՝ դատապարտված իրավաբանական անձի նկատմամբ կարող է կիրառվել հետեւյալ լրացուցիչ պատժամիջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) թույլտվություններ, լիցենզիաներ, կոնցեսիաներ, արտոնագրեր կամ հատուկ օրենքով նախատեսված ցանկացած այլ իրավունք ձեռք բերելու արգելք.

2) հանրային աճուրդի ընթացակարգերին մասնակցելու, պետական գնումների շրջանակներում եւ պետական ու մասնավոր հատվածների համագործակցության նպատակով պայմանագրեր կնքելու արգելք.

3) նոր իրավաբանական անձ ստեղծելու արգելք.

4) սուբսիդիաներից եւ արտոնյալ պայմաններով տրամադրվող վարկերից օգտվելու արգելք.

5) թույլտվությունները, լիցենզիաները, կոնցեսիաները, արտոնագրերը չեղյալ հայտարարելը կամ հատուկ օրենքով կարգավորվող այլ իրավունքից զրկելը.

6) որոշակի գործունեություն ծավալելու ժամանակավոր կամ մշտական արգելք:

ՀԿՑ տարածաշրջանում առկա սահմանափակումների ցանկն ամբողջական դարձնելու նպատակով Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետությունում առկա տարբերակներին պետք է ավելացվեն հետեւյալ միջոցները՝

1) արդյունավետ, անհրաժեշտ եւ հիմնավորված միջոցների մշակում ու կիրառում (Չեռնոգորիա),<sup>166</sup>

2) իրավաբանական անձի մասնաճյուղի գործունեության դադարեցում (Ռումինիա),<sup>167</sup>

3) իրավաբանական անձի նկատմամբ դատական վերահսկողության իրականացում (Ռումինիա).<sup>168</sup>

4) պետական կամ տեղական բյուջեի շահառուների հետ գործարքներ կատարելու արգելք (Խորվաթիա).<sup>169</sup>

5) իրավաբանական անձին պատկանող արժեթղթերը վաճառելու արգելք (Սլովենիա):<sup>170</sup>

Ձեռնարկատիրական կամ այլ տեսակի որոշակի գործունեություն իրականացնելու արգելքը ՀԿՑ երկրներում ամենայայն տարածում ունեցող պատժամիջոցն է: Այդ յուրաքանչյուր երկրում այդպիսի արգելք սահմանված է այս կամ այն ձեւակերպմամբ՝ բացառությամբ Բուլղարիայի, Էստոնիայի, Ռուսաստանի եւ Ուկրաինայի: Թեեւ կարելի է պնդել, որ որոշակի գործունեություն իրականացնելու արգելքը կարող է նաեւ ներառել ցանկացած ձեւով պետական միջոցներ ներգրավելու կամ լիցենզիաներ ստանալու արգելք, սակայն շատ երկրներում, ինչպես, օրինակ, Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետությունում, այդ սահմանափակումները

սահմանված են որպես առանձին պատժամիջոցներ: Պետական գնումներին մասնակցությունն արգելելու մասին ուղղակիորեն նշված է Լատվիայի եւ Ռումինիայի օրենսդրության մեջ: Պետական աջակցության, վարկերի, սուբսիդիաների եւ այլ օժանդակություն ստանալու համար դիմելու արգելքը սահմանված է Խորվաթիայում եւ Լատվիայում, իսկ Բոսնիա եւ Հերցեգովինայում, Խորվաթիայում, Լատվիայում, Չեռնոգորիայում եւ Սլովենիայում ընկերությունների նկատմամբ կարող է կիրառվել լիցենզիաներ, արտոնագրեր ձեռք բերելու արգելք եւ այլ նմանատիպ արգելքներ:

### **Սահմանափակումների նշանակման պայմանները**

Շատ երկրներում կորպորատիվ իրավունքների սահմանափակումը չի կարող կիրառվել բոլոր դեպքերում, այլ միայն որոշակի հանգամանքներում: Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության օրենսդրության համաձայն, օրինակ, դատարանը կարող է նշանակել մեկ կամ մի քանի լրացուցիչ պատիժ այն դեպքում երբ գտնում է, որ իրավաբանական անձն իր գործունեությունն օգտագործել է անօրինական նպատակներով եւ որ ապագայում առկա է ռեցիդիվի վտանգ:<sup>171</sup> Ավելին, գոյություն ունեն նաեւ հատուկ նախապայմաններ, որոնք պետք է հաշվի առնվեն որոշ լրացուցիչ պատիժներ նշանակելիս: Օրինակ, որոշակի գործունեություն իրականացնելու ժամանակավոր արգելքը կարող է նշանակվել դրամական տուգանքի հետ մեկտեղ, եթե քրեորեն պատժելի արարքը կատարվել է իրավաբանական անձի գործունեության ընթացքում այն դեպքում, երբ ֆիզիկական անձի նկատմամբ կկիրառվեր մինչեւ երեք տարի ժամկետով ազատազրկում, եւ եթե քրեորեն պատժելի արարքը կատարելու ձեւից ենթադրվում է, որ առկա է միեւնույն արարքը կամ նմանատիպ արարք կրկին կատարելու վտանգ: Ժամանակավոր արգելքը կարող է սահմանվել մեկից երեք տարով: Որոշակի գործունեություն իրականացնելու մշտական արգելքը կարող է նշանակվել դրամական տուգանքի հետ մեկտեղ այն դեպքում, երբ կատարվել է քրեորեն պատժելի արարք, որի համար ֆիզիկական անձը կպատժվեր առնվազն երեք տարի ազատազրկմամբ, եւ արարքը կատարելու ձեւից ենթադրվում է, որ իրավաբանական անձը կարող է կրկին կատարել միեւնույն արարքը կամ նմանատիպ արարք, ինչպես այն դեպքում, երբ քրեորեն պատժելի արարքը կատարվել է նախորդ վերջնական դատավճից հետո, որով իրավաբանական անձին ժամանակավորապես արգելվել էր որոշակի գործունեություն իրականացնել: <sup>172</sup>

Խորվաթիայի, Չեռնոգորիայի եւ Սլովենիայի օրենսդրություններում, ինչպես Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետության դեպքում, որոշակի գործունեություն իրականացնելու արգելքի կիրառումը կապվում է կանխարգելիչ կամ ռեցիդիվի կանխման նպատակների հետ:<sup>173</sup> «Իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Խորվաթիայի ակտում նախատեսված է հետեւյալ ձեւակերպումը`

Իրավաբանական անձի նկատմամբ որոշակի գործունեություն իրականացնելու կամ գործարքներ կատարելու արգելք կարող է նշանակվել դատավճի հիման վրա` դատավճիոր վերջնական դառնալուց հետո մեկից երեք տարի ժամկետով, այն դեպքում, երբ

այդուհետ որոշակի գործունեություն իրականացնելը կամ գործարքներ կատարելը կարող է վտանգ ներկայացնել անձանց կյանքի, առողջության կամ անվտանգության համար կամ վտանգավոր լինել գույքի կամ տնտեսության համար կամ երբ իրավաբանական անձն արդեն պատժվել է միեռույն կամ նմանատիպ հանցանքի համար (16-րդ հոդված):

Իրավաբանական անձի նկատմամբ պետական մարմինների կամ տեղական ու տարածքային ինքնակառավարման միավորների կողմից տրամադրվող լիցենզիաներ, արտոնագրեր, կոնցեսիաներ կամ սուբսիդիաներ ստանալու արգելք կարող է նշանակվել այն դեպքում, երբ առկա է վտանգ, որ լիցենզիաներ, արտոնագրեր, կոնցեսիաներ կամ սուբսիդիաներ ստանալը կարող է դրդել մեկ այլ հանցանքի կատարման (17-րդ հոդված):

Իրավաբանական անձի նկատմամբ պետական կամ տեղական բյուջեի շահառուների հետ գործարքներ կատարելու արգելք կարող է նշանակվել այն դեպքում, երբ առկա է վտանգ, որ այդ գործառնությունը կարող է դրդել մեկ այլ հանցանքի կատարման (18-րդ հոդված):

***Սահմանափակումները՝ որպես վարչական պատասխանատվության միջոցներ***

Որոշ երկրներում վերոնշյալ արգելքները քրեական օրենսդրությամբ նախատեսված պատժամիջոցներ չեն, այլ վարչական իրավունքի մաս կազմող ակտերով նախատեսված՝ դատապարտման իրավական հետեւանքներ: Բուլղարիայում, օրինակ, «Պետական գնումների մասին» ակտի համաձայն, յուրաքանչյուր հայտատու պետք է ներկայացնի տեղեկանք, որ դատապարտված չի եղել որոշակի սահմանվածհանցագործությունների, այդ թվում՝ կաշառակերության համար: Օրենքով նաեւ արգելվում է օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձանց մասնակցությունը պետական գնումների գործընթացին, եթե նրանք իրենց ծագման կամ գրանցման պետությունում դատապարտվել են կաշառակերության համար: Ավելին, պատվիրատու մարմնի կողմից հայտերն ուսումնասիրելու, գնահատելու եւ դասակարգելու համար նշանակված մարմինը կարող է ցանկացած ժամանակ ստուգել ներկայացված փաստերը՝ տեղեկություններ պահանջելով այլ հաստատություններից կամ անձանցից: Այն դեպքում, երբ հանձնաժողովը ապացուցում է, որ հայտատուն իր դիմումի փաստաթղթերի մեջ ներկայացրել է կեղծ տեղեկություններ, հայտը կարող է հանվել պետական գնումների գործընթացից:<sup>174</sup> «Պետական գնումների մասին» Էստոնիայի ակտով նույնպես նախատեսվում է, որ պատվիրատու մարմինը պետական պայմանագիր չի շնորհի ֆիզիկական կամ իրավաբանական անձին, եւ ցանկացած հայտատուի կամ թեկնածուի դուրս կթողնի գնումների գործընթացից, եթե նրանք դատապարտված են եղել կաշառակերության կամ նմանատիպ հանցանքների համար, այդ թվում՝ փողերի լվացման եւ հարկային իրավախախտումների համար:<sup>175</sup>

Մանօրինակ կարգավորումներ կարելի է գտնել Լատվիայում, Լիտվայում, Սլովենիայում եւ Ուկրաինայում<sup>176</sup>, ինչը նշանակում է, որ կոռուպցիայի համար դատապարտված իրավաբանական անձանց իրավունքներն այս երկրներում կարող են սահմանափակվել թե՛ քրեական իրավունքով եւ թե՛ վարչական իրավունքով: Լատվիայում իրավական համակարգն առանձնահատուկ կերպով պաշտպանված է: Նախեւառաջ, իրավաբանական անձի նկատմամբ կարող են կիրառվել պատժամիջոցներ՝ իրավունքների սահմանափակմամբ, ինչը Քրեական օրենքի 70<sup>4</sup>-րդ հոդվածի համաձայն, նշանակում է.

Հատուկ իրավունքներից կամ թույլտվություններից զրկելը կամ այնպիսի արգելք սահմանելը, ինչը խոչընդոտում է իրավաբանական անձի՝ որոշակի իրավունքներ իրականացնելը, պետական աջակցություն կամ օժանդակություն ստանալը, պետական կամ տեղական կառավարման մարմինների գնումների գործընթացին մասնակցելը, հատուկ տեսակի գործունեություն իրականացնելը՝ մեկ տարուց ոչ պակաս եւ տասը տարին չգերազանցող ժամկետով:

Ի լրումն վերոգրյալի՝ «Պետական գնումների մասին» Լատվիայի օրենքի 39-րդ հոդվածի համաձայն, գնումներ կազմակերպող կազմակերպությունը բացառում է թեկնածուի կամ հայտատուի հետագա մասնակցությունը գնման ընթացակարգին եւ չի ուսումնասիրում արդեն ներկայացված որեւէ հայտ, եթե թեկնածուն, հայտատուն կամ հայտ ներկայացնելու, որոշում կայացնելու կամ թեկնածուին կամ հայտատուին վերահսկելու համար լիազորված ցանկացած անձ որոշակի հանցանքներ կատարելու համար մեղավոր է ճանաչվել վերջնական եւ պարտադիր ուժ ունեցող որոշմամբ, որը ենթակա չէ բողոքարկման: Մա ներառում է հարկերի վճարումից խուսափելը կամ համարժեք վճարումներից խուսափելը, կոռուպցիան, ֆինանսական բնույթի խարդախությունը, փողերի լվացումը կամ հանցավոր համագործակցությունում մասնակցելը: Մա նշանակում է, որ գնումների հանձնաժողովը կարող է արգելել դատապարտված թեկնածուի մասնակցությունը մրցույթում նույնիսկ այն դեպքերում, երբ քրեական դատարանը թեկնածուի նկատմամբ չի նշանակել իրավունքների սահմանափակման պատժամիջոց:

Վարչական պատժամիջոցներ նշանակելու առավելությունն այն է, որ նման պատժամիջոցները հավասարապես կիրառվում են դատապարտված բոլոր անձանց նկատմամբ. ի հակադրություն սրա՝ քրեական դատավարությունում լրացուցիչ պատժամիջոցների կամ անվտանգության ապահովման միջոցների կիրառումը հայեցողական է եւ, ինչպես վերելում նշվեց, հաճախ կախված է որոշակի պայմանների առկայությունից:

### **5.1.5. Վճռի հրապարակումը**

Մեկ այլ պատժամիջոց, որը լայնորեն կիրառվում է ՀԿՑ երկրներում, դատարանի վճռի հրապարակումն է: Դա գոյություն ունի Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետությունում, Չեռնոգորիայում, Ռումինիայում, Սերբիայում եւ Սլովենիայում, եւ դա կարող է նշանակվել իրավաբանական անձի նկատմամբ կանխարգելիչ նպատակներով:<sup>177</sup> Օրինակ՝ Չեռնոգորիայում

«Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մասին» օրենքի 31-րդ հոդվածով պատժամիջոցը նախատեսվում է հետեւյալ կերպ.

1) Դատարանը հայտարարում է անվտանգության ապահովման միջոցի՝ դատավճռի հրապարակման մասին, եթե նա օգտակար է համարում հանրությանը դատավճռի մասին իրազեկելը, հատկապես, եթե դատավճռի հրապարակումը կնպաստի մարդու կյանքի կամ առողջության համար սպառնալիքի վերացմանը կամ կպաշտպանի առեւտրի կամ ընդհանուր այլ շահի անվտանգությունը:

2) Կախված հանցանքի վերաբերելիությունից եւ հանրությանը տեղեկացնելու անհրաժեշտությունից՝ դատարանն ընտրում է այն լրատվամիջոցը, որը կհրապարակի դատավճիռը եւ որոշում՝ արդյոք դատավճռի պատճառաբանական մասը հրապարակվելու է ամբողջությամբ, թե մի հատվածի տեսքով՝ հաշվի առնելով այն, որ հրապարակման ձեւը պետք է ապահովի տեղեկատվության տրամադրումը բոլոր նրանց, ում շահերից է բխում դատավճռի հրապարակումը:

### **5.1.6. Քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված պատժամիջոցները**

ՀԿՑ ոչ մի երկիր չի ճանաչում քաղաքացիական օրենսդրությամբ սահմանվող տուգանքների համակարգը կամ պատժի տեսքով փոխհատուցման համակարգը, որը կարելի է հանդիպել Միացյալ Նահանգներում: Կոռուպցիայի կամ քրեական այլ արարքների համատեքստում, այնուհանդերձ, քաղաքացիական պատասխանատվությունը ներառում է հանցագործության հետեւանքով հասցված ցանկացած վնասի փոխհատուցման պարտավորությունը: Որպես ընդհանուր կանոն, տուժողի հայցը կարող է քննվել կամ այն քրեական դատարանի կողմից, որը քննում է հանցագործությունը, որի հետեւանքով տուժողը վնաս է կրել, կամ առանձին քաղաքացիական դատավարության կարգով: Թեւեւ բավականին բարդ է չափել կոռուպցիոն արարքի հետեւանքով հասցված նյութական վնասը, ընդհանուր հիմունքներով փոխհատուցման հայց ներկայացնելու հնարավորությունը գոյություն ունի ՀԿՑ բոլոր երկրներում: Ավելին, Չեոնգորիայում «Պարտավորությունների մասին» օրենքում գոյություն ունի հատուկ դրույթ (387-րդ հոդված), որը նախատեսում է կոռուպցիայի պատճառով հասցված վնասների համար հայց:

Բացի դրանից, շատ երկրներում քաղաքացիական դատարանը կարող է կազմալուծել այն իրավաբանական անձը, որի գործունեությունը կամ նպատակները հակասում են օրենքին:

### **5.2. Պատիժ նշանակելու սկզբունքները**

Ինչպես նշվեց վերելում, միջազգային իրավունքը չի մասնավորեցնում, թե ինչ հանգամանքներ պետք է հաշվի առնվեն իրավաբանական անձի նկատմամբ պատիժ նշանակելիս: Այսպես, յուրաքանչյուր երկիր կարող է շեշտն առավելապես դնել հանցագործությանը կամ հանցագործության հեղինակին առնչվող

գործոնների վրա, կամ նրա, թե արդյոք անհրաժեշտ է ստեղծել հատուկ պայմաններ կորպորատիվ հանցագործություն կատարած անձանց համար ընդհանրապես: Ինչ վերաբերում է վերջին հարցին, ապա ՀԿՑ երկրները բաժանվում են երկու կատեգորիայի. դրանց գրեթե կեսն ունի հատուկ պայմաններ՝ իրավաբանական անձանց համար, մինչդեռ մնացածը կիրառում են ի սկզբանե ֆիզիկական անձանց համար մշակված այնպիսի ընդհանուր սկզբունքներ, ինչպիսիք հանցագործության ծանրությունը, հանցագործությունը խոստովանելը, ռեցիդիվը, հանցավոր համագործակցությունն են եւ այլն: Այս ուսումնասիրությունը կենտրոնանում է պատիժ նշանակելու այն սկզբունքների վրա, որոնք հատուկ մշակվել են իրավաբանական անձանց նկատմամբ պատիժ նշանակելու համար:

### **5.2.1. Պատիժ սահմանելու պայմանները**

Իրավաբանական անձի նկատմամբ պատիժ սահմանելու ամենատարածված հատուկ պայմանն այն է, որ պետք է հաշվի առնվի դատապարտվող իրավաբանական անձի տնտեսական հզորությունը: Սա ընդունված է ՀԿՑ շատ երկրների կողմից, եւ դա պետք է ողջամիտ համարվի: Պատիժը պետք է ոչ միայն ունենա բավարար կանխարգելիչ ազդեցություն, այլ նաեւ պետք է լինի արդյունավետ եւ համաչափ: Գործերի ճնշող մեծամասնության դեպքում պատժի նպատակը ոչ թե ընկերության գործունեությունը դադարեցնելն է, այլ վերջինիս վրա ներգործելը, որպեսզի այն իր գործունեությունն իրականացնի օրինականորեն: Այս նպատակին հնարավոր չէ հասնել, եթե ընկերության միջոցների մեծ մասը վերցվում է: Ավելին, դատարանը պետք է հաշվի առնի հնարավոր կողմնակի ազդեցությունները, որոնք կարող են ազդել անմեղ երրորդ կողմերի, մասնավորապես՝ աշխատողների եւ բաժնետերերի վրա:

Տնտեսական հզորությունից բացի՝ ՀԿՑ երկրներում կորպորատիվ պատիժների համար գոյություն ունեն մի շարք այլ պայմաններ: Պատիժ նշանակելու ամենահամապարփակ ուղեցույցները կարելի է գտնել Չեռնոգորիայի օրենսդրության մեջ: Նախեւառաջ, «Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մասին» օրենքի 14-րդ հոդվածը նախատեսում է, որ «տուգանքը սահմանվում է՝ հասցված վնասի կամ ձեռք բերված ապօրինի նյութական օգուտի գումարից կախված, եւ եթե այդ գումարները տարբեր են, ապա տուգանքի չափը որոշելու համար հիմք է ծառայում ավելի մեծ գումարը»: Այս կանոնը լրացվում է 16-րդ հոդվածով, որն, ի դեպ, ընդգրկում է ՀԿՑ երկրներում հանդիպող հատուկ պատժի նշանակման գրեթե բոլոր սկզբունքները: Ամբողջական պատկերն ստանալու համար պետք է միայն ավելացնել նախկինում բարեխիղճ գործունեության դիտարկումը, որը, Ադրբեջանի օրենսդրության համաձայն, մեղմացուցիչ հանգամանք է: 16-րդ հոդվածի 1-ին պարբերությունն ունի հետեւյալ բովանդակությունը.

Դատարանն իրավաբանական անձի նկատմամբ տուգանքը պետք է սահմանի խնդրո առարկա հանցանքի համար օրենքով նախատեսված սահմաններում, մտապահելով պատժի նպատակը եւ հաշվի առնելով բոլոր այն հանգամանքները, որոնք կարող են ազդեցություն ունենալ տուգանքի

նվագեցման կամ ավելացման վրա (մեղմացուցիչ կամ ծանրացուցիչ հանգամանքներ) եւ մասնավորապես՝

1) հանցանքի ծանրությունը՝ ներառյալ ընդհանուր շահերը վտանգելը.

2) կատարված հանցանքի համար իրավաբանական անձի պատասխանատվության չափը.

3) իրավաբանական անձի կազմում առկա պաշտոնները եւ հանցանքը կատարած պատասխանատու անձանց թիվը.

4) այն փաստը, թե արդյոք պատասխանատու անձը նախկինում դատվածություն ունի կամ արդյոք նա խախտել է օրենքը կամ այլ կարգավորում.

5) հանցանքը կատարելու հանգամանքները.

6) իրավաբանական անձի տնտեսական հզորությունը եւ գործարար գործունեության արդյունքները.

7) իրավաբանական անձի՝ նախկինում իրականացրած բիզնես գործառնությունները՝ ներառյալ օրենքների եւ այլ կարգավորումների խախտումները.

8) իրավաբանական անձի վարքագիծը հանցանքը կատարելուց հետո՝ ներառյալ պատշաճ վերահսկողություն չիրականացրած անձանց ազատելը, հանցանք կատարած պատասխանատու անձին կարգապահական պատժի ենթարկելը եւ աշխատանքային հարաբերությունները դադարեցնելը.

9) հանցանքից տուժած անձի հետ հարաբերությունները՝ ներառյալ վնասների փոխհատուցումը եւ հանցանքի կատարման հետեւանքով պատճառված վնասակար այլ հետեւանքների վերացումը, ինչպես նաեւ՝ այն փաստը, թե արդյոք դա կատարվել է քրեական վարույթ հարուցելու հանգամանքը պարզելուց առաջ, թե՛ հետո.

10) Ֆինանսական ծանր վիճակից, դժվարին հանգամանքներից, կարիքից, ոչ բավարար փորձից, անփութությունից կամ տուժողի՝ դատողություններ անելու ոչ բավարար ունակությունից օգտվելը.

11) արդյոք հանցանքի կատարման արդյունքում ստացված նյութական օգուտը վերադարձվել է.

12) արդյոք իրավաբանական անձը ձեռնարկել է հանցանքի կատարումը կանխելուն եւ բացահայտելուն ուղղված բոլոր արդյունավետ, անհրաժեշտ եւ ողջամիտ միջոցները.

13) արդյոք իրավաբանական անձը հայտնել է հանցանքի մասին՝ նախքան քրեական վարույթ հարուցելու հանգամանքը պարզելը, արդյոք նա համագործակցել է բացահայտում եւ հետապնդում իրականացնելու իրավասություններ ունեցող

մարմինների հետ կամ արդյոք նա խոչընդոտել է դատավարության իրականացումը.

14) իրավաբանական անձի վերաբերմունքը կատարված հանցանքին՝ ներառյալ հանցանքը կատարելու մեջ մեղավորությունը խոստովանելը:

Ի լրումն վերոգրյալի՝ 17-րդ հոդվածով սահմանվում է, որ դատարանը պետք է հատուկ ուշադրություն դարձնի այն հանգամանքին, թե արդյոք իրավաբանական անձը նախկինում դատապարտվել է հանցանքի համար, արդյոք նախորդ հանցանքը միեւնույն տեսակի է, ինչ վերջինը եւ ինչքան ժամանակ է անցել նախորդ դատվածությունից: Եթե իրավաբանական անձը հանցանքներ կատարելու համար դատապարտվել է առնվազն երկու անգամ եւ տուգանվել հիսուն հազար եվրոյից ավելի, եւ եթե վերջին տուգանքը վերջնական եւ պարտադիր իրավաբանական ուժ ունեցող կարգով սահմանելուց անցել է հինգ տարուց ոչ ավելի ժամանակ, ապա դատարանը տուգանքը կարող է ավելացնել՝ մինչեւ համապատասխան առավելագույն գումարի կրկնապատիկի չափով (18-րդ հոդված):

Ուկրաինայում, Քրեական օրենսգրքի 96<sup>10</sup>-րդ հոդվածի համաձայն, իրավաբանական անձի նկատմամբ քրեաիրավական բնույթի միջոցներ կիրառելիս դատարանը հաշվի է առնում իրավաբանական անձի լիազորված անձի կողմից կատարված հանցագործության ծանրությունը, հանցավոր մտադրությունն իրականացնելու աստիճանը, հասցված վնասի չափը, այն անհիմն օգուտների բնույթն ու չափը, որն իրավաբանական անձն ստացել է կամ կարող էր ստանալ, եւ հանցագործությունը կանխելու համար իրավաբանական անձի կողմից ձեռնարկված միջոցները:

### **5.2.2. Դատավճռի կատարման կասեցում**

Չեռնոգորիայի օրենսդրությունը նույնպես նախատեսում է դատավճիռների կատարման կասեցման մշակված համակարգ: «Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մասին» օրենքի 24-րդ հոդվածի համաձայն՝ դատարանն իրավաբանական անձի նկատմամբ կարող է նշանակել մինչեւ 100 000 եվրո տուգանք՝ պայմանով, որ դատավճիռը հարկադրաբար չի կատարվի, եթե դատապարտված իրավաբանական անձը պատասխանատվության չի ենթարկվում նոր հանցանքի համար՝ դատարանի կողմից սահմանված փորձաշրջանի ընթացքում, որը չպետք է լինի մեկ տարուց պակաս կամ երեք տարուց ավելի:<sup>178</sup> Դատարանը կարող է նաեւ կարգադրել, որ դատավճիռը կատարվի այն դեպքում, երբ դատապարտված իրավաբանական անձը սահմանված ժամանակահատվածում չի վերադարձնում հանցանքի կատարման արդյունքում ձեռք բերված նյութական օգուտը, չի ապահովում հանցանքի կատարմամբ իր կողմից հասցված վնասի փոխհատուցումը կամ չի կատարում քրեական օրենքի դրույթներով սահմանված այլ պարտավորություններ:

Բացի դրանից, դատարանը կարող է կարգադրել, որ ցանկացած իրավաբանական անձ, որի նկատմամբ դատավճռի կատարումը կասեցվել է, որոշակի ժամանակահատվածով գտնվի պաշտպանական վերահսկողության ներքո, ինչը նշանակում է, որ նա պետք է կատարի հետևյալ պարտավորություններից մեկը կամ մի քանիսը՝

1) մշակել եւ իրականացնել արդյունավետ, անհրաժեշտ եւ ողջամիտ միջոցների ծրագիր՝ նպատակ ունենալով կանխելու հանցանքների կատարումը.

2) սահմանել ներքին հսկողություն՝ նպատակ ունենալով կանխելու հանցանքների հետագա կատարումը.

3) կազմել իր գործունեության գործարար գործառնությունների վերաբերյալ պարբերական հաշվետվություններ եւ դրանք ներկայացնել պաշտպանական վերահսկողություն իրականացնելու համար իրավասություն ունեցող մարմին.

4) վերացնել կամ նվազեցնել կատարված հանցանքի հետեւանքով հետագայում վնաս հասցնելու վտանգը.

5) գերծ մնալ այնպիսի գործարար գործունեությունից, որը կարող է ստեղծել կրկին խախտումներ կատարելու հնարավորություն կամ շարժանիթ.

6) վերացնել կամ մեղմել հանցանքի հետեւանքով հասցված վնասը.

7) կատարել հանրային աշխատանքներ՝ վեց ամիս ժամկետով՝ պայմանով, որ այդ պարտավորությունը չի վտանգի իրավաբանական անձի բնականոն գործունեությունը:<sup>179</sup>

### **5.2.3. Պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հիմքերը**

#### **«Պատշաճ զգուշավորություն» պաշտպանությունը (“due diligence defence”)**

Մեծ թվով բանավեճերի տեղիք տված հարցը վերաբերում է պատշաճ զգուշավորությանը եւ համապատասխանության ապահովմանն ուղղված ջանքերի կարելորությանը կորպորատիվ պատասխանատվության ռեժիմում, որտեղ ավելի ցածր օղակի գործակալի պատճառով կարող է առաջ գալ պատասխանատվություն: Իրավական համակարգերի մեծամասնությունում իրատեսական համապատասխանության ապահովման ծրագրի առկայությունը մեկ այլ գործոն է, որը պետք է կամ առնվազն կարող է հաշվի առնվել իրավաբանական անձի նկատմամբ պատիժ նշանակելիս:<sup>180</sup> Մյուս երկրները, հատկապես նրանք, որոնք հետեւում են կազմակերպական մոտեցմանը, ավելի շատ կարելորում են այն ջանքերը, որոնք ընկերությունը գործադրել է՝ իր աշխատողների կողմից հանցագործությունների կատարումը կանխելու համար: Օրինակ՝ Նիդեռլանդներում, Ավստրալիայում եւ Շվեյցարիայում իրավաբանական անձն ազատվում է պատասխանատվությունից, եթե նախնական քննության կամ դատաքննության ժամանակ հաստատվում է, որ

իրավաբանական անձն ունեցել է համապատասխանության ապահովման բավարար կանոններ եւ մեխանիզմներ, եւ որ նա իր լիազորությունների շրջանակում արել է հնարավոր ամեն բան՝ հանցագործությունը կանխելու համար:<sup>181</sup> «Պատշաճ զգուշավորությունը» որպէս պաշտպանություն, նաեւ գոյություն ունի Ճապոնիայում եւ Կորեայում, բայց այդ երկրներում ընկերության պարտականությունն ապացուցելն է, որ իր կորպորատիվ մշակույթում եւ վերահսկողական գործունեության մեջ թերացումներ չկան:<sup>182</sup> Միացյալ Նահանգների դաշնային դատարանների պրակտիկայում եւս ապացուցման բեռը պետությունից փոխանցվել է մեղադրյալին:<sup>183</sup>

Որոշ հեղինակներ համոզված են, որ համապատասխանության ապահովմանն ուղղված ջանքերի բացակայությունը պատասխանատվության հիմք դարձնելը կամ «պատշաճ զգուշավորություն» պաշտպանությունն առաջարկելը կորպորատիվ պատասխանատվության ռեժիմը դարձնում է ոչ միայն արդար, այլ նաեւ՝ առավել արդյունավետ: Երանք վիճարկում են այն, որ այս մոտեցումը իրախուսում է ընկերություններին՝ համապատասխանության ապահովմանն ուղղված պատշաճ ծրագրեր մշակել եւ որեւէ խախտման դեպքում համագործակցել իշխանությունների հետ:<sup>184</sup> Մյուսներն ավելի թերահավատորեն են վերաբերվում այս մոտեցմանը: Երանք վիճարկում են այն, որ դա կարող է տեղին լինել ճանապարհային պատահարների, բնապահպանական աղետների եւ այլ անզգույշ հանցագործությունների համար, սակայն դա փոքր-ինչ անիրատեսական է բարձր մակարդակի կոռուպցիայի դաշտում: Որեւէ անզգույշ անձ ինքնին կարող է մահվան էլքով պատահարի պատճառ դառնալ, եւ դա կարող է տեղի ունենալ նաեւ այնպիսի ընկերությունում, որը մեծ ուշադրություն է դարձնում անվտանգության կանոններին: Այդուհանդերձ, խիստ անհավանական է, որ ցածր մակարդակի աշխատակիցը հնարավորություն կունենա օգտագործելու ընկերության միլիոնավոր գումարները՝ բարձրաստիճան պետական պաշտոնյային կաշառելու համար, եթե ընկերությունն իրապէս պահպանում է արդար խաղի կանոնները եւ անհանդուրժող է անագնիվ աշխատակիցների նկատմամբ: Երբ մեծ նախագծերի համար վճարվում է զգալի գումար, իրատեսական է ենթադրել, որ կաշառակերությունը դիտվում է որպէս սովորական գործունեություն՝ նույնիսկ կառավարման ամենաբարձր մակարդակով. հետեւաբար, պատասխանատվությունը չպետք է կախված լինի այն հարցից, թե որքան լավ են մշակված ներքին կանոնադրության եւ քաղաքականությանն առնչվող փաստաթղթերը:

Թեւ տեսականորեն վիճարկելի է, սակայն ՏՀԶԿ-ի մարմինները «պատշաճ զգուշավորություն» պաշտպանությունը դիտարկել են որպէս արդյունավետ գործելակերպ եւ նույնիսկ սկսել են խորհուրդ տալ կիրառել այն մեղմ տարբերակով:<sup>185</sup>

Պաշտպանության մոդելի մշակված տարբերակի օրինակ կարելի է հանդիպել Իտալիայում, որտեղ օրենքը նախատեսում է, որ իրավաբանական անձը պատասխանատու չէ այն հանցանքի համար, որը կատարել է ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը կամ նրա ենթակայության կամ վերահսկողության ներքո գտնվող անձինք, եթե ապացուցի, որ նախքան հանցանքը կատարելը՝

1) մարմնի ղեկավարությունն ընդունել է արդյունավետորեն կիրառել է համապատասխան կազմակերպական եւ կառավարման մոդել՝ տեղի ունեցած իրավախախտման նման իրավախախտումները կանխելու համար.

2) մարմինը հիմնել է ինքնավար մի կառույց՝ մոդելը վերահսկելու, իրագործելու եւ արդիականացնելու համար.

3) ինքնավար կառույցը բավարար չափով վերահսկել է մոդելի գործառնությունը, եւ

4) Ֆիզիկական անձ հանդիսացող իրավախախտը կատարել է իրավախախտում՝ խարդախությամբ խուսափելով մոդելի գործառնությունից:<sup>186</sup>

ՀԿՑ-ի երկրների շարքում միայն Չեռնոգորիան է նախատեսում «պատշաճ գգուշավորություն» պաշտպանությունը: «Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ դատարանը կարող է իրավաբանական անձին ազատել պատժից, եթե իրավաբանական անձը ձեռնարկել է հանցանքի կատարումը կանխելուն եւ բացահայտելուն ուղղված բոլոր արդյունավետ, անհրաժեշտ եւ ողջամիտ միջոցները:

### ***Պատժից ազատող այլ հանգամանքներ***

Չեռնոգորիայի օրենքի վերոհիշյալ՝ 23-րդ հոդվածով նախատեսվում են իրավաբանական անձին պատժից ազատելու երկու այլ հիմքեր: Առաջինը, իրավաբանական անձը կարող է խուսափել պատժից, եթե նա բացահայտում է հանցանքը եւ հայտնում դրա մասին՝ նախքան պարզելը, որ քրեական վարույթ է հարուցվել (1-ին պարբերություն): Պատասխանատվությունից ազատելը հնարավոր է նաեւ այն դեպքերում, երբ իրավաբանական անձը կամավոր եւ անմիջապես վերադարձնում է ապօրինի ձեռք բերված նյութական օգուտը կամ վերացնում է պատճառված վնասակար հետեւանքները, կամ տրամադրում է այնպիսի տվյալներ, որոնք Էական նշանակություն ունեն մեկ այլ իրավաբանական անձի պատասխանատվության ենթարկելու համար, որի հետ այն կազմակերպական առումով փոխկապակցված չէ (2-րդ պարբերություն): Այս երկու հիմքերը գոյություն ունեն նաեւ Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետությունում եւ Սլովենիայում, սակայն Սլովենիայում պաշտպանության հարցը բարձրացվում է միայն այն դեպքերում, երբ իրավաբանական անձի պատասխանատվությունը կիրառվում է «վերահսկողության կանոնի բացակայության» հիման վրա: Այլ դեպքերում հանցանքի մասին կամավոր հայտնելը կարող է հանգեցնել պատժի նվազեցմանը: Հանցանքի մասին կամավոր եւ ժամանակին հայտնելը պատժից ազատելու համար հիմք է նաեւ Խորվաթիայում<sup>187</sup> եւ Ռումինիայում:<sup>188</sup>

### **5.3. Դատախազական հայեցողությունը**

Դատախազական հայեցողության կիրառումն է, որը, առնվազն մեղադրյալի տեսանկյունից, ինչ-որ չափով նման է պատժից ազատմանը: Վերջինս գլխավորապես գուգակցվում է ընդհանուր իրավունքի իրավական

ավանդույթի, եւ հատկապէս՝ Միացյալ Նահանգների հետ, որտեղ դատախազության ծառայությունը, ընդհանուր առմամբ, ազատ է որոշելու՝ արդյոք ընթացք տա իրավապահ մարմինների կողմից նախապատրաստված գործին, թե՛ ոչ: Այնուհանդերձ, քաղաքացիական իրավունքի տարբեր երկրներ նույնպէս ստեղծել են «օրինականության սկզբունքի» ամբողջական իրականացումից խուսափելու համար մեխանիզմ, ըստ որի յուրաքանչյուր հանցագործություն պետք է քննվի եւ հիմքերի առկայության դեպքում՝ դրան կատմամբ իրականացվի հետապնդում: Օրինակ՝ Գերմանիայում դատախազներն իրավասու են դադարեցնելու քրեական վարույթը՝ «նպատակահարմարության սկզբունքի» (*Opportunitätprinzip*) հիման վրա, եթե նրանք գտնում են, որ մեղադրյալի մեղքն աննշան բնույթի է, եւ հետապնդում իրականացնելու հանրային շահ չկա:<sup>189</sup> Խորհրդային քրեական իրավունքի սկզբունքների համաձայն, որոնք երկար ժամանակ ազդեցություն են ունեցել ՀԿՑ-ի շատ երկրների իրավական մտածելակերպի վրա, նվազ կարեւորության հանցագործությունը հանցագործությունն չէր՝ չնայած դա պարունակում էր հանցագործության բոլոր հատկանիշները:

### **5.3.1. Դատախազական հայեցողության առկայությունը ՀԿՑ-ի երկրներում**

ՀԿՑ-ի երկրներում գերակայում է պարտադիր հետապնդում իրականացնելու սկզբունքը: Կա միայն չորս երկիր՝ Վրաստանը, Էստոնիան, Ռումինիան եւ Չեռնոգորիան, որտեղ դատախազական հայեցողությունը գործում է զգալի չափով: Վրաստանի օրենսդրությունը, ընդհանուր առմամբ, հետեւում է ընդհանուր իրավունքի ավանդույթին՝ պարզապէս նախատեսելով, որ «քրեական հետապնդում հարուցելու կամ այն դադարեցնելու մասին որոշում կայացնելիս դատախազն օգտվում է այն հայեցողական լիազորություններից, որոնք ուղղորդվում են հանրային շահերով:»<sup>190</sup> Գերմանական օրենսդրությունն օրինակելի մոդել է Էստոնիայի համար: Էստոնիայի Քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի համաձայն՝ եթե քրեական վարույթի առարկան երկրորդ աստիճանի հանցանք է,<sup>191</sup> կասկածյալի մեղքն աննշան բնույթի է եւ հետապնդում իրականացնելու համար չկա որեւէ հանրային շահ, ապա դատախազը կարող է պահանջել, որ դատարանը դադարեցնի քրեական վարույթը: Դատավորի կողմից հաստատում անհրաժեշտ չէ, եթե քրեական վարույթի առարկան այնպիսի հանցանք է, որի համար օրենքով չի նախատեսվում ազատազրկման նվազագույն ժամկետ կամ սահմանվում է միայն դրամական բնույթի պատիժ (տուգանք): Երկու դեպքում էլ կասկածյալը պետք է համաձայնվի կայացված որոշման հետ, հատուցի հանցագործության հետեւանքով հասցված վնասը եւ վճարի քննության ծախսերը: Ավելին, դատարանը կամ դատախազը կարող է պարտավորեցնել կասկածյալին՝ վերջինիս համաձայնությամբ, պետական բյուջե վճարել սահմանված գումարը կամ այն օգտագործել հատուկ նպատակներով՝ հօգուտ հանրության շահերի:

Դատախազական հայեցողությունն Էստոնիայի քրեական դատավարությունում ունի դրսեւորման եւս երկու ձեւ: Առաջինը, Քրեական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի համաձայն՝ եթե քրեական

վարույթի առարկան երկրորդ աստիճանի հանցանք է, ապա դատախազը կարող է պահանջել քրեական վարույթի դադարեցում դատարանի կողմից՝ կասկածյալի եւ տուժողի համաձայնությամբ, այն դեպքերում, երբ հնարավոր պատիժը կարող է լինել աննշան՝ այն պատժի համեմատությամբ, որը նշանակվել է կամ ենթադրաբար կնշանակվի կասկածյալի նկատմամբ մեկ այլ հանցանքի համար: Սա հատուկ կանոն է բազմակի ռեցիդիվի համար, որը, կարճ ասած, թույլ կտար անտեսել գողության դեպքը, երբ քննվում է սպանության գործ: Երկրորդ կանոնը վերաբերում է համագործակցող կասկածյալներին եւ նպատակ ունի հեշտացնելու պետության գործողությունները՝ կազմակերպված հանցավորության եւ լատենտային (քողարկված) բնույթ ունեցող ծանր հանցավորության այլ ձեւերի դեմ պայքարում: 205-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային դատախազությունն ունի ամբողջական հայեցողություն՝ այն կասկածյալի նկատմամբ քրեական վարույթը դադարեցնելու համար, որը զգալիորեն նպաստել է կարելու գործի քննությանը, որի դեպքում հանցանքի բացահայտումն ու ապացույցներ ձեռք բերելը կխոչընդոտվեր կամ առանձնահատուկ կերպով կբարդանար:

Ռումինիայի Քրեական դատավարության նոր օրենսգրքով եւս նախատեսվում է դատախազական հայեցողություն, որը կիրառելի է՝ անկախ նրանից՝ կասկածյալը ֆիզիկական անձ է, թե՛ իրավաբանական անձ: Քրեական դատավարության օրենսգրքի 318-րդ հոդվածով դատախազին տրվում է քննությունն ընդհատելու կամ քրեական գործողությունն ավարտելու հնարավորություն, եթե հանցանքի համար օրենքով սահմանվում է պատժամիջոց՝ 7 տարին չգերազանցող ժամկետով ազատազրկում կամ տուգանք, եթե չկա գործի հանգամանքների վրա հիմնված՝ գործին ընթացք տալու համար հանրային շահ, հանցանք կատարած անձի նպատակ եւ կատարած հանցանքի հետեւանքներ: Դատախազը կարող է նաեւ մեղադրյալի համար սահմանել այլընտրանքային պարտավորություններ:

Ի հակադրություն Էստոնիայի եւ Ռումինիայի, որտեղ նման հայեցողական լիազորություններն առաջանում են միայն այն դեպքում, երբ քրեական քննությունն սկսվել է եւ որոշ չափով իրականացվել, Չեռնոգորիայի օրենսդրությամբ նախատեսվում է հայեցողություն կիրառելու հնարավորություն նաեւ քրեական վարույթ հարուցելու ժամանակ: «Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մասին» օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ ազգային դատախազը կարող է կայացնել իրավաբանական անձի դեմ քրեական վարույթ չհարուցելու մասին որոշում, եթե՝

1) գործի հանգամանքները ցույց են տալիս, որ վարույթ հարուցելը նպատակահարմար չէ այն պատճառով, որ իրավաբանական անձը ոչ զգալի չափով է ներդրում ունեցել հանցանքի կատարման մեջ.

2) իրավաբանական անձը չունի հիմնական միջոցներ կամ իրավաբանական անձի դեմ հարուցվել է սնանկության գործով վարույթ, կամ

3) առկա են հիմքեր, որոնցով իրավաբանական անձը կազատվի պատժից (տե՛ս վերոնշյալ 5.2.2 բաժինը) կամ կնվազեցվի տուգանքի չափը՝ 16-րդ հոդվածի 1-ին պարբերության 11-14-րդ կետերի համաձայն (տե՛ս վերոնշյալ 5.2.1 բաժինը):

Այս հայեցողական լիազորությունները կիրառելի են այնպիսի հանցանքների դեպքում, որոնց համար սահմանված է պատիժ՝ տուգանքի տեսքով կամ մինչև երեք տարի ժամկետով ազատազրկմամբ: Վարույթի հետագա փուլում ազգային դատախազը կարող է որոշել՝ հետաձգել հետապնդումը այն հանցանքների վերաբերյալ, որոնց համար սահմանված է պատիժ՝ տուգանքի տեսքով կամ ութ տարին չգերազանցող ժամկետով ազատազրկմամբ, եթե նա գտնում է, որ նպատակահարմար չէ իրականացնել քրեական վարույթ՝ հաշվի առնելով հանցանքի բնույթը, հանցանքի կատարման հանգամանքները, եւ իրավաբանական անձի՝ նախկինում իրականացրած գործունեությունը, եթե իրավաբանական անձը համաձայն է որոշակի պարտավորություններ կատարել: <sup>192</sup>

Ի լրումն այդ բավականին ընդգրկուն մոդելների՝ դատախազական հայեցողությունն ավելի սահմանափակ չափով առկա է Խորվաթիայում, Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետությունում եւ Սլովենիայում: Դատախազներն այս պետություններում կարող են որոշել չհետապնդել այն իրավաբանական անձին, որը չունի գույք կամ նրա ունեցած գույքն այնքան չնչին է, որ չի բավականացնի վարույթի հետ կապված ծախսերը ծածկելու համար, կամ որովհետեւ այդ իրավաբանական անձի նկատմամբ հարուցվել է սնանկության գործով վարույթ: <sup>193</sup> Բացի դրանից, Սլովենիայում ազգային դատախազը կարող է որոշել իրավաբանական անձի դեմ քրեական վարույթի հարուցում չպահանջել, եթե գործի հանգամանքներից երևում է, որ դա նպատակահարմար չէ՝ հանցանքին իրավաբանական անձի ունեցած մասնակցության ոչ զգալի լինելու պատճառով, կամ որովհետեւ հանցանք կատարած անձն այն իրավաբանական անձի միակ սեփականատերն է, որի դեմ անհրաժեշտ է վարույթ հարուցել:

### **5.3.2. Առավելություններն ու ռիսկերը**

Դատախազական հայեցողությունն ունի իր առավելություններն ու ռիսկերը: Մի կողմից, դա դատախազներին տալիս է հնարավորություն՝ վերահսկելու իրենց գործերի թիվը եւ ապահովելու, որ անհրաժեշտ ռեսուրսներն առկա են ավելի կարելու գործերի համար: Ավելին, դա նաեւ հնարավորություն է տալիս որոշելու կոնկրետ գործի ծավալը: Կոռուպցիային առնչվող խոշոր գործերում կարող է խելամիտ լինել կամ որոշ դեպքերում նույնիսկ անհրաժեշտ՝ բաց թողնել «փոքր ձկանը», եւ ուշադրությունը սեւեռել գլխավոր հանցագործին՝ անկախ նրանից, թե դա կոռուպացված պաշտոնյաների մի խումբ պահող ընկերություն է, թե՛ տեղական բիզնեսն աշխատեցնող ազդեցիկ պաշտոն գրադեցնող անձ: Հիպոկրատի գործում, օրինակ, Խորվաթիայի իշխանությունները հաստատեցին, որ դեղագործական ընկերությունն ամբողջ երկրում կաշառել էր 337 բժիշկների եւ դեղագետների: (Տե՛ս վերոհիշյալ 2.3.1 բաժնի 1-ին մասը): Նման գործը պետք է ինչ-որ կերպ բաժանվի նախքան դատաքննությունը՝ ողջամիտ ժամկետում վերջնական դատավճիռ կայացնելու նպատակով, եւ հնարավորություններից մեկն էլ դա հայեցողական լիազորությունների միջոցով անելն է:

Մյուս կողմից, քանի որ դատախազի համար շատ ավելի հեշտ է

դադարեցնել գործը, քան այն ուղարկել դատարան՝ ամբողջ ծավալով դատաքննություն իրականացնելու համար, միշտ վտանգ կա, որ հայեցողական լիազորությունները չափից ավելի կօգտագործվեն կամ կչարաշահվեն: Խոսքը ոչ միայն աշխատանքային ծանրաբեռնվածության մասին է, այլ նաև (միգուցե նույնիսկ հիմնականում) վախի, որ գործը կարող է տապալվել դատարանում, ինչից էլնելով դատախազները հակված են բարդ գործերի ժամանակ տրվել գումարը վերցնելու գայթակղությանը եւ բաց թողնել մեղադրյալին: Քանի որ կոռուպցիային առնչվող գործերում սովորաբար շատ ապացույցներ չեն լինում, հնարավոր չէ որեւէ բան անել, եթե դատախազը հայտնվի այնպիսի իրավիճակում, ինչպիսին ասացվածքի մեջ է. «Ո՞րն է ավելի լավ՝ ճնճող կը ձեռքերիդ մե՞ջ, թե՞ աղավնին՝ տանիքին»: Ցավոք, դատախազները մեկուսացած կյանք չեն վարում. նրանք ստիպված են հաշվի առնել, թե ինչ կասեն կողքից դիտող մարդիկ, քաղաքական գործիչները, նաև լրատվամիջոցները, եթե նրանք ի վերջո չսահեն գործն այն գործարքը մերժելուց հետո, որը մեծ գումարներ կրեր:

Տարիներ առաջ Էստոնիայում մի գործ կար, որով անշարժ գույքի կառուցմամբ զբաղվող մեծ ընկերության սեփականատերն ու ղեկավարները կասկածվում էին խոշոր հարկերի վճարումից խուսափելու մեջ: Երբ քննությունը մոտենում էր իր ավարտին, ընկերության սեփականատերը նպատակահարմարության սկզբունքի հիմքով պահանջեց դադարեցնել գործը եւ խոստացավ վճարել բոլոր հարկերն ու տոկոսները: Բացի դրանից, որպես դրամական տուգանք՝ ընկերությունն առաջարկեց 50 միլիոն Էստոնական կրոն (մոտավորապես 3 միլիոն եվրո), որն այդ ժամանակ հավասար էր դատախազության ամբողջ ծառայության տարեկան բյուջեի մեկ երրորդին: Այնուամենայնիվ, Ազգային դատախազությունը մերժեց առաջարկը, որովհետև այն չցանկացավ, որպեսզի գործարար համայնքը եզրակացնի, որ կարելի է խուսափել քրեական պատասխանատվությունից՝ պարզապես համապատասխան գումարը վճարելով: Երեք տարի տեւած դատաքննությունից հետո դատարանը, դատախազության համաձայնությամբ, փակեց գործը եւ մեղադրյալների նկատմամբ նշանակեց ընդամենը 4 միլիոն կրոնի դրամական տուգանք: Միայն հաշվարկի համար դատախազությունն ստիպված էր հանդուրժել մեծաթիվ քննադատություններ:

## **Ծանոթագրություններ**

1. Արեւելյան Եվրոպայում եւ Կենտրոնական Ասիայում կոռուպցիայի դեմ պայքարելու համար քաղաքական կամքի ամրապնդման» վերաբերյալ բարձր մակարդակի հանդիպման ժամանակ ընդունված՝ ՀԿՑ հայտարարություն (2012 թվականի դեկտեմբերի 10): Տեղադրված է [www.oecd.org/corruption/acn/HighLevelMeetingDecemberStatementENG.pdf](http://www.oecd.org/corruption/acn/HighLevelMeetingDecemberStatementENG.pdf) կայքում:
2. 2013-2015 թվականների՝ ՀԿՑ աշխատանքային ծրագիր (ընդունված՝

ՀԿՑ ղեկավարող խմբի կողմից 2012 թվականի դեկտեմբերի 11-ին):  
Տեղադրված է [www.oecd.org/corruption/acn/ACNWorkProgramme2013-2015\\_EN.pdf](http://www.oecd.org/corruption/acn/ACNWorkProgramme2013-2015_EN.pdf) կայքում:

3. Եվրոպական համայնքների ֆինանսական շահերի պաշտպանության մասին ԵՄ կոնվենցիայի երկրորդ արձանագրություն՝ Եվրոպական համայնքների՝ 1997 թվականի հունիսի 19-ի C 221 պաշտոնական տեղեկագրում:
4. Միջազգային գործարար գործարքներում օտարերկրյա հանրային պաշտոնատար անձանց կաշառելու դեմ պայքարի՝ ՏՀԶԿ-ի կոնվենցիա, 1997 թվականի դեկտեմբերի 17, 2802 U.N.T.S. I-49274:
5. Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիա, 1999 թվականի հունվարի 27, E. T. S. թիվ 173:
6. Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա, 2003 թվականի հոկտեմբերի 31, U.N. Doc A/58/422:
7. Դոկտրինի տեսական հիմքերը մանրամասն ուսումնասիրված են Ջեյմս Գոլդշմիդտի եւ Էրիկ Վուլֆի աշխատություններում:
8. Ընդհանուր իրավունքի համակարգերում տարբերակվում են «իրական» հանցանքները եւ «ուղղակի պատասխանատվություն» նախատեսող հանցանքները, որոնց դեպքում չի պահանջվում դիտավորության տարր (դիտավորություն [mens rea]): Ուղղակի պատասխանատվություն նախատեսող գրեթե բոլոր հանցանքները սահմանվել են ստատուտային իրավունքով, հետեւաբար հայտնի են որպես ստատուտային իրավունքով նախատեսված հանցանքներ: Այդպիսի հանցանքի համար դատապարտելու նպատակով մեղադրող կողմից միայն պահանջվում է ապացուցել այն, որ մեղադրյալը կատարել է ստատուտային իրավունքով արգելված արարք, կամ չի կատարել ստատուտային իրավունքով նախատեսված պարտականությունը:
9. Նիդեռլանդներում կորպորացիաների նկատմամբ կիրառվող քրեական պատասխանատվությունն առաջին անգամ ընդգրկվել է «Տնտեսական իրավախախտումների մասին» ակտում (Wet economische delicten), սակայն 1976 թվականին այն ընդունվել է Քրեական օրենսգրքում որպես ընդհանուր կանոն:
10. Տաջիկստանում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսվում է, որ իրավաբանական անձինք կարող են պատասխանատվության ենթարկվել հանցանքների համար (Հոդված 31, Գլուխ 38): Այնուամենայնիվ, սա չի վերաբերում կաշառակերությանը կամ կոռուպցիոն այլ իրավախախտումների:
11. Բուլղարիայի «Վարչական իրավախախտումների եւ պատժամիջոցների մասին» օրենքի 83ա հոդվածի 1-ին պարբերություն:
12. Բուլղարիայի «Վարչական իրավախախտումների եւ պատժամիջոցների մասին» օրենքի 83բ հոդվածի 1-ին պարբերություն:
13. Տե՛ս ԿԱԽ-ի՝ Ռուսաստանի Դաշնությունում Կաշառակերության դեմ պայքարի ՏՀԶԿ-ի կոնվենցիայի իրականացման 2-րդ փուլի զեկույցը (2013 թվականի հոկտեմբեր) («Ռուսաստանի վերաբերյալ ԿԱԽ-ի 2-րդ փուլի զեկույց»), 75-76-րդ էջեր:

14. Տե՛ս Ռուսաստանի վերաբերյալ ԿԱԽ-ի 2-րդ փուլի զեկույցը, 79-80-րդ էջեր:
15. Տե՛ս Լատվիայի Քրեական օրենքի VIII<sup>1</sup> գլխի 701-րդ հոդվածը: Հարկ է նշել, որ 2013 թվականին օրենքն էականորեն փոփոխվել է: Նախկինում Ֆիզիկական անձ հանդիսացող՝ հանցանք կատարած անձին դատապարտելը նախապայման էր՝ իրավաբանական անձի նկատմամբ պատասխանատվություն կիրառելու համար:
16. Տե՛ս ԿԱԽ-ի՝ Լատվիայում Կաշառակերության դեմ պայքարի ՏՀԶԿ-ի կոնվենցիայի իրականացման 1-ին փուլի զեկույցը (2014 թվականի հունիս) («Լատվիայի վերաբերյալ ԿԱԽ-ի 1-ին փուլի զեկույց»), 37-րդ պարբերություն, 11-րդ էջ:
17. Տե՛ս Ադրբեջանի Քրեական օրենսգրքի 15-2-րդ գլուխը, տե՛ս նաև ՀԿՑ-ի՝ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի՝ Ադրբեջանի վերաբերյալ մոնիթորինգի երրորդ փուլի մոնիթորինգի զեկույցը (2013 թվականի սեպտեմբեր) («Ադրբեջանի վերաբերյալ ՄԳԾ-ի 3-րդ փուլի զեկույց»), 30-րդ էջ:
18. Ադրբեջանում իրավաբանական անձինք հանցանքների համար դեռևս գործնականում պատասխանատվության չեն ենթարկվել, քանի որ Քրեական օրենքի դրույթները դեռևս համաձայնեցված չեն Քրեական դատավարության օրենքի դրույթների: Իրավաբանական անձանց նկատմամբ քրեաիրավական միջոցների կիրառման կանոնների նախագիծն այժմ գտնվում է մշակման փուլում:
19. Սույն զեկույցում «Մակեդոնիայի ՆՀՀ» նշանակում է Մակեդոնիայի Նախկին Հարավսլավական Հանրապետություն: [*Նշումը վերաբերում է միայն անգլերեն փաստաթղթին*]
